



ՖՐՈՆՏԵՔՍ

Եվրոպական միության անդամ
պետությունների արտաքին սահմաններին
օպերատիվ համագործակցության
կառավարման հարցերով Եվրոպական
գործակալություն

Պլաց Եվրոպեյսկի 6
00 – 844 Վարշավա, Լեհաստան

Հեռ.՝ +48 22 205 95 00
Ֆաքս՝ +48 22 205 95 01

frontex@frontex.europa.eu
www.frontex.europa.eu

**Թրաֆիքինգի դեմ պայքարի
վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների
համար
Վերապատրաստողի ձեռնարկ**

**Թրաֆիքինգի դեմ
պայքարի վերաբերյալ
վերապատրաստման
դասընթաց
սահմանապահների համար**
Վերապատրաստողի ձեռնարկ





Ֆրոնտեքսը, ծրագրային մյուս գործընկերների՝ ՀՄԿ, ՄՄԿ և ՄՔՄՄԿ հետ համատեղ իրականացնում է ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող Արևելյան գործընկերության Սահմանների համալիր կառավարում. կարողությունների հպորացում ծրագիրը: Ծրագրի շահառուներն են Ադրբեջանի, Բելառուսի, Հայաստանի, Մոլդովայի Վրաստանի և Ուկրաինայի սահմանային և մաքսային մարմինները: Ծրագիրն սկսվել է 2014թ. և ավարտվելու է 2018թ. դեկտեմբերի 31-ին:

Ծրագրի հիմնական նպատակն է նպաստել տարածաշրջանում մարդկանց և ապրանքների տեղաշարժին՝ միևնույն ժամանակ պահպանելով սահմանների անվտանգությունը՝ միջ-գերատեսչական և միջազգային համագործակցության ընդլայնման միջոցով: Անհրաժեշտ ուղադրություն կհատկացվի կոռուպցիայի դեմ պայքարի և մարդու իրավունքների պաշտպանության հարցերին:

Այս փաստաթուղթը թարգմանվել է անգլերենից և հրատարակվել է տեղեկատվական և աշխատանքային նպատակներով ԵՄ կողմից ֆինանսավորվող և Ֆրոնտեքսի կողմից կառավարվող ու համակարգվող «Արևելյան գործընկերություն. սահմանների համալիր կառավարում. կարողությունների զարգացում» ծրագրի շրջանակներում: Սույն փաստաթուղթը չի հանդիսանում պաշտոնական թարգմանություն: ՖՐՈՆՏԵՔՍ-ը չի կրում որևէ պատասխանատվություն թարգմանության մեջ առկա անճշտությունների համար:

Անգլերեն լեզվով բնօրինակ տեքստի և հայերեն լեզվով թարգմանության միջև եղած որևէ տարբերության և անհամապատասխանության դեպքում, նախապատվությունը տրվում է անգլերեն տեքստին:

Frontex, in cooperation with its project partners WCO, IOM and ICMPD, is implementing the EU-funded Eastern Partnership IBM Capacity Building Project. The beneficiary institutions of the project are border and customs authorities of Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine. The project started in the year 2014 and will finish on 31 December 2018.

The main aim of the project is to facilitate movements of persons and goods in the region, while at the same time maintaining secure borders through the enhancement of inter-agency and international cooperation. The fight against corruption and the respect for human rights will be given the necessary attention.

This document has been translated from English and printed for information and working purposes in the framework of the EU funded project entitled “Eastern Partnership Integrated Border Management Capacity Building Project” led and coordinated by Frontex.

This document is not to be taken as an official translation. Frontex bears no responsibility for any inaccuracies in the translation.

In case of any difference or discrepancy between the English language original text and the Armenian language translation, the English text shall prevail.

© Ֆրոնտեքս, 2012թ.

ԼՈՒՍԱՆԱԿԱՐՆԵՐԻ ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Շապիկին՝ Valentin Casarsa / istockphoto

Էջ 16՝ Arto / fotolia

Էջ 52՝ aprott / istockphoto

Էջ 76՝ focusphoto / fotolia

Բովանդակություն

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ.....	5
ՆԱԽԱԲԱՆ.....	7
ԵՐԱՆՏԻՔԻ ԽՈՍՔ	8
ՀԱՄԱՏԵՂ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	10
ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	12
ՍՈՂՈՒՆ 1. ԻՐԱԶԵԿՈՒՄ	18
Ուսումնական արդյունքները	19
Ուսումնական պլան.....	20
Վերապատրաստման նյութերը.....	21
Ներածություն. վերապատրաստման բազային նյութեր.....	21
Իրավական շրջանակ.....	25
Մարդկանց թրաֆիքինգի երեք փուլերը.....	38
Թրաֆիքինգի եվ մաքսանենգ ճանապարհով տեղափոխման տարբերությունը.....	44
Մարդկանց թրաֆիքինգի աշխարհագրությունը.....	47
Երեխաների թրաֆիքինգ. ներածություն.....	49
Համագործակցություն.....	64
Մարդու թրաֆիքինգի վերաբերյալ առասպելներ.....	67
ՍՈՂՈՒՆ 2. ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ.....	70
Ուսումնական արդյունքները.....	71
Ուսումնական պլան.....	72
Վերապատրաստման նյութերը.....	74
Ներածություն.....	74
Հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները.....	78
ՄԹ-ի բացահայտում. ցուցիչներ.....	84
Առանցքային հարցերը.....	85



Թրաֆիքինգի երեխա զոհերի (պոտենցիալ զոհերի) բացահայտումը.....	92
Սահմանային վերահսկողության երկրորդ օղակ ուղղորդելը.....	96
ՄՈԴՈՒԼ 3. ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՈՒՄ.....	100
Ուսումնական արդյունքները.....	101
Ուսումնական պլան.....	102
Վերապատրաստման նյութեր.....	104
Ներածություն.....	104
Հիմնավորում.....	105
Հարցազրույցը.....	115
Յոթ քայլի մոդել՝ «Պեզաս».....	122
Երեխաների հետ հարցազրույց անցկացնելը.....	126
Հավաքված տեղեկությունների հետ կապված հետագա գործողությունները.....	132
Ուղղորդում. օգնություն, աջակցություն եվ պաշտպանություն՝ 2011/36/ԵՄ հրահանգի համաձայն....	138
Վարժություն, գնահատում.....	142
ԲԱՌԱՐԱՆ.....	144

Հապավումներ

ԱԱՊՏՀ	Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համայնք
ԱՄԿ	Աշխատանքի միջազգային կազմակերպություն
ԵԱՀԿ	Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
ԵԱՎՄԾ	Երեխայի աշխատանքի վերացմանն ուղղված միջազգային ծրագիր
ԵԻԿ	«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա
ԵՄ	Եվրոպական միություն
ԵՄՑ	Եվրոպական միգրացիոն ցանց
Եվրոպոլ	Եվրոպական ոստիկանական գրասենյակ
Եվրոքասոք	Եվրոպական միության Դատական համագործակցության գործակալություն
ԹԶ	Թրաֆիքինգի զոհ
ԺՀՄԻԳ	ԵԱՀԿ ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ
Ինտերպոլ	Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպություն
Լա Ստրադա	Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի եվրոպական ցանց
ԿԽՎԿ	«Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա
ՀԻԳ	Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալություն
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՏՄԽ	Հետտրավմատիկ սթրեսային խանգարում
ՄԱԹՀՊԳ	ՄԱԿ-ի Թմրամիջոցների և հանցավորության դեմ պայքարի գրասենյակ
ՄԱԹՊԳՆ	ՄԱԿ-ի Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գլոբալ նախաձեռնություն



ՄԱԿ ԱԿՀԿ	«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա և դրան կից արձանագրություններ
ՄԱԿ ՓԳՀ	Միավորված ազգերի կազմակերպության Փախստականների հարցերով գերագույն հանձնակատարի գրասենյակ
ՄԹ	Մարդկանց թրաֆիքինգ
ՄԻԱՎ	Մարդու իմունային անբավարարության վիրուս
ՄԻԳՀԳ	Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի գրասենյակ
ՄՄԿ	Միգրացիայի միջազգային կազմակերպություն
ՄՔԶՄԿ	Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոն
ՅՈՒՆԵՍԿՕ	Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպություն
ՅՈՒՆԻՍԵՖ	Միավորված ազգերի կազմակերպության մանկական հիմնադրամ
ՆՏԱ	Ներքին տեղահանված անձ
ՇՀԵ	Շենգենյան համաձայնագրին միացած երկիր
ՈԵՔ	Ոստիկանության եվրոպական քոլեջ
ՌՎՄԻՄ	Ռիսկերի վերլուծության միասնական ինտեգրացված մոդել
ՍՃՓՀ	Սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդություն
ՈՒԱՄ	Ուղղորդման ազգային մեխանիզմ
Ֆրոնտեքս	Եվրոպական միության անդամ պետությունների արտաքին սահմաններին գործառնական համագործակցության կառավարման եվրոպական գործակալություն
ECPAT	Վերացնել երեխաների մարմնավաճառությունը, մանկական պոռնոգրաֆիան և սեռական շահագործման նպատակով երեխաների թրաֆիքինգը
VITA	Զոհին թարգմանչական աջակցություն տրամադրելու գործիք

Նախաբան

Հարգելի ընթերցող,

Մարդկանց թրաֆիքինգը մարդկային արժանապատվության դեմ ամենասարսափելի հանցագործություններից և մարդու իրավունքների ամենակոպիտ խախտումներից մեկն է: Մարդը թրաֆիքինգի կարող է ենթարկվել որևէ մի երկրի ներսում կամ երկրից երկիր տեղափոխվելով: Իր հերթին, սահմանային վերահսկողությունը՝ իր համակարգային ստուգումներով, բացառիկ դեր ունի և կարող է միջամտել մարդկանց թրաֆիքինգին, կանխարգելել այն և պայքարել դրա դեմ:

ԵՄ անդամ պետությունները պարտավորություն ունեն ստեղծելու մարդկանց թրաֆիքինգի գոհերի վաղ հայտնաբերման, նրանց օժանդակման և աջակցման պատշաճ մեխանիզմներ: Հանձնարարելի է, որ անդամ պետություններն այս առաջադրանքը կատարեն համապատասխան աջակցող կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Քանի որ սահմանային վերահսկողությունը կարող է որոշիչ դեր ունենալ թրաֆիքինգի պոտենցիալ և իրական գոհերի հայտնաբերման հարցում, Ֆրոնտեքսի նպատակն է սույն ձեռնարկով անդամ պետություններին աջակցել այս բարդ առաջադրանքը կատարելու հարցում¹:

Մարդկանց թրաֆիքինգն արդյունավետորեն կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար սահմանապահը պետք է ունենա մի շարք հատուկ հմտություններ: Ողջունում են անդամ պետությունների և միջազգային կազմակերպությունների փորձագետների ու գործող մասնագետների կողմից վերապատրաստողների համար մշակված սույն ձեռնարկի հրատարակումը: Այն նպատակ ունի օգնելու ազգային վերապատրաստողներին, որ սահմանապահներին զինեն մարդկանց թրաֆիքինգի դեմ արդյունավետորեն պայքարելու համար անհրաժեշտ հատուկ հմտություններով: Վերապատրաստման դասընթացները պետք է սահմանապահներին տրամադրեն գործնական ցուցումներ՝ հարմարեցված նրանց աշխատանքի շրջանակին և ուղղված մարդկանց թրաֆիքինգի մասին իրազեկմանը, ինչպես նաև պոտենցիալ գոհերի ու իրավախախտների հայտնաբերմանն ու նրանց հետ հարցազրույցների անցկացմանը:

Տուժողի (գոհի) հիմնարար իրավունքները միշտ սահմանապահի ուշադրության կենտրոնում են, և հատուկ ուշադրություն է դարձվում ամենախոցելի խմբերին: Սույն ձեռնարկը բացառություն չէ, քանի որ դրա ուշադրության առանցքում են գոհի իրավունքները, և յուրաքանչյուր մոդուլ ունի երեխաներին անդրադարձող առանձին բաժին:

Հուսով են՝ այս ձեռնարկը կօգնի ձեզ մարդկանց թրաֆիքինգի հանցագործության դեմ ուղղված ձեր շարունակական ջանքերում:

Իլկա Լայտինեն
Ֆրոնտեքսի գործադիր տնօրեն

¹ 2011/36/ԵՄ հրահանգի հոդված 11(4):



Երախտիքի խոսք

«Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման դասընթաց սահմանապահների համար. վերապատրաստողի ձեռնարկ»-ը Ֆրոնտեքսի Վերապատրաստման բաժնի կողմից մշակվել է ԵՄ անդամ 12 պետությունների և Շենգենյան համաձայնագրին միացած մեկ երկրի (Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Ֆրանսիա, Լատվիա, Նիդերլանդներ, Նորվեգիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա և Միացյալ Թագավորություն), ինչպես նաև ՈԵԲ-ի ու Եվրոջապի փորձագետներից կազմված բազմամասնագիտական խմբի ակտիվ մասնակցությամբ: Ձեռնարկի մշակմանը մասնակցել են նաև միջազգային ՄՄԿ, ՄԻԳՀԳ, ԵԱՀԿ, ՄԱԿ ՓԳՀ և ՅՈՒՆԻՍԵֆ կազմակերպությունները՝ ապահովելու դրանում միջազգային չափանիշների ու մարդու իրավունքների հիման վրա մոտեցման արտացոլումը:

Կցանկանայինք շնորհակալություն հայտնել ստորև նշված բոլոր անձանց, որոնք իրենց նպաստն են բերել ձեռնարկի ստեղծմանը, դրա մշակման գործում ներգրավվածության, ինչպես նաև իրենց արժեքավոր մեկնաբանությունների, դիտարկումների և աջակցության համար:

Մեր խորին երախտապարտությունն ենք հայտնում Ֆրոնտեքսի՝ Չեզենա (Իտալիա), Լուբան (Լեհաստան), Տրախսկիրչեն (Ավստրիա) և Լիոն (Ֆրանսիա) քաղաքներում գտնվող գործընկեր ակադեմիաներին՝ աշխատառողովների և հանդիպումների ժամանակ իրենց արժեքավոր աջակցության համար:

Ձեռնարկի պատրաստմանը մասնակցել են.

ԵՄ անդամ պետություններ և Շենգենյան համաձայնագրին միացած երկրներ

Դիրկ Կալեմին	Բելգիա
Սվետլոզար Մարկով	Բուլղարիա
Ստելյա Կաուլի	Կիպրոս
Ջերեմիե Բեսիեր	Ֆրանսիա
Մաքս Պերնե	Ֆրանսիա
Օլիվիե Կոին	Ֆրանսիա
Դմիտրիյա Սմոռոդինս	Լատվիա
Գերտ Բույստ	Նիդերլանդներ
Անետ Բրևիկ	Նորվեգիա
Ջուլի Պլատու Կվամեն	Նորվեգիա
Կարոլինա Կաբաչինսկա	Լեհաստան
Կոսմին Ֆլորոյու	Ռումինիա
Մարտինա Մատուշկովիչովա	Սլովակիա
Ստոյան Բելսակ	Սլովենիա
Էլկե Շրոդեր	Շվեդիա
Ամանդա Ռիդ	Միացյալ Թագավորություն

ԵՄ գործակալություններ

Էլիզաբեթ Զինշից	ՈԵՔ
Ֆեդերիկա Կուրտոլ	Եվրոջապօ
Մարիանա Լիլովա	Եվրոջապօ
Դավիդ Ռայգենցայն	Ֆրոնտեքս
Դյուկո վան Հիլ	Ֆրոնտեքս
Էվա Մատեյկո	Ֆրոնտեքս
Ռեյներ Բրեններ	Ֆրոնտեքս
Յորդանկա Մինկովա	Ֆրոնտեքս

Միջազգային կազմակերպություններ

Էուրոդիսի Մարկես Սանչես	ՄՄԿ
Պաբլո Էսպինիելլա	ՄԻԳԸԳ
Ալբերտո Անդրեանի	ԵԱՀԿ
Ֆադեյա Նովակ-Այրոնս	ՄԱԿ ՓԳՀ
Զյոթի Քենիկս	ՅՈՒՆԻՍԵՖ
Մարկո Գրամեսյա	ՄԹ-ի հարցերով ԵՄ փորձագիտական առաջին խմբի նախագահ

Մոդուլների ղեկավարներ

Ամանդա Ռիդ	Իրագելում
Կարոլինա Կաբաչինսկա	Հայտնաբերում
Դիրկ Կալեմին	Հարցազրույցի անցկացում

Նախագծի փոխղեկավարներ

Դիրկ Կալեմին
Գերտ Բույստ

Նախագծի ղեկավար

Յորդանկա Մինկովա



Համատեղ հայտարարություն

Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստողների համար սույն ձեռնարկը աշխատանքային խմբի անդամների կողմից մշակվել է միջազգային և եվրոպական ամենաթափառ չափանիշներին համապատասխան՝ ընդգծելով, որ մարդկանց թրաֆիքինգին անդրադարձող ջանքերի առանցքում թրաֆիքինգի ենթարկված անձի հիմնարար իրավունքներն են: Հատուկ ուշադրություն է դարձվել նաև խոցելի խմբերի վիճակին, ինչպիսիք են երեխաները և միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք:

Հիմնական նպատակն է սահմանապահներին վերապատրաստելու իրենց աշխատանքում աջակցել ազգային վերապատրաստողներին, որպեսզի նրանք կարողանան «ճիշտ բաներն անել ճիշտ և ձվելի լավ՝ ամեն օր»: Մեր փորձի համաձայն՝ վերապատրաստումն ինքնին պետք է լինի ծախսարդյունավետ և գործնական՝ միաժամանակ նաև վերապատրաստողի համար պարունակելով տեսական համատեքստ ու պրակտիկ հղումներ:

Մենք ընդունում ենք, որ մարդկանց թրաֆիքինգի (ՄԹ) դեմ պայքարը սահմանապահների համար ավելին է, քան պարզապես ինչ-որ գործ. այն իրականում ամբողջ հասարակության գործն է: Հիմնվելով 2011/36/ԵՄ հրահանգի վրա՝ մենք հոգացել ենք, որ ներառվեն այն երեք P-երը, որոնք ամբողջացնում են ՄԹ-ի դեմ պայքարը, այն է՝ կանխարգելում (prevention), պաշտպանություն (protection) և քրեական հետապնդում (prosecution): Ընդ որում, գործընկերությունը (partnership) հաճախ դիտվում է որպես չորրորդ P:

Քանի որ արդեն առկա էր վերապատրաստման՝ անդամ պետությունների և միջազգային կազմակերպությունների կողմից մշակված հսկայածավալ շատ լավ որակի նյութ, մեր մտադրությունը չի եղել սկսել զրոյից: Փոխարենը, մենք ընտրել ենք սույն ձեռնարկի թիրախային խմբի համար առավելագույնս հարմար կոնկրետ հարցեր և գոյություն ունեցող նյութը հարմարեցրել ենք մեր նպատակին:

Աշխատանքային խմբի բոլոր անդամների համագործակցության հիմքում, անկախ ազգային պատկանելության և մասնագիտական փորձի առումով նրանց տարբերություններից, անկեղծությունն ու հարգանքն է եղել, ինչը մեզ թույլ է տվել վստահությամբ և խան-

դավաճողությամբ ստեղծել սույն ձեռնարկը: Սա մարդկանց թրափիքին-
գի դեմ պայքարում համատեղ հանձնառության վկայություն է և
ազգային ու միջազգային փորձագետների միջև գերազանց համա-
գործակցության ապացույց:

Մենք այս ձեռնարկը հանձնում ենք ազգային վերապատրաստողների
փորձառու ձեռքը՝ նրանց հրավիրելով յուրացնելու մեր ընդհանուր
մոտեցումն ու ոգին և եվրոպական սահմանապահների շրջանում
խթանելու թրափիքինգի հանցագործության դեմ պայքարի ընդհանուր
մշակույթ ու վերաբերմունք:



Ներածություն

ՆԱԽԱԳԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԹ-ի կանխարգելումը, դրա դեմ պայքարը, գոհերի պաշտպանությունը շարունակում է գերակայություն լինել Եվրոպական միության քաղաքական օրակարգում: Այս բնագավառում Եվրամիության արձագանքները ՄԹ-ի դեմ պայքարում համաշխարհային գործողությունների մասն են և ամրագրվել են քաղաքական ու իրավական բազմաթիվ փաստաթղթերում, ռազմավարություններում և գործողությունների ծրագրերում: Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման և դրա դեմ պայքարի ու թրաֆիքինգի գոհերի պաշտպանության վերաբերյալ 2011/36/ԵՄ հրահանգն ապահովում է նորացված շրջանակ՝ սահմանելով այն չափանիշները, որոնք անհրաժեշտ է կիրառել ՄԹ-ի դեմ գործուն պայքարի ընթացքում գոհերի իրավունքների արդյունավետ պաշտպանության համար:

Հաշվի առնելով սահմանային վերահսկողության հետ կապված դերերն ու պարտականությունները՝ անդամ պետությունների սահմանային վերահսկողության մարմիններին և Ֆրոնտեքսին հատկացվել է ՄԹ-ի դեմ պայքարում էլ ավելի նշանակալի դեր՝ մատնանշելով սահմանապահ մարմինների համար այս բնագավառում հատուկ վերապատրաստման անհրաժեշտությունը:

Ֆրոնտեքսի Ռիսկերի վերլուծության ստորաբաժանումն իրականացրել է ՄԹ-ի վերաբերյալ նախագիծ, որը մեկնարկել է 2008 թվականին, և 2010 թվականի մայիսին մշակել է «ՄԹ-ի հետ կապված իրավիճակի ուսումնասիրություն և ռիսկերի նկարագրություն սահմանային վերահսկողության մարմինների համար» զեկույցի նախագիծը: Զեկույցը կարևոր եզրակացություններ և առաջարկություններ է տրամադրում Ֆրոնտեքսի և անդամ պետությունների համար: Դրանք, մասնավորապես, վերաբերում էին Ֆրոնտեքսի կողմից մարդկանց թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման հարցում (թե գոհերի, թե իրավախախտների առումով) սահմանային վերահսկողության մարմինների վերապատրաստումն ընդլայնելու և զարգացնելու անհրաժեշտությանը, ինչպես նաև երաշխավորելուն, որ վերապատրաստումը գործնական դասերի ձևով անցկացվի օպերատիվ աշխատակիցների լայն շրջանակի համար:

Սահմանային վերահսկողության մարմիններն աշխատում են առաջին գծում՝ վերահսկելու արտաքին սահմանները հատող անձանց: Նրանք ունեն թրաֆիքինգի հնարավոր գոհերին հայտնաբերելու և մարդու իրավունքների կոպիտ խախտումները կանխարգելելու հնարավորություն: Այս չափազանց կարևոր առաջադրանքը կատարելու համար սահմանային վերահսկողության աշխատակիցները պետք է լինեն ՄԹ-ի դեմ պայքարի ոլորտում պատշաճ ձևով վերապատրաստված ու կրթված, և այս գործում պետք է կարևոր դեր խաղա Ֆրոնտեքսը՝ օգնելու, որ անդամ պետությունների համար մշակվեն վերապատրաստման դասընթացներ, ու կազմակերպվի մասնագիտացված վերապատրաստում:

Գնահատված կարիքներին համապատասխան՝ Ֆրոնտեքսի Վերապատրաստման բաժինը մշակել է նախագիծ, որը հատուկ ուղղված է ՄԹ-ի դեպքերի կանխարգելմանն ու հայտնաբերմանը: Դրա հիմնական նպատակն է հզորացնել ԵՄ-ի և ՇՀԵ-ի սահմաններում գործող սահմանապահների կարողությունները, որպեսզի վերապատրաստման արդյունքում աշխատակազմը զինվի ՄԹ-ի կանխարգելման և դրա դեմ պայքարի կարողությամբ, ինչպես նաև գոհերի հետ վարվի՝ հարգելով նրանց արժանապատվությունն ու հիմնարար իրավունքները: Նախագծի առաջին քայլը վերապատրաստողի այս ձեռնարկի ստեղծումն է:

Վերապատրաստողի ձեռնարկը մշակվել է ԵՄ անդամ 12 պետությունների և Շենգենյան համաձայնագրին միացած մեկ երկրի (Բելգիա, Բուլղարիա, Կիպրոս, Ֆրանսիա, Լատվիա, Նիդեռլանդները, Նորվեգիա, Լեհաստան, Ռումինիա, Սլովակիա, Սլովենիա, Շվեդիա և Միացյալ Թագավորություն), ինչպես նաև միջազգային կազմակերպությունների ու ԵՄ այլ գործակալությունների (ՈԵԲ, Եվրոջապ, ՄՄԿ, ՄԻԳՀԳ, ԵԱՀԿ, ՄԱԿ ՓԳՀ և ՅՈՒՆԻՍԵՖ) փորձագետներից կազմված բազմամասնագիտական խմբի ակտիվ մասնակցությամբ:



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՁԵՌՆԱՐԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Վերապատրաստողի այս ձեռնարկի նպատակն է առաջին և երկրորդ գծի սահմանապահներին վերապատրաստող անձանց տրամադրել վերապատրաստման նյութերի ժամանակակից և օգտագործման առումով մատչելի փաթեթ:

Վերապատրաստման նյութերի փաթեթը մշակվել է մարդկանց թրաֆիքինգի՝ որպես լուրջ հանցագործության, և մարդու իրավունքների խախտման մասին իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, ինչպես նաև հանցագործության (պոտենցիալ) զոհերի հայտնաբերման ու սահմանապահների՝ նրանց հետ պատշաճ վարվելու կարողություններն ու հմտությունները կատարելագործելու նպատակով: Այն ներառում է անձնակազմի կարողությունների հզորացում, որպեսզի նրանք կարողանան հասկանալ ինչպես իրենց պարտավորությունները, որոնք բխում են ՄԹ-ի կանխարգելման, դրա դեմ պայքարի և թրաֆիքինգի զոհերի պաշտպանության գործում անդամ պետության պարտավորություններից, այնպես էլ իրենց ամենօրյա աշխատանքում առկա գործնական բարդությունները: Բացի այդ, այն տրամադրում է ՄԹ-ի դեմ պայքարի գործնական գործիքներ:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում հատուկ խոցելիության վիճակում գտնվող խմբերի դրությանը, ինչպիսիք են միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձինք և երեխաները:

Վերապատրաստողի ձեռնարկն ամբողջովին համահունչ է միջազգային ու եվրոպական վերջին չափանիշներին և այս ոլորտում քաղաքականության զարգացումներին: Այն ընդգրկում է 2011 թվականի ապրիլի 15-ի՝ մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ 2011/36/ԵՄ նոր հրահանգի համապատասխան դրույթները և հիմնված է ԵՄ արտաքին սահմաններին այդ հանցագործության դեմ պայքարի նպատակով ԵՄ անդամ պետությունների ու Շենգենյան համաձայնագրին միացած երկրների որդեգրած լավագույն փորձի վրա:

Վերապատրաստման մշակված նյութերում ՄԹ-ի դեմ պայքարին ուղղված ջանքերի առանցքում թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքներն են: Ընդունելով, որ ՄԹ-ն գենդերով պայմանավորված երևույթ է, նույնպես ընդգծվել է այն փաստը, որ կանայք ու տղամարդիկ

և աղջիկներն ու տղաները հաճախ թրաֆիքինգի են ենթարկվում տարբեր պատճառներով, և հետևաբար՝ զոհերին տրամադրվող միջոցներն ու աջակցությունը պետք է համապատասխանաբար լինեն գենդերով պայմանավորված:

Վերապատրաստման նյութը բաղկացած է վերապատրաստման երեք մոդուլից՝ իրազեկում, հայտնաբերում և հարցազրույցի անցկացում: Բոլոր երեք մոդուլներում երեխաների թրաֆիքինգը ներառված է որպես առանձին բաժին:

Առաջին մոդուլն «Իրազեկում»-ն է, որի նպատակն է բարձրացնել սահմանապահների իրազեկվածության մակարդակը, ընդլայնել նրանց պատկերացումներն ու գիտելիքը մարդկանց թրաֆիքինգի հանցագործության և դրանից բխող՝ իրավունքների խախտումների, դրա առանձնահատկությունների, դերակատարների, գործողության և մեխանիզմների վերաբերյալ:

Երկրորդ մոդուլը՝ «Հայտնաբերումը», ուղղված է սահմանային հսկողության մարմինների՝ մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ զոհերին, ինչպես նաև թրաֆիքինգի մեջ կասկածվող անձանց հայտնաբերելու կարողությունների բարելավմանը: Մասնավորապես՝ տրամադրելով օգտակար գործիք, որը ներառում է թրաֆիքինգ իրականացնող անձանց և պոտենցիալ զոհերին բնութագրող ցուցիչներ ու իրական կյանքից վերցված գործնական օրինակներ՝ 2-րդ մոդուլը սահմանային ծառայության աշխատակիցներին այս լուրջ հանցագործությունը շատ վաղ փուլում հայտնաբերելու և կանխարգելելու հնարավորություն կընձեռի:

Հարցազրույցի անցկացումը՝ երրորդ մոդուլը, նախատեսված է երկրորդ օղակի սահմանապահների համար: Այս մոդուլի նպատակն է ամուր հիմք ապահովել հարցազրույցի համար, որը պետք է հնարավորություն տա վերջնական գնահատելու, թե արդյոք անձը թրաֆիքինգի զոհ է կամ պոտենցիալ զոհ՝ հաշվի առնելով օժանդակության ցանկացած կարիք, ինչպես նաև ամենաարդյունավետ կերպով ուղղորդել սոցիալական, դատական և վարչական հետագա միջոցների ձեռնարկման առումով, այդ թվում, անհրաժեշտության դեպքում, ապաստան տրամադրող մարմինների կողմից:



ԻՆՉՊԵՍ ԿԻՐԱՌԵԼ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂԻ ՁԵՌՆԱՐԿԸ

Վերապատրաստման առաջարկվող դասընթացի մեթոդաբանությունը հիմնված է Բլումի տաքսոնոմիայի վրա²: Վերապատրաստումից հետո սովորողները պետք է ձեռք բերած լինեն նոր հմտություններ, գիտելիք և կարողություններ: Վերապատրաստման յուրաքանչյուր մոդուլ ներկայացվում է ըստ ուսուցման արդյունքների՝ ցույց տալով, թե դասընթացի մասնակիցներն ինչ պետք է իմանան կամ կարողանան անել մոդուլի ավարտին: Մոդուլների դասապլանները տրամադրվում են բովանդակությունը, հաջորդականությունը, առաջարկվող մեթոդներն ու վարժությունները և աղբյուր հանդիսացող անհրաժեշտ նյութն ամփոփող աղյուսակում, ինչպես նաև հղումներ պարունակող անհրաժեշտ նյութով: Յուրաքանչյուր վարժություն, համապատասխանաբար, ներկայացվում է վերապատրաստողի համար հատուկ մանրամասներով և նշումներով:

Սահմանապահները պետք է իմանան, թե չափանիշներն ինչպես պետք է կիրառվեն իրենց ամենօրյա աշխատանքում, ինչպես նաև այլ իրավիճակներում, որոնցում նրանք, հնարավոր է, հայտնվեն: Առաջարկվում է գործնական մոտեցում և ինտերակտիվ հնարքներ՝ դասավանդման ստեղծագործական ու ինտերակտիվ մեթոդների կիրառմամբ, որոնք ապահովում են մասնակիցների ակտիվ և պատրաստակամ ներգրավումը:

Չնայած ձեռնարկը մշակվել է վերապատրաստողին նյութերով ամբողջովին ապահովելու նպատակով՝ հարկ կլինի, որ ազգային վերապատրաստողները տրամադրված նյութերը հարմարեցնեն ազգային հանգամանքներին:

- Վերապատրաստման դասընթացներից առաջ պետք է կատարվի վերապատրաստվողների կարիքների գնահատում: Կարևոր է հաշվի առնել մասնակիցների ունեցած գիտելիքը, վերաբերմունքը և հմտությունները: Վերապատրաստման դասընթացների տևողությունը կախված կլինի գնահատված կարիքներից և ազգային հանգամանքներից:

² Բենջամին Բլումի (1956 թ.) ղեկավարած գիտնականների կոմիտեն կրթական վերջնարդյունքները դասակարգել է երեք խմբի՝ կոգնիտիվ (մտավոր ունակություններ, «գիտելիք»), հուզական կամ աֆեկտիվ (զգացմունքների կամ զգայական գոտիների աճ, «վերաբերմունք») և հոգեշարժական (մանուալ կամ ֆիզիկական հմտություններ, «հմտություններ»):

- Յուրաքանչյուր մոդուլի համար սահմանված են ուսումնական վերջնարդյունքները: Ղեկավարվելով դրանցով՝ պետք է մշակվի վերապատրաստման իրատեսական ծրագիր, որի առաջնահերթությունները կսահմանվեն՝ հաշվի առնելով վերապատրաստվողների կարիքները:
- Դասընթացի յուրաքանչյուր նյութում առկա են նշումներ վերապատրաստողի համար՝ մանրամասն ցուցումներով, ինչպես նաև մեթոդի և անհրաժեշտ նյութերի վերաբերյալ առաջարկություններով:
- Ի լրումն ձեռնարկի՝ տրամադրվում է ռեսուրսներով գործիքակազմ: Այն պարունակում է այնպիսի բազային նյութեր, ինչպիսիք են օրենսդրական ակտերը, տեսանյութերը, ինչպես նաև վերապատրաստման պատրաստի գործիքներ, մասնավորապես՝ PowerPoint ծրագրով պատրաստված պրեզենտացիաներ և դեպքերի ուսումնասիրություններ, որոնք կարող են ուղղակիորեն կիրառվել վերապատրաստման դասընթացի ընթացքում: Հնարավոր է կարիք լինի, որ վերապատրաստողը որոշ նյութեր հարմարեցնի վերապատրաստման հատուկ կարիքներին և վերապատրաստվողների փորձին: Իրավիճակները տարբեր երկրներում ակնհայտորեն տարբեր են, տարբեր են նաև մշակութային առանձնահատկություններն ու ընկալումները, այստեղից էլ՝ վարժությունները, դեպքերի ուսումնասիրությունները և օրինակները հարմարեցնելու անհրաժեշտությունը:



ՄՈԴՈՒԼ 1

Իրազեկում

Այս մոդուլի նպատակն է իրազեկել, սահմանապահների շրջանում ընդլայնել պատկերացումներն ու գիտելիքը մարդկանց թրաֆիքինգի հանցագործության, դրա առանձնահատկությունների, դերակատարների, գործողության և մեխանիզմների վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլի ավարտին մասնակիցները կկարողանան՝

1. հասկանալ ՄԹ-ն՝ որպես լուրջ հանցագործություն և մարդու իրավունքների կոպիտ խախտում,
2. ճանաչել սահմանապահի կարևոր դերը և պատասխանատվությունը ՄԹ-ն կանխարգելելու, դրա դեմ պայքարի, ինչպես նաև զոհերին պաշտպանելու գործում,
3. սահմանել ՄԹ-ի իրավական հասկացությունը միջազգային, ԵՄ և ազգային իրավական գործիքների հիման վրա,
4. մարդկանց թրաֆիքինգը տարբերակել մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխումից,
5. բացատրել ՄԹ-ի գործընթացը, դրա անդրազգային ասպեկտը, մեխանիզմը, փուլերը և ներկայացնել դերակատարներին,
6. ճանաչել համաշխարհային միտումները և թրաֆիքինգի ուղիները՝ ուշադրությունը սևեռելով ԵՄ-ում ընթացիկ իրավիճակի և սահմանապահի հայրենիքում ՄԹ-ի հետ կապված միտումների վրա,
7. հասկանալ, որ շահագործման նպատակով աշխատանքի ընդունված, տեղափոխված կամ փոխանցված ցանկացած երեխա բոլոր դեպքերում թրաֆիքինգի զոհ է, և երեխայի համաձայնության առկայությունն էական չէ,
8. բացատրել շահագործման հետևանքները երեխա զոհերի վրա և նրանց հատուկ կարիքները:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Բովանդակություն	Մեթոդը	Գործիքակազմը
Ներածություն. վերապատրաստման բազային նյութեր	Դասախոսություն, տեսանյութ	«Կուրել շրթան» (իրազեկման լեռնանյութ, MTV) «Լուսնային քայլվածքով արջը» (լեռնանյութ) - Մոդուլ 1-ի ներածություն (պրեզենտացիա)
Իրավական շրջանակ	Նախադաս- ընթացային ընթերցանություն, դասախոսություն, տեսանյութ	- ԵՄ հրահանգ (պրեզենտացիա) - ՄԱԿ-ի իրազեկման լեռնանյութ - Իրավական շրջանակ՝ ամփոփիչ աղյուսակ (բաժանվող նյութ) - Իրավական շրջանակ՝ պարունություն (բաժանվող նյութ)
ՄԹ-ի երեք փուլերը	Դասախոսություն	
Թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու տարբերություն- ները	Դասախոսություն, դեպքերի օրինակներ	Թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի դեպքեր (Միացյալ Թագավորության օրինակներ)
ՄԹ-ի աշխարհա- գրությունը	Խմբակային քննարկում- վարժություն՝ հարց ու պատասխան	ՄԹ-ի աշխարհագրությունը (պրեզենտացիա)
Երեխաների թրաֆիքինգ	Դասախոսություն, տեսանյութ	«Երկու փոքրիկ աղջիկներ» (իրազեկման լեռնանյութ) - Երեխաների թրաֆիքինգ (պրեզենտացիա)
Համագործակ- ցություն	Դասախոսություն, քննարկում	Համագործակցություն (պրեզենտացիա)
Մարդկանց թրաֆիքինգի մասին առասպելներ	Ինտերակտիվ քննարկում	- Թրաֆիքինգի մասին առասպելներ (պրեզենտացիա) - Թրաֆիքինգի մասին առասպելներ (բաժանվող նյութ)

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ներածություն. վերապատրաստման բազային նյութեր

Նշումներ վերապատրաստողի համար

Վերապատրաստման նյութերի այս մասի նպատակն է բացատրել վերապատրաստման հենքը և այն, թե ինչու սահմանապահները պետք է առաջին գծում իրենց ամենօրյա աշխատանքն ու պարտականություններն իրականացնելիս իրազեկ լինեն մարդկանց թրաֆիքինգի հանցագործության և դրա հետևանքով մարդու իրավունքների խախտման մասին:

Հղումներ

Միգրացիոն քաղաքականության զարգացման միջազգային կենտրոնի կայքը (<http://www.anti-trafficking.net>):

Տարեկան միլիոնավոր մարդիկ

Մարդկանց թրաֆիքինգն անվանվել է 21-րդ դարի ստրկություն: Թեպետ երևույթը մասնակիորեն հայտնի է, սակայն վերջին տարիներին դրա ընդունած ծավալը դեռևս ինչպես հարկն է չի գիտակցվում: Բազմաթիվ կազմակերպություններ տրամադրում են տարբեր վիճակագրական տվյալներ, սակայն ընդհանուր առմամբ ընդունվում է, որ տարեկան թրաֆիքինգի և շահագործման են ենթարկվում միլիոնավոր մարդիկ: Նրանց մեծ մասը կանայք և երեխաներ են, թեպետ ավելի ու ավելի մեծ թվով տղամարդիկ են թրաֆիքինգ իրականացնող անձանց թիրախ դառնում հարկադիր աշխատանքի միջոցով շահագործման և այլ գործողությունների նպատակով: Վերջին հետախուզական աղբյուրները մարդկանց թրաֆիքինգը բնութագրում են որպես աշխարհում ամենաարագ աճող անօրինական բիզնեսներից մեկը: Թեպետ կազմակերպված հանցավորության թաքնված բնույթը դժվարացնում է վստահելի և լիարժեք տվյալների ձեռքբերումը, սակայն հայտնի է, որ աշխարհով մեկ մարդկանց թրաֆիքինգը, թմրամիջոցների ապօրինի շրջանառությունն ու զենքի անօրինական վաճառքը հանցավոր գործունեության երեք ամենախոշոր տեսակներն ու կազմակերպված հանցավորության ֆինանսավորման աղբյուրներն են:

Այս աճող բիզնեսի հիմնական պատճառներն են, մի կողմից՝ գործազրկությունը, խտրականությունը (որի թիրախը հաճախ կանայք և



փոքրամասնություններն են), օրինական միգրացիայի սահմանափակ ուղիները և հեռանկարների ընդհանուր բացակայությունը, ինչն ամբողջ աշխարհում ավելի ու ավելի մեծ թվով մարդկանց վրա է ազդում՝ ստեղծելով թրաֆիքինգի գոհերի առաջարկ, իսկ մյուս կողմից՝ էժան, շահագործելի աշխատուժի աճող պահանջարկը, սեքս-ինդուստրիայի ընդլայնումը, ինչպես նաև գլոբալացման և տեխնոլոգիաների ստեղծման հետևանքով մի երկրից մյուսը տեղեկատվության, մարդկանց ու փողի հեշտ շրջանառության նոր հնարավորությունները: Կազմակերպված հանցավոր ցանցերը և անհատ հանցագործներն իրենց վերահսկողության տակ են վերցրել «առաջարկի ու պահանջարկի» այս տնտեսական հավասարումը՝ թրաֆիքինգ կատարելու, թրաֆիքինգի ենթարկված մարդկանց շահագործելու և իրենց համար եկամուտ ստեղծելու:

Սահմանապահների դերն ու պատասխանատվությունը

Հաջորդ բաժնում կնշվի, որ եվրոպական օրենսդրությամբ սահմանապահին մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի և գոհերին պաշտպանելու եռակի դեր ու պատասխանատվություն է վերապահվում:

Սահմանապահներն, այդուհանդերձ, այս հանցագործությանն առնչվելիս ստիպված կլինեն հաղթահարել մի շարք դժվարություններ: Առաջին և հիմնական խնդիրն այն է, թե ինչպես հայտնաբերել թրաֆիքինգի ենթարկված անձին՝ դեպքն այլ՝ անկանոն աշխատանքի, անկանոն միգրացիայի, (օրինական կամ անօրինական) պոռնկության և այլ դեպքերից տարբերակելու միջոցով: Թրաֆիքինգի գոհերի հայտնաբերումն ուղղակիորեն փոխկապակցված է թրաֆիքինգի դեպքերի հայտնաբերման գործընթացի հետ: Ահա թե ինչու, գոհերի իրավունքները պաշտպանելու պարտավորության հետ մեկտեղ, գոհի հայտնաբերման կարևորությունն այսօր աներկբայորեն ճանաչվում է որպես առաջնահերթություն:

Թրաֆիքինգի հանցագործությունը պահանջում է տարբեր բնագավառների և հաստատությունների՝ բարձրակարգ վերապատրաստում անցած, քաջատեղյակ, մասնագիտացված անձնակազմի համակարգված միջամտություն: Թեպետ մասնագիտացված բաժիններն էլ ավելի են զարգացնում ու հղկում հետաքննության հնարքները, և ստեղծվում են այլ հաստատությունների/ծառայությունների

հետ համագործակցության մեխանիզմներ, փորձը հստակորեն ցույց է տալիս, որ հենց ոչ մասնագիտացված աշխատակիցներն են (որոնցից, ընդհանուր առմամբ, չի պահանջվում ուշադրությունը սևեռել նման հանցագործությունների վրա), որ իրենց սովորական պարտականությունները կատարելիս հաճախ բախվում են դրան և իրենց կանոնավոր աշխատանքով կարող են էապես նպաստել որևէ գործում «բեկում մտցնելուն»: Ավելին, ԵՄ հրահանգով պահանջվում է, որ անդամ պետությունները վերապատրաստեն այն պաշտոնյաներին, որոնց դեպքում թրաֆիքինգի գոհերի հետ առնչվելու հավանականություն կա:

Տվյալները ցույց են տալիս, որ թրաֆիքինգ իրականացնող անձինք հավաքագրում են բոլոր տարիքի, ինչպես նաև սոցիալական ու կրթական տարբեր հենքով կանանց և տղամարդկանց՝ երեխաների, չափահասների և ծերերի: Ի սկզբանե պետք է լավ հասկանալ թրաֆիքինգի՝ գենդերով պայմանավորված երևույթ լինելու հանգամանքը, և այն փաստը, որ կանայք ու տղամարդիկ հաճախ թրաֆիքինգի են ենթարկվում տարբեր նպատակներով: Բացի այդ, ֆիզիկապես կամ մտավորապես անլիարժեք անձինք թիրախ են դառնում շահագործման տարբեր եղանակների համար, ինչպիսին է, օրինակ, հարկադիր մուրացկանությունը: Շահագործման ձևերի բազմազանությունը դժվարացնում է սահմանային կետերում թրաֆիքինգի գոհերի կերպավորման (պրոֆիլավորման) կիրառումը: Փոխարենը, ցուցանիշների կիրառումն է, որը, համադրվելով պրոակտիվ մոնիտորինգի ու տեղեկությունների հավաքման հետ, համարվում է թրաֆիքինգի պոտենցիալ գոհերին հայտնաբերելու ամենաարդյունավետ միջոցը: Մասնավորապես, հարցերի առաջադրման կիզակետում պետք է լինի իրավիճակների տրամաբանական կապի և վստահելիության խաչաձև ստուգումը: Դա կարող է հարուցել հաջորդական քայլեր, որոնք, ի վերջո, կհանգեցնեն հետաքննության և քրեական հետապնդման: Սահմանապահները սովոր են հարցերի առաջադրման այսօրինակ եղանակին, հմուտ են այդ հարցում և այս հնարքը կարող են կիրառել՝ բացահայտելու թրաֆիքինգի հնարավոր իրավիճակները:

Սահմանապահների համար հատուկ դժվարություններ են առաջացնում նրանց հակընդդեմ առաջնահերթությունները, ինչպիսիք են՝ սահմանային վերահսկողության համար առկա ժամանակի սահ-



մանավանդ լինելն ու ընդհանուր կանոնը՝ անհարմարություն չստեղծելու ակնհայտորեն իրական ճանապարհորդների համար, անկանոն միգրանտների հայտնաբերումն՝ ընդդեմ թրաֆիքինգի գոհերի հայտնաբերման, ինչպես նաև խտրականություն չդնելու պարտավորությունն՝ ընդդեմ ոչիսկ խմբում գտնվող անձանց հանդեպ հատուկ ուշադրության՝³ ապահովելով, որ իրենց գործողությունները բացասաբար չանդրադառնան այդ անձանց մարդու իրավունքների վրա:

Բացի դրանից, հնարավոր է՝ շահագործումը դեռևս տեղի ունեցած չլինի, և գուցե չլինեն բռնության տեսանելի նշաններ, վերահսկման մեխանիզմներ, թրաֆիքինգ իրականացնող անձանց՝ շահագործելու մտադրություն և այլն:

³ Հավանական է, որ մարդկանց թրաֆիքինգի գոհերը հոգեբանական տարբեր խնդիրներ ունենան, քանի որ իրենց կյանքի ընթացքում ենթադրաբար պետք է որ բազմաթիվ տրավմատիկ իրավիճակների միջով անցած լինեն: Հետևաբար, շատ կարևոր է ուշադիր լինել թրաֆիքինգի ենթարկված մարդկանց վրա տրավմայի ազդեցության հարցում և ճանաչել այս տանջանքները: Ըստ հոգեբան փորձագետների՝ գոհերի շրջանում ամենատարածված մտավոր խանգարումը հետտրավմատիկ սթրեսային խանգարումն է (ՀՏՄ): Թրաֆիքինգի ենթարկված անձանց հոգեկան առողջության վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս Մոդուլ 3-ը:

ԻՐԱՎԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿ

Նշումներ
վերապատրաստողի
համար

Վերապատրաստման նյութի այս հատվածի նպատակն է բացատրել, թե ինչու է կարևոր հասկանալ մարդու թրաֆիքինգի հասկացությունը (ինչ է ենթադրում, որպես մարդու իրավունքների խախտում, որպես հանցագործություն, հանցագործության ընդգրկումն ու ազդեցությունը)՝ միջազգային և ԵՄ իրավական շրջանակի համատեքստում: Գործիքակազմը ներառում է հիմնական միջազգային դրույթների համառոտ նկարագրությունը (իրավական շրջանակ՝ ամփոփիչ աղյուսակ), որը պետք է լրացվի ազգային սահմանումներով և դրույթներով:

Հղումներ

Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր:

«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա և դրան կից արձանագրություններ (ՄԱԿ ԱԿՀ կոնվենցիա):

«Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» արձանագրություն, որը լրացնում է «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (ՄԹ-ի մասին ՄԱԿ-ի արձանագրություն):

«Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիա և դրա Բացատրական գեկույցը (Վարշավա, 2005 թվականի մայիսի 16):

«Բոլոր միգրանտ աշխատողների իրավունքների պաշտպանության մասին» կոնվենցիա:

«Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (ԵԻԿ):



«Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի
կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երե-
խաների մարմնավաճառության և մանկա-
կան պոռնոգրաֆիայի մասին» կամընտիր
արձանագրություն:

«Կանանց նկատմամբ խտրականության բո-
լոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա
(ԿԽՎԿ):

«Հարկադիր աշխատանքի մասին» կոն-
վենցիա (Աշխատանքի միջազգային կազմա-
կերպության կոնվենցիա 29):

«Փախստականների կարգավիճակի մասին»
ՄԱԿ-ի 1951 թվականի կոնվենցիա:

«Հիմնարար իրավունքների մասին» Եվրո-
պական միության խարտիա:

«Մարդկանց թրաֆիքինգի կամ անօրինա-
կան ներգաղթի կազմակերպման գոհ հան-
դիսացող և իրավասու մարմինների հետ
համագործակցող երրորդ երկրների քաղա-
քացիներին տրվող կեցության թույլտվության
մասին» Խորհրդի 2004 թվականի ապրիլի
29-ի 2004/81/ԵԽ դիրեկտիվ:

«Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման,
դրա դեմ պայքարի ու դրա զոհերի պաշտ-
պանության և Խորհրդի 2002/629/ԱՆԳ շրջա-
նակային որոշումը փոխարինելու մասին»
Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011
թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ հրահանգ:
Շենգենյան համաձայնագիր (1985 թվական):
Ազգային օրենքներ:

*«Մարդու իրավունքների և մարդկանց թրա-
ֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզ-
բունքներ և ուղեցույցներ»,*

ՄԻԳՀԳ (տեքստը Տնտեսական և սոցիալա-
կան խորհրդին ներկայացվել է որպես ՄԱԿ-ի

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի զեկույցի հավելված, E/2002/68/Add.1):

«Մոդուլ 1», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ ձեռնարկ քրեական արդարադատության ոլորտի գործող մասնագետների համար, ՄԱԹ-ՀԴԳ, Նյու Յորք, 2009 թվական:

Առաջին օգնության գործիքակազմ մարդկանց թրաֆիքինգի խնդրով զբաղվելիս իրավապահ մարմինների արագ արձագանքման ծառայության կողմից կիրառման համար, ՄԱԹ-ՀԴԳ, UN.GIFT:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի կայքը (<http://www.unicef.org>):

Դեպի մարդու իրավունքներ փանող նեղ դարպասը, «Լա Ստրադա Ինթերնեշնլ» (La Strada International):⁴

Թրաֆիքինգի մասին ՄԱԿ-ի արձանագրությունը

ՄԹ-ին առնչվող հիմնական միջազգային իրավական փաստաթուղթը «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» ՄԱԿ-ի արձանագրությունն է:⁵ Այն «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան (ՄԱԿ ԱԿՀԿ) լրացնող երեք արձանագրություններից մեկն է⁶: Ընդունվելով 2000

⁴ «Լա Ստրադա Ինթերնեշնլ»-ը, որի քարտուղարությունն Ամստերդամում է, «որպես անկախ հասարակական կազմակերպություններ գրանցված և հանրության լայն շերտերում գործող» անդամ կազմակերպությունների ցանց է (տես նաև՝ <http://www.lastradainternational.org> կայքը):

⁵ Արձանագրությունը նաև հայտնի է որպես ՄԹ-ի մասին արձանագրություն կամ (մարդկանց) Թրաֆիքինգի մասին արձանագրություն: Այն նաև հաճախ վկայակոչվում է որպես Պալերմոյի արձանագրություն, որն, ուղղակի իմաստով, սխալ է, քանի որ իրականում Իտալիայի Պալերմո քաղաքում Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունվել է երեք արձանագրություն (2000 թվական):

⁶ Մյուս երկուսն են՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների անօրինական ներս բերելու դեմ» արձանագրությունը և «Հրազենի, ռազմամթերքի ու հարակից նյութերի անօրինական արտադրության և շրջանառության դեմ» արձանագրությունը:



թվականին՝ այն առաջին միջազգային իրավական փաստաթուղթն էր, որով սահմանվեց ՄԹ-ի հասկացությունը (Հոդված 3) և քրեականացվեց թրաֆիքինգի գործողությունը (Հոդված 5):

2011/36/ԵՄ հրահանգ⁷

2011/36/ԵՄ հրահանգով սահմանվում են նվազագույն կանոններ՝ սահմանելու հանցանքները և թրաֆիքինգ իրականացնող անձանց նկատմամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև ներկայացվում են ընդհանուր կանոններ՝ խթանելու կանխարգելման և գոհերի պաշտպանության գործընթացները: Այն ավելի ընդգրկուն մոտեցում է ցուցաբերում այն հարցին, թե ինչ է մարդկանց թրաֆիքինգը, քան 2002 թվականի ԵՄ շրջանակային որոշումը, որին փոխարինում է հրահանգը, և ներառում է շահագործման լրացուցիչ ձևեր:

Այժմ շահագործումն առնվազն ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը կամ սեռական շահագործման այլ տեսակները, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, այդ թվում՝ մուրացկանությունը, ստրկությունը կամ ստրկության նմանվող իրողությունները, կախյալ վիճակը, հանցավոր գործողությունների շահագործումը կամ օրգանների հեռացումը: Սահմանման մեջ ներառված է նաև անօրինական որդեգրման կամ հարկադիր ամուսնությունների նպատակով մարդկանց թրաֆիքինգը:

Այս սահմանումը համահունչ է Թրաֆիքինգի մասին ՄԱԿ-ի արձանագրության սահմանմանը:

ԵՄ հրահանգում նշվում է թրաֆիքինգի՝ գենդերով պայմանավորված բնույթը: Նշվում է նաև, որ կանայք և տղամարդիկ հաճախ թրաֆիքինգի են ենթարկվում տարբեր պատճառներով: Դրանում ընդունվում է, որ օգնությունը և աջակցության միջոցները պետք է լինեն գենդերով պայմանավորված՝ հաշվի առնելով արական և իգական սեռի գոհերի տարբեր կարիքները:

Հրահանգով ԵՄ ամբողջ տարածքի համար սահմանվում են առնվազն հինգ տարվա ազատազրկման պատիժներ կամ, հատուկ ծանրացուցիչ հանգամանքներում, օրինակ՝ այն դեպքերում, երբ շահագործման են ենթարկվում երեխաներ, կամ գոհի կյանքին վտանգ է սպառնում՝ 10 տարվա ազատազրկում:

⁷ «Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի ու դրա գոհերի պաշտպանության և Խորհրդի 2002/629/ԱՆԳ շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011 թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ հրահանգ:

Հրահանգով նաև ավելի լայն պաշտպանություն է նախատեսվում գոհերի համար, որոնք պետք է ստանան կացարան, նյութական աջակցություն և, անհրաժեշտության դեպքում, բժշկական օգնություն, խորհրդատվություն ու տեղեկություններ:

ՄԹ-ի խնդրին ուղղված միջազգային այլ վերաբերելի կոնվենցիաներ և փաստաթղթեր

- ◆ «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (1966 թվականի դեկտեմբերի 16)
- ◆ «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր (1966 թվականի դեկտեմբերի 16)
- ◆ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» կոնվենցիա (1979 թվականի դեկտեմբերի 18)
- ◆ «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա (1989 թվականի նոյեմբերի 20)
- ◆ «Բոլոր միգրանտ աշխատողների և նրանց ընտանիքների անդամների իրավունքների պաշտպանության վերաբերյալ» միջազգային կոնվենցիա (1990 թվականի դեկտեմբերի 18)
- ◆ «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայի՝ «Մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և մանկական պոռնոգրաֆիայի մասին» կամընտիր արձանագրություն (2000 թվականի մայիսի 25)
- ◆ «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիա (2000 թվականի դեկտեմբերի 7)
- ◆ Եվրոպական շրջանակում Եվրոպայի խորհրդի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիան (2005 թվականի մայիսի 16) ապահովում է հիմնական իրավական գործիքը, ինչպես և՛ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան

ՄԹ-ի սահմանումը

2011/36/ԵՄ հրահանգի Հոդվածում 2-ում մարդկանց թրաֆիքինգի հետ կապված հանցանքները թվարկվում են որպես «շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, ներառյալ այդ անձանց վերահսկելու իրա-



վասությունը փոխանակելը կամ փոխանցելը՝ ուժ գործադրելու սպառնալիքով կամ ուժ գործադրելով կամ հարկադրանքի այլ ձևով, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահման կամ մեկ այլ անձի վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով»:

Համաձայն Թրաֆիքինգի մասին արձանագրության սահմանման (Հոդված 3 (ա))՝

«Մարդկանց թրաֆիքինգ» նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալն ուժ գործադրելու սպառնալիքով կամ ուժ գործադրելով կամ հարկադրանքի այլ ձևով, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահման կամ մեկ այլ անձի վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով: «Շահագործում» հասկացությունն առնվազն ներառում է այլ անձանց պոռնկության շահագործումը կամ այլ տեսակի սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, անազատ վիճակը կամ օրգանների հեռացումը:

Թրաֆիքինգի մասին արձանագրության 3-րդ հոդվածը հավելյալ հստակեցնում է, որ մարդկանց թրաֆիքինգն ունի երեք բաղկացուցիչ տարրեր⁸, որոնք բոլորը պետք է առկա լինեն, որ հստակ լինի մարդկանց թրաֆիքինգի հանցանքի առկայությունը.

- ◆ «գործողությունը» (ի՞նչ է արվում, օրինակ՝ հավաքագրումը, տեղափոխումը, փոխանցումը, անձանց թաքցնելը կամ ստանալը).
- ◆ «միջոցները» (ինչպե՞ս է դա արվում, օրինակ՝ ուժի սպառնալիքով կամ ուժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման,

⁸ Մենք պետք է հիշենք երեք բաղկացուցիչ տարրերի (գործողություն, միջոց և նպատակ) միջև տարբերությունը, ինչպես նաև ՄԹ-ի երեք փուլերը, որոնք հիմնականում վկայակոչվում են որպես «հավաքագրում», «տեղափոխում» և «շահագործում» (տես էջ 31): Քանի որ սահմանապահը պետք է իրազեկ լինի երեք բաղկացուցիչ տարրերի մասին, սակայն, որպես կանոն, նա երևույթին կառնչվի թրաֆիքինգի պոտենցիալ գոհի «տեղափոխման» ընթացքում, սույն ձեռնարկն ավելի ընդլայնված տեղեկություններ է տրամադրում ՄԹ-ի երեք փուլի մասին:

առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ վճարումների կամ շահերի ձևով այն անձին կաշառելու ճանապարհով, որի հսկողության տակ գտնվում է գոհը), և

- ◆ շահագործողական «նպատակը» (ինչո՞ւ է դա արվում, օրինակ՝ շահագործման նպատակով, ինչը ներառում է այլ անձանց մարմնավաճառության շահագործումը, սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, հարկադիր մուրացկանությունը, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը կամ օրգանների հեռացումը):

Վերոնշյալ տարրերը պետք է դիտարկվեն իրենց ամբողջության մեջ, դրանք ունեն բազմաթիվ կողմեր, որոնք արտացոլում են ժամանակակից թրաֆիքինգի իրականությունը:

Դրանք ճանաչում են թրաֆիքինգի բոլոր ձևերը, և ներառում են սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը, կախյալ վիճակը, ստրկությանը նմանվող իրողություններն ու ստրկությունը, որոնցից յուրաքանչյուրը սահմանվում է միջազգային իրավունքում:

Սահմանումներից ոչ մեկով չի պահանջվում, որ գոհը հատի միջազգայնորեն ճանաչված սահման՝ հաշվի առնելով, որ մարդիկ նաև ներքին թրաֆիքինգի են ենթարկվում՝ տարածաշրջանից տարածաշրջան կամ մեկ երկրի սահմաններում:

Բացառությամբ 18 տարեկանից ցածր անձանց (օրինակ՝ երեխաների) դեպքերի, անհրաժեշտ է համարվում գոհի ազատ և տեղեկացված կամքի որևէ եղանակով չարաշահումը, լինի դա ուժի, խաբեության կամ իշխանության չարաշահման միջոցով: Այդպիսով սահմանմամբ հարգվում է չափահասների՝ իրենց կյանքի վերաբերյալ ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունը: Միաժամանակ այն իրավամբ պաշտպանում է այն անհատներին, որոնց ազատ կամքը չարաշահվել է, և ընդունում է, որ երեխան չի կարող տալ իր վավեր համաձայնությունը:

Միշտ չէ, որ թրաֆիքինգ իրականացնողները բիրտ ուժ են կիրառում՝ իրենց գոհերին տիրանալու համար. կան նաև ոչ բռնի հարկադրական և վերահսկողական մեթոդներ: Իրավիճակների կամ խոցելիության չարաշահումը նշանակում է, որ ներգրավված անձը չունի որևէ իրական և ընդունելի այլընտրանք, քան ենթարկվելը:



Որպես մարդու իրավունքների խախտում

Մարդկանց թրաֆիքինգը, «որը կարող է դասակարգվել որպես ստրկության ժամանակակից ձև»,⁹ ավելի շուտ մարդու իրավունքների կոպիտ խախտում է, քան միգրացիայի խնդիր, և այս պատճառով, ինչպես ընդունված է 2011/36/ԵՄ հրահանգով և ընդգծված ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարի (ՄԱԿ ՄԻԳՀ) *«Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզբունքներ և ուղեցույցներ» խորագրով գրքում*, թրաֆիքինգի ենթարկված անձանց մարդու իրավունքները պետք է լինեն մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու բոլոր ջանքերի առանցքում: Թրաֆիքինգի ենթարկված անձանց իրավունքների վերաբերյալ կարելի է նաև հետևություններ անել մարդու իրավունքների վերաբերյալ ընդհանուր փաստաթղթերից, ինչպիսիք Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն ու «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիան են:

Պատմականորեն, թրաֆիքինգի ենթարկված անձանց, մասնավորապես նրանց, որոնք հարկադիր պոռնկության համար չեն թրաֆիքինգի ենթարկվել, վերաբերվել են որպես հանցագործների և անկանոն կարգավիճակով ներգաղթողների: Որպես այդպիսին՝ նրանց ձեռքակալել են և արտաքսել, երբեմն նույնիսկ քրեական հետապնդման ենթարկել՝ անօրինական կարգով երկիր մտնելու կամ ճամփորդական կեղծ փաստաթղթեր ունենալու համար: Նրանց թրաֆիքինգի ենթարկված անձինք, հնարավոր է, դատապարտված լինեն օտարերկրացիներին ապօրինաբար տեղափոխելու համար, բայց հազվադեպ են պատասխանատվության ենթարկվում թրաֆիքինգին ուղեկցող՝ մարդու իրավունքների բազմաթիվ խախտումների համար, որոնց թվում են անազատ վիճակը, ստրկությանը նմանվող պայմանները, բռնաբարությունը, ֆիզիկական ու հոգեբանական ոտնձգությունը:

Ի հավելումն Թրաֆիքինգի մասին ՄԱԿ-ի արձանագրության՝ թրաֆիքինգը արգելված է նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային հատուկ բազմաթիվ պայմանագրերով, իսկ Եվրամիության իրավունքում դա ավելի է խորացվել: Թեպետ բոլոր այս պայմանագրերն էլ պարունակում են թրաֆիքինգի ոլորտի համար

⁹ Եվրոպական հանձնաժողովի՝ թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող կայքէջ՝ <http://ec.europa.eu/anti-trafficking/index.action>:

վճարող բազմաթիվ դրույթներ, այս պահին արժե հիշատակել դրանցից երկուսը, որոնք, լինելով միջազգային մակարդակի պայմանագրեր, էական և կոնկրետ հղում են կատարում թրաֆիքինգին՝ շահագործման և մարդու իրավունքների հետ կապի առումով: «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1979 թվականի կոնվենցիայով մասնակից պետությունները պարտավորեցվում են միջոցներ ձեռնարկել՝ «արգելելու կանանց առևտրի և կանանց պոռնկության շահագործման բոլոր ձևերը»: Այս պայմանագրերը վավերացրած պետությունները պարտավոր են այս կոնվենցիաներով ամրագրված հանձնառություններն ինտեգրել իրենց ազգային օրենսդրություններում և այս բնագավառում զարգացնել երկարամյա ավանդույթ ու գործելակերպ: «Երեխայի իրավունքների մասին» 1989 թվականի կոնվենցիայով արգելվում է որևէ նպատակով երեխաների թրաֆիքինգը, ինչպես նաև երեխաների սեռական շահագործումն ու հարկադիր կամ շահագործման նպատակով աշխատանքը: Այս պայմանագիրը պարունակում է նաև թրաֆիքինգի ենթարկված երեխաների պաշտպանության վերաբերյալ կարևոր դրույթներ: Խնդրին վերաբերելի այլ պայմանագրեր, ինչպիսին է, մասնավորապես, «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը համանման սովորույթների և ինստիտուտների վերացման մասին» ՄԱԿ-ի լրացուցիչ կոնվենցիան, նույնպես պարունակում են ավելի կոնկրետ դրույթներ:

Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ միջազգային իրավական շրջանակը ներառում է նաև խնդրին ուղղված տարածաշրջանային մակարդակի պայմանագրեր և իրավական այլ գործիքներ, որոնցով ընդունվում է ՄԹ-ի խնդրում մարդու իրավունքների առանցքային լինելը: Երկու շատ կարևոր օրինակներ են Եվրոպայի խորհրդի 2005 թվականի «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» կոնվենցիան (Թրաֆիքինգի մասին եվրոպական կոնվենցիան) և «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիան, որոնցով հստակ արգելվում է ՄԹ-ն: ՄԹ-ի կանխարգելման և դրա դեմ պայքարի գործում մարդու իրավունքների վճարող ասպեկտներին անդրադառնալու օրինակ է 2011/36/ԵՄ հրահանգը, որին պարբերաբար հղում է կատարվում սույն ձեռնարկում:



Միջազգային պաշտպանություն

Թրաֆիքինգի ոչ բոլոր գոհերն են փախստական, բայց որոշ գոհեր կարող են միջազգային պաշտպանության կարիք ունենալ, օրինակ՝ նրանք կարող են լինել փախստական կամ օժանդակ պաշտպանության կարիք ունենալ (Ռբակման հրահանգի Հոդված 2 և Հոդված 15)¹⁰:

1. Մաքսանենգ եղանակով միգրանտների տեղափոխման և թրաֆիքինգի օղակները հաճախ շատ սերտորեն առնչվում են իրար: Երկուսի դեպքում էլ թիրախում միջազգային պաշտպանություն հայցող անձանց խոցելիությունն է: Փախստականները կարող են ապավինել միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխողներին, որոնց ծառայությունների շուրջ, հնարավոր է, սեփական կամքով պայմանավորված լինեն, սակայն հավանական է, որ ի վերջո դառնան թրաֆիքինգի գոհ, եթե պարզվի, որ այս ծառայությունները մատուցվել են շահագործման և չարաշահման նպատակով:
2. Պատճառված վնասի կամ դրա վախի պատճառով թրաֆիքինգի որոշ գոհեր կամ պոտենցիալ գոհեր կարող են տեղավորվել փախստականի կամ օժանդակ պաշտպանության շահառուի սահմանման ներքո և հետևաբար՝ ունենալ միջազգային պաշտպանության իրավունք:

Նման հնարավորությանն անդրադառնում է Թրաֆիքինգի մասին հրահանգի նախաբանի 10-րդ կետը. «Սույն հրահանգը չի սահմանափակում անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքի գործողությունը՝ համաձայն 1951 թվականի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայի (Ժնևի կոնվենցիա), և համահունչ է «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիայի 4-րդ և 19 (2) հոդվածներին»:

¹⁰ Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/83/ԵՀ հրահանգ «Երրորդ երկրների քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես փախստական կամ, այլապես, միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձ որակելու և նրանց կարգավիճակի նվազագույն չափանիշների ու տրամադրված պաշտպանության բովանդակության վերաբերյալ»:

Անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքը¹¹, որը ենթադրում է պաշտպանություն անձին այն երկիր վերադարձնելուց, որտեղ նա կենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, հետապնդման, կամ որտեղ նրա կյանքին կամ ազատությանը կարող է վտանգ սպառնալ, ընդունվում է որպես միջազգային սովորութային իրավունքի մաս և պետության պարտավորությունների մաս է կազմում:

- ♦ «Փախստականների կարգավիճակի մասին» 1951 թվականի կոնվենցիայի Հոդված 33. «Պայմանավորվող ոչ մի պետություն փախստականին չպետք է վտարի կամ որևէ կերպ վերադարձնի այն տարածքների սահմանները, որտեղ նրա կյանքին կամ ազատությանը վտանգ կսպառնար»:
- ♦ ՄԻԵԿ-ի Հոդված 3-ը և «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիայի Հոդված 4-ը (խոշտանգման և անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի արգելման մասին) լրացնում են փախստականների միջազգային իրավունքով սահմանված պաշտպանության մեխանիզմը:

ՄԻԵԿ-ի Հոդված 3-ի համաձայն՝ վերադարձվելուց պաշտպանված լինելու իրավունքը բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակումների կամ շեղումների:

Համաձայնություն և շահագործում

ՄԹ-ի հետ կապված առաջանում է այն հարցը, թե արդյոք անձը կարող է իրավունքի տեսանկյունից համաձայն լինել շահագործման, թե՛ ոչ:

¹¹ Անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքը փախստականների միջազգային իրավունքի անկյունաքարն է: Այս սկզբունքի էությունն այն է, որ պետությունը չպետք է անձին վերադարձնի այն տարածք, որտեղ նա, հնարավոր է, հետապնդվի, այն վայր, որտեղ նա կարող էր վախենալ իր կյանքի համար, ենթարկվել խոշտանգման կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի, և որտեղ կարող է վտանգված լինել նրա ազատությունն ու անվտանգությունը: Այս սկզբունքը ներառվել է միջազգային և տարածաշրջանային պայմանագրերում, ինչպես նաև ԵՄ անդամ պետությունների ազգային օրենսդրություններում: Պետության՝ անձին վերադարձնելուց պաշտպանելու պատասխանատվությունը գործում է նույնիսկ այն ժամանակ, երբ ապաստան տրամադրելու բացահայտ հայց առկա չէ: Սա կարևոր է սահմանապահների և ներգաղթի հարցերով զբաղվող պաշտոնյաների համար՝ թրաֆիքինգի գործերին առնչվող նրանց գործունեության առումով:



Թրաֆիքինգի մասին արձանագրության 3(բ) հոդվածում նշվում է, որ մտադրված շահագործմանը մարդկանց թրաֆիքինգի գոհի կողմից համաձայնություն տալը էական նշանակություն չունի, եթե ակնհայտ է խաբեության, հարկադրանքի, ուժի կամ այլ արգելված միջոցների կիրառումը: Հետևաբար, համաձայնությունը չի կարող օգտագործվել որպես անձին քրեական պատասխանատվությունից ազատելու պաշտպանական միջոց:

Ինչ վերաբերում է երեխաների ներառող գործերին, ապա Թրաֆիքինգի մասին արձանագրությամբ ամրագրվում է, որ դա ցանկացած դեպքում թրաֆիքինգ է:

Համանման դրույթներ է պարունակում 2011/36/ԵՄ հրահանգի Հոդված 2-ը: Համաձայնությունն էական նշանակություն չունի, եթե այն ձեռք է բերվել «ուժի սպառնալիքով կամ ուժի կամ հարկադրանքի այլ միջոցների կիրառման, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը չարաշահելու կամ վճարումների կամ շահերի ձևով կաշառելու միջոցով»: Հոդված 2-ը շարունակում է, որ եթե ներգրավված է երեխա, ապա առանց այդ միջոցների կիրառման էլ գործողությունը ՄԹ-ի հանցանք է: Ինչպես արդեն նշվել է նախաբանում, եթե խնդիրն առնչվում է երեխայի, ապա ոչ մի հնարավոր համաձայնություն երբեք չպետք է համարվի վավեր:

Այս երկու դեպքն էլ արտացոլում են այն պարզ փաստը, որ որևէ անձ չի կարող տալ շահագործման ենթարկվելու համաձայնություն, քանի որ չափահասների պարագայում համաձայնություն տալու հանգամանքը հերքվել է ոչ պատշաճ միջոցներ կիրառելու պատճառով, իսկ երեխաների պարագայում նրանց խոցելի վիճակն ի սկզբանե անհնար է դարձնում համաձայնություն տալը: Համաձայնության հարցը բարդ է, քանի որ համաձայնությունը կարող է բազմաթիվ ձևեր ընդունել:

Ընդհանուր առմամբ, թրաֆիքինգի էությունն այն է, որ անձը հարկադրաբար կամ խաբեությամբ հայտնվում է այնպիսի իրավիճակում, երբ նրան շահագործում են: ՄԱԿ ՓԳՀ-ի՝ միջազգային պաշտպանության վերաբերյալ 2006 թվականի ապրիլի ուղեցույցում նշվում է.

«Այս սահմանման կարևոր հայեցակետը թրաֆիքինգի ընկալումն է որպես գործընթաց, որը բաղկացած է մի շարք փոխկապակցված գործողություններից, այլ ոչ թե որպես ժամանակի տվյալ պահին

կատարված մեկ գործողություն: Նախնական վերահսկողության ապահովման դեպքում գոհերին հիմնականում տեղափոխում են այնպիսի մի վայր, որտեղ շուկա կա նրանց ծառայությունների համար, որտեղ հաճախ նրանք չունեն լեզվական հմտություններ և այլ հիմնական գիտելիք, ինչը նրանց հնարավորություն կընձեռեր օգնություն փնտրել: Թեպետ այս գործողությունները կարող են տեղի ունենալ մեկ երկրի սահմաններում, դրանք կարող են նաև տեղի ունենալ երկրների սահմաններ հատելով, երբ գոհը հավաքագրվում է մի երկրում, իսկ նրան «ստանալու» և շահագործելու գործողությունը կատարվում է մեկ այլ երկրում: Անկախ այն բանից՝ միջազգային սահման հատվում է, թե ոչ, խնդրո առարկա անձին շահագործելու մտադրությունն ընկած է ողջ գործընթացի հիմքում»:

Համաձայնության օրինակ՝ Բելալի գործը

Բելան ապրում է Հարավային Ամերիկայի պետություններից մեկում և աշխատում որպես մարմնավաճառ:

Մի օր Բելալի կանոնավոր հաճախորդներից մեկը, որը պարբերաբար այցելում է նրան, երբ գործի բերումով այդ քաղաքում է լինում, Բելալին ասում է, որ նա կարող է շատ ավելի գումար վաստակել Հյուսիսային Ամերիկայի այն քաղաքում, որտեղ ինքն ապրում է: Այս հաճախորդը՝ Նիկը, նրան ասում է, որ իր քաղաքի մարմնավաճառները միշտ գնում են ակումբներ, շատ գումար վաստակում և շատ լավ ժամանակ անցկացնում: Նիկն ասում է, որ կգնի Բելալի ավիատոմսը, Բելան համաձայնում է և նոր քաղաք մեկնելու համար վիզա ստանում:

Նիկն օդանավակայանում դիմավորում է Բելալին, և Բելան մի քանի օր մնում է նրա տանը: Այսպես՝ մինչ այն պահը, երբ մի խումբ տղամարդիկ գալիս են՝ նրան տանելու նոր աշխատավայր: Նրանք Նիկին վճարում են 10 հազար ԱՄՆ դոլար և Բելալին տանում են քաղաքից դուրս գտնվող մի բնակավայր: Այնտեղ նրան գործի են դնում երեք հասարակաց տներում, որտեղ նա պետք է օրական ինը հաճախորդի հետ սեռական հարաբերություն ունենար: Հրաժարվելու դեպքում նրա պարտքն ավելացվում է:

Բելալի ծառայությունների դիմաց վճարվող ամբողջ գումարն անցնում է կամ հասարակաց տան տերերին, կամ նրան գնած տղամարդկանց: Նրան ասվում է, որ չի կարող գնալ, մինչև պարտքը չմարվի: Նա տեսնում է, թե ինչպես է բռնություն կիրառվում իր որոշ ընկերների նկատմամբ:



ՄԹ-ի երեք փուլերը

Նշումներ
վերապատրաս-
տողի համար

Այս բաժնում ներկայացվում են ՄԹ-ի տար-
բեր փուլերը, և նկարագրվում է, թե որ փու-
լում է սահմանապահների կողմից ՄԹ-ն
բացահայտելու (հայտնաբերելու) հավանա-
կանությունն առավել մեծ:

Մարդկանց թրաֆիքինգի գործընթացը սովորաբար բաղկացած է լինում երեք փուլից: Առաջին փուլում զոհերը հավաքագրվում են, երկրորդ փուլում՝ փոխադրվում, իսկ երրորդում՝ շահագործվում: Այս փուլերը կարող են մասնակիորեն կամ ամբողջապես համընկնել, կամ տեղի ունենալ այլ հերթականությամբ:

Հավաքագրման փուլում հանցագործներն օգտագործում են բազ-
մաթիվ մեթոդներ՝ մարդկանց հարկադրաբար թրաֆիքինգի կամ
խաբեությամբ ծուղակը գցելու: Որոշ դեպքերում մարդիկ առևանգվում
են կամ բռնության ենթարկվում: Այլ դեպքերում, այդուհանդերձ,
մարդկանց առաջարկվում է լավ աշխատանք և գայթակղիչ հնա-
րավորություններ, որոնք իրականում գոյություն չունեն, կամ որոնց
միջոցով նրանց պարտադրվում են շահագործող աշխատանքային
պայմաններ ու կենսապայմաններ:

Տարանցման (փոխադրման և տեղափոխման) փուլում զոհերը կարող
են տեղափոխվել ցամաքով, ծովով և (կամ) օդով, բացահայտ կամ
գաղտնի, խմբերով կամ միայնակ՝ օգտագործելով հանրային կամ
մասնավոր տրանսպորտային միջոցներ: Մարդիկ կարող են
թրաֆիքինգի ենթարկվել՝ օրինական կամ անօրինական ճանա-
պարհով երկրների սահմաններ հատելու միջոցով, իսկ այն դեպքերում,
երբ մարդիկ թրաֆիքինգի են ենթարկվում որևէ երկրի ներսում, որևէ
սահման չի հատվում:

Շահագործման փուլում զոհերը կարող են հարկադրաբար կատարել
ստորև թվարկված ցանկացած գործողություն (ոչ սպառիչ ցանկ)。

- ◆ մարմնավաճառություն և (կամ) սեռական ու գեղեցիկային հիմ-
քով շահագործում.
- ◆ աշխատանք այնպիսի վայրերում, ինչպիսիք են գործարանները,
ռեստորանները, ֆերմերային տնտեսությունները, տնկադաշ-
տերը, հանքերը կամ տները (որպես կենցաղում օգնականներ)՝
առանց հանգստի իրավունքի կամ հեռանալու հնարավոր-
ության.

- ◆ օրգանի հեռացում.
- ◆ մուրացկանություն, թմրամիջոցների ապօրինի վաճառք.
- ◆ ամուսնություն:

Թրաֆիքինգի որոշ դեպքեր կարող են ներառել տարանցման մի քանի փուլ և մեկից ավելի նպատակակետ: Դա նշանակում է, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք տեղափոխվում են երկրից երկիր: Այլ դեպքերում զոհերը հավաքագրումից հետո փոխանցվում կամ փոխադրվում են ուղիղ նպատակակետ վայր: Թրաֆիքինգը կարող է տեղի ունենալ անդրազգային կամ ներպետական մակարդակում: Վերջին դեպքում զոհերը հավաքագրվում և շահագործման են ենթարկվում իրենց ծագման երկրի կամ միևնույն երկրի սահմաններում:

Հավաքագրում

Այն գործընթացը, որի միջոցով անհատը դառնում է թրաֆիքինգի ենթարկված անձ, տարբերվում է դեպքից դեպք և կախված է թրաֆիքինգ իրականացնող անձանց գործելակերպից ու կազմակերպվածության մակարդակից: Կիրառվող մեթոդները ներառում են՝

- ◆ հարկադրանք¹², որի միջոցով անձն իր կամքին հակառակ ֆիզիկապես «վերցվում» է, կամ ինչը նշանակում է, որ համաձայնությունը ձեռք է բերվում բռնի միջոցներով, օրինակ՝ առևանգման, ուժի գործադրման սպառնալիքի կամ ուժի գործադրման, վաճառքի միջոցով.
- ◆ ամբողջությամբ խաբեության վրա հիմնված հավաքագրում, այսինքն՝ անձին տրվում են կեղծ տեղեկություններ այն մասին, թե նա ինչով է զբաղվելու նպատակակետ վայրում.
- ◆ մասամբ խաբեության վրա հիմնված հավաքագրում, այսինքն՝ անձին տեղեկացնում են, որ նա աշխատելու է անօրինական պայմաններում, սակայն չեն տեղեկացնում պլանավորված ծայրահեղ շահագործող կամ ստրկությանը նմանվող պայմաններին մասին:

Օրգանների թրաֆիքինգի դեպքում անձը զրկվում է իր օրգաններից առանց ճշգրիտ տեղեկություններ ստանալու կամ կանխամտածված սխալ տեղեկություններ ստանալով առողջության համար հնարավոր հետևանքների, ռիսկերի կամ վնասների մասին:

¹² Տե՛ս նաև Բառարանը:



Հավաքագրումը կարող է իրականացվել տարբեր եղանակներով:

- ◆ «Դոնեդուո» սկզբունքով աշխատող անհատ հավաքագրողների կողմից, ոչ ֆորմալ ցանցերի միջոցով, որոնք կարող են ներառել ազգականներին, զուգընկերներին ու ընկերներին, նույնիսկ պատասխանատու դիրք զբաղեցնող անձանց (օրինակ՝ իրեն որպես քահանա ներկայացնող անձ), լրատվամիջոցներում տեղադրվող գովազդների կամ օրինական կամ մասամբ օրինական միջնորդների միջոցով, ներառյալ աշխատանք, ուսում, ամուսնություն կամ արտասահմանում ճանապարհորդություն առաջարկող հավաքագրման գործակալությունները:
- ◆ Պոտենցիալ գոհը կարող է հավաքագրվել միգրացիոն գործընթացի ցանկացած փուլում՝ ծագման, տարանցման կամ նպատակակետ երկրում:
- ◆ Անհատները թրաֆիքինգ իրականացնող անձանց կողմից հավաքագրվում են իրենց ծագման երկրում և այնուհետև թրաֆիքինգի նպատակով տեղափոխվում են որևէ երկիր կամ մեկից ավելի երկրներ, որտեղ նրանք ենթարկվում են Թրաֆիքինգի մասին ՄԱԿ-ի արձանագրության մեջ նշված շահագործման ձևերից որևէ մեկին:
- ◆ Անհատները հավաքագրվում են իրենց երկրում և տեղափոխվում միևնույն երկրի սահմաններում որևէ այլ նպատակակետ վայր, որտեղ նրանք այնուհետ ենթարկվում են շահագործման (ներքին թրաֆիքինգ):
- ◆ Միգրանտներն իրենց կամքով լքում են իրենց երկիրը և մուտք են գործում մեկ այլ երկիր՝ օրինական կամ, ավելի հաճախ, անօրինական ճանապարհով (անօրինական ճանապարհով մուտք գործելու դեպքում նրանք կարող են վճարել որևէ «մաքսանենգի»)՝ իրենց մուտքը դուրսացնելու նպատակով). այնուհետ նրանք հայտնվում են թրաֆիքինգ իրականացնող անձանց վերահսկողության ներքո: Դրանից հետո նրանք թրաֆիքինգի են ենթարկվում կամ այն երկրում, որտեղ արդեն ժամանել են, կամ տեղափոխվում են մեկ այլ երկիր:
- ◆ Միգրանտները ժամանում են մեկ այլ երկիր և իրենք իրենց համար աշխատանք են գտնում, և միայն աշխատանքի անցնելուց հետո են ենթարկվում հարկադիր աշխատանքի. հարցը,

թե արդյոք այս իրավիճակը տեղավորվում է թրաֆիքինգի սահմանման ներքո, միանշանակ պատասխան չունի:

Բոլոր երեք իրավիճակները (հարկադրանք, ամբողջությամբ կամ մասամբ խաբեության վրա հիմնված հավաքագրում) ներառում են մարդու իրավունքների և աշխատանքային իրավունքների այս կամ այն աստիճանի խախտումներ: Հարկադիր աշխատանքի պարագայում պահանջվում է, որ քննություն իրականացնող մարմիններն ուշադրությունը կենտրոնացնեն անձի կամքը ճշելու նպատակով գործատուների կողմից կիրառվող հարկադրանքին:

Հարկադրանքի աստիճանը զգալիորեն տարբերվում է տարբեր դեպքերում. որոշ գոհեր մարմնական վնասվածք են ստանում, այլք գործնականում անտեղյակ են լինում, որ կատարում են հարկադիր աշխատանք, մինչև պարզում են, որ իրենց վարձատրելուց խուսափելու համար գործատուն օգտագործում է միգրանտի իրենց կարգավիճակը:

Տարանցում (փոխադրում և տեղափոխում)

Թրաֆիքինգի ենթարկված անձինք տեղափոխվում կամ փոխադրվում են իրենց ծագման վայրից, երկրի ներսում կամ երկրի սահմանը հատելու միջոցով, որպեսզի հեռացվեն իրենց համայնքից, ընտանիքից և ընկերներից: Բուն հեռավորությունից բացի ու դրանից առավել՝ նպատակը գոհերին մեկուսացնելը և հեշտությամբ վերահսկելն է: Այս փուլում, թրաֆիքինգ իրականացնող անձինք կարող են կիրառել վերահսկողության այնպիսի մեխանիզմներ, ինչպիսիք են անձնագիր բռնագրավելը, թմրամիջոցները, սպառնալիքները, բռնությունը և այլն: Տարանցման ժամանակ գոհերը կարող են թրաֆիքինգ իրականացնող մի անձի կողմից վաճառվել մյուսին՝ հաճախ առանց դրա մասին իմացության, և տեղափոխվել կամ փոխադրվել երկար տարածություններ: Ուղևորության ընթացքում գոհերը կամ տեղյակ չեն լինում, թե ինչ է իրենց սպասվում նպատակակետ վայրում, կամ, որոշ դեպքերում, թրաֆիքինգ իրականացնողներն սկսում են շահագործել նրանց մի վայրից մյուսը տեղափոխվելու ընթացքում:

Սահմանապահները, հնարավոր է, հանդիպեն արդեն իսկ շահագործման ենթարկված գոհերի, որոնց «թույլատրվում է» ճամփորդել, կամ որոնք հարկադրաբար տեղափոխվում են մեկ այլ երկիր:

Սահմանապահների առջև ծառացած մարտահրավերներից մեկն է՝ հայտնաբերել պոտենցիալ գոհերին, որպեսզի կանխվի հանցա-



գործություն կատարելու փորձը կամ բացահայտվի արդեն ընթացիկ հանցագործությունը:

Շահագործումը՝ որպես առանցքային տարր

Երբ գոհերը հասնում են նպատակակետ վայր, նրանք հանցավոր կազմակերպության համար դառնում են շրջանառու միջոց, քանի որ սկսում են շահույթ բերել իրենց շահագործողներին: Թրաֆիքինգ իրականացնող անձանց նպատակներն այս փուլում ամբողջությամբ իրագործվում են: Հանցագործների համար կարևոր է, որ նրանք կարողանան շարունակաբար վերահսկել իրենց գոհերին, մինչև կկարողանան շահույթ ստանալ՝ կանխելով փախուստի, ապստամբության կամ օգնության դիմելու բոլոր հնարավոր փորձերը: Փախուստը կանխելու նպատակով կիրառվող միջոցները ներառում են պարտքի պատճառով կախվածությունը (տե՛ս ստորև), սակայն կան նաև ավելի խիստ միջոցներ, ինչպիսիք են՝

- ◆ գոհի ընտանիքի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքները կամ բռնություն գործադրելը.
- ◆ հարկադրաբար անազատության մեջ պահելն անհայտ վայրերում.
- ◆ գոհի անձնագրի կամ անձը հաստատող մյուս փաստաթղթերի բռնագրավումը.
- ◆ հարկադրված թմրամոլությունը.
- ◆ թույլ չտալը, որ գոհերը նպատակակետ երկրներում կապեր հաստատեն, օգնություն գտնեն, տեղեկություններ ձեռք բերեն անձնական իրավունքների մասին (օրինակ՝ բնակության (կեցության) թույլտվության համար դիմելու իրավունք, աշխատանքի թույլտվություն ստանալու իրավունք և այլն).
- ◆ գտնվելու վայրը պարբերաբար փոխելը՝ գոհերի միջև անձնական կապերի ձևավորումը կանխելու նպատակով.
- ◆ ֆիզիկական բռնությունը.
- ◆ սննդից, ջերմությունից կամ քնից զրկելը.
- ◆ սպառնալը, ընտանիքներից մերժվելու կամ նրանց կողմից դատապարտվելու ռիսկը:

Թրաֆիքինգ իրականացնող անձինք իրենց գոհերի նկատմամբ կիրառում են նաև վերահսկողության ավելի մեղմ միջոցներ, որոնք հիմնված են առավելապես հոգեբանական կախվածության, այլ ոչ թե վախի վրա: Այս դեպքերում բռնության ակնառու նշաններ հայտնաբերելը հեշտ չէ: Օրենքի տեսանկյունից խոցելի վիճակը նույնպես շատ դեպքերում հիմնական միջոց է, որն օգտագործում են թրաֆիքինգ իրականացնող անձինք գոհերին վերահսկելու համար՝ վախեցնելով նրանց, որ վերջիններս խուսափեն հանցագործության մասին իրավապահ մարմիններին հայտնելուց՝ անկախ շահագործման իրավիճակից: Զոհերին վերահսկելու լայնորեն օգտագործվող միջոցներից մեկը պարտքի պատճառով կախվածությունն է: Այդպիսի գործելակերպի իրավական սահմանումը հետևյալն է¹³.

«Դրություն կամ իրավիճակ, որն առաջանում է, երբ պարտապանն իր անձնական կամ իր վերահսկողության տակ գտնվող անձի ծառայությունները «գրավ է դնում» որպես պարտքի մարման երաշխիք, եթե այդ ծառայությունների արժեքը, ողջամտորեն գնահատվելով, չի ուղղվում պարտքի մարմանը, կամ այդ ծառայությունների տևողությունը և բնույթը համապատասխանաբար սահմանափակված և սահմանված չեն»:

Զոհերից սովորաբար պահանջվում է հատուցել այն չափազանցված ծախսերը, որոնք, իբրև, կատարվել են՝ նրանց նպատակակետ վայր փոխադրելու համար: Պարտքին գումարվում են նաև չափազանցված տոկոսադրույքները, ինչպես նաև սննդի, կացարանի և հագուստի հետ կապված ծախսերի փոխհատուցման գումարները: Շատ հաճախ գումարները և տոկոսադրույքները թափանցիկ չեն: Թրաֆիքինգի ենթարկված անձինք սովորաբար չեն գիտակցում, որ այսօրինակ սխեման ունի չարաշահելու նպատակ և անօրինական է:

¹³ «Ստրկության, ստրկավաճառության և ստրկությանը համանման ինստիտուտների և սովորույթների վերացման մասին» լրացուցիչ կոնվենցիա (Ժնև, 1956 թվականի սեպտեմբերի 7):



ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՎ ՄԱՔՍԱՆԵՆԳ ՃԱՆԱՊԱՐՀՈՎ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹՅՈՒՆԸ

Նշումներ
վերապատրաստողի
համար

Այս բաժինը նպատակ ունի տարբերակելու մարդկանց թրաֆիքինգն այլ նմանատիպ հանցագործություններից, ինչպիսին մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխումն է: Թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով տեղափոխման տարբերությունների վերաբերյալ վարժության համար վերապատրաստողը կարող է օգտագործել առանձին դեպքերի ուսումնասիրություններ (հասանելի է նաև գործիքակազմում):

Ներածություն

Այն պայմաններում, երբ միգրացիոն հոսքերը հարաճուն կերպով միախառնվում են, փախստականները, տնտեսական միգրանտները և թրաֆիքինգի զոհերը չեն անցնում առանձին և անջատ ուղիներով, որտեղ նրանք կարող են հստակորեն և հեշտությամբ հայտնաբերվել: Նրանք հաճախ օգտագործում են միևնույն երթուղիներն ու միջոցները:

Այդպիսի բարդ իրադրությունում պետությունները պարտավոր են որքան հնարավոր է շուտ հայտնաբերել թրաֆիքինգի զոհերին՝ արդյունավետորեն պաշտպանելու նրանց իրավունքները, ներառյալ վերադարձվելուց պաշտպանված լինելու իրավունքը, այսինքն՝ հետապնդման վայր չվերադարձվելու իրավունքը:

Թրաֆիքինգ, թե՛ մաքսանենգ ճանապարհով փոխադրում

Կարող է թվալ, թե մարդկանց թրաֆիքինգը և մաքսանենգ ճանապարհով միգրանտների փոխադրումը նույն երևույթն են, սակայն դա այդպես չէ: Այն դեպքերում, երբ մարդկանց թրաֆիքինգի զոհերն օտարերկրացիներ կամ փաստաթղթային խնդիրներ ունեցող անձինք են, իրավապահ մարմինների աշխատակիցները հաճախ կարող են եզրակացնել, որ նրանք անկանոն կարգավիճակ ունեցող միգրանտներ են, այլ ոչ թե հանցագործության զոհեր, և որ ներգրավված հանցագործը մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխող անձ է, այլ ոչ թե մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձ: Այդպիսի եզրակա-

ցույթյունների պատճառով հնարավոր է, որ թրաֆիքինգի հետ կապված քննություն չիրականացվի, գոհերն օգնություն չստանան, և (կամ) իրավախախտների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացվի այնպես, ինչպես հարկն է:

Հնարավոր է՝ շատ դժվար լինի տարբերակել մարդու թրաֆիքինգը մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխելուց, քանի որ երկու դեպքում էլ անձինք կարող են անօրինական կերպով տեղաշարժվել երկրից երկիր: Դա մտահոգության առարկա է հատկապես սահմանի վրա, որտեղ ծրագրված կամ փաստացի շահագործումը հայտնաբերելը հաճախ լուրջ մարտահրավեր է:

Մարդկանց թրաֆիքինգի փորձը սահմանին կանխելու դեպքում թրաֆիքինգի ենթարկվող անձին, հնարավոր է, դեռևս վնաս պատճառված չլինի, և հնարավոր է՝ շահագործում դեռևս տեղի ունեցած չլինի: Դա սահմանապահ մարմինների աշխատակիցներին մարդու թրաֆիքինգը կանխելու հնարավորություն է ընձեռում, ինչը միշտ էլ ավելի լավ է, քան փորձելը դրա դեմ պայքարել կատարվածից հետո:

Թրաֆիքինգ իրականացնող ձեռքակալված անձինք հաճախ փորձում են մարդու թրաֆիքինգի դեպքը ներկայացնել որպես մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխելու, սահմանի ապօրինի հատման կամ անօրինական կերպով երկրում գտնվելու դեպք, որպեսզի կանխեն համապարփակ քննությունը: Հնարավոր է՝ գոհերը կարծեն, որ իրենց մաքսանենգ ճանապարհով տեղափոխում են, նույնիսկ եթե իրականում թրաֆիքինգի ենթարկվելիս լինեն:

Մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու նպատակը մարդկանց անօրինական կերպով երկրից երկիր անցկացնելն է, և դա համարվում է պետական ինքնիշխանության խախտում: Մարդկանց թրաֆիքինգի նպատակը շահույթ կամ այլ օգուտներ ստանալու նպատակով մարդուն շահագործելն է, և դա համարվում է տվյալ անձի ազատության ու անձեռնմխելիության խախտում:

Կարելի է նշել մի շարք գործոններ, որոնք օգնում են տարբերակել մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը թրաֆիքինգից: Նախ և առաջ, թրաֆիքինգի դեպքում գոհի մուտքը երկիր կարող է լինել օրինական կամ ապօրինի, մինչդեռ մաքսանենգ ճանապարհով տեղափոխմանը հատուկ է ապօրինի մուտքը: Երկրորդ, թրաֆիքինգը կարող է տեղի ունենալ ինչպես որևէ պետության սահմանների ներսում, այնպես էլ այդ սահմաններից դուրս, մինչդեռ անօրինական



ճանապարհով տեղափոխման համար անհրաժեշտ է միջազգային տեղաշարժ: Երրորդ, չափահասների պարագայում թրաֆիքինգն իրականացվում է հարկադրանքի և (կամ) խաբեության միջոցով, մինչդեռ անօրինական ճանապարհով տեղափոխման դեպքում դա այդպես չէ, ինչը վկայում է մաքսանենգ ճանապարհով տեղափոխվող անձանց կամավոր գործողության մասին: Թրաֆիքինգը նաև ներառում է մարդկանց հետագա շահագործում, մինչդեռ անօրինական ճանապարհով տեղափոխող անձանց ծառայությունները սովորաբար ավարտվում են այն ժամանակ, երբ մարդիկ հասնում են իրենց նպատակակետ երկիր:

Մաքսանենգ ճանապարհով տեղափոխման և թրաֆիքինգի միջև տարբերությունը կարող է հստակ չլինել: Իհարկե, լինում են թրաֆիքինգի և անօրինական ճանապարհով տեղափոխման «մաքուր» դեպքեր, օրինակ՝ առևանգված երեխաների, ի սկզբանե խաբված միգրանտ աշխատողների պարագայում, կամ մյուս կողմից՝ անդրասահմանային փոխադրման միանգամայն թափանցիկ համաձայնությունների դեպքը, երբ կա փոխադարձաբար համաձայնեցված վարձավճար, և փոխադրողի ու փոխադրվողի հարաբերություններն ավարտվում են: Այդուհանդերձ, մեկնելու պահին և ուղևորության տարբեր փուլերում կարող է բոլորվին էլ հստակ չլինել, թե տվյալ պարագայում ինչի հետ գործ ունենք՝ թրաֆիքինգի, թե՛ մաքսանենգ ճանապարհով տեղափոխման: Հարկ է նշել, որ մաքսանենգ ճանապարհով տեղափոխող անձինք նույնպես, հնարավոր է, խախտեն միգրանտների իրավունքները, մասնավորապես՝ սեռական բռնության, սովի մատնելու և այլ միջոցներով: Փաստաթղթային խնդիրներ ունեցող տեղափոխվող միգրանտների մեծամասնությունը, թեև այս կամ այն կերպ համաձայնություն տալիս է ճամփորդելու նախնական առաջարկին, սակայն հաճախ ճանապարհին կամ նպատակակետ երկիր ժամանելուց հետո հանգամանքները փոխվում են: Եվ, մինչև մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը համարվում է հանցագործություն, թրաֆիքինգը և՛ լուրջ հանցագործություն է, և՛ մարդու իրավունքների խախտում:

Մարդկանց թրաֆիքինգի աշխարհագրությունը

Նշումներ վերապատրաստողի համար	Վերապատրաստման այս բաժինը նպատակ ունի սահմանապահներին թրաֆիքինգի մի-գրացիոն ուղիների, «վանող և ձգող» (“push and pull”) գործոնների և ռիսկերի մասին գիտելիք փոխանցելու: Բաժնի խնդիրն է սահմանապահների համար առանձնանշել իրենց երկրում շարժի մի-տումները՝ թե որտեղից են զոհերը գալիս և ուր են գնում:
Հղումներ	Եվրոպական հանձնաժողովի կայքը թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ. http://ec.europa.eu/anti-trafficking/index.action

Վարժություն

- ◆ Ի՞նչ է նշանակում «ծագման երկիր», «տարանցման երկիր» և «նպատակակետ երկիր»:
- ◆ Թվարկված երեք կատեգորիայից որի՞ն է պատկանում Ձեր երկիրը՝ թրաֆիքինգի ենթարկված անձանց համար ծագման, տարանցման, թե՛ նպատակակետ երկիր է:
- ◆ Ի՞նչ գործոններ են ազդում Ձեր երկրի՝ որպես թրաֆիքինգի ենթարկված անձանց համար ծագման, տարանցման կամ նպատակակետ երկրի կարգավիճակի վրա:
- ◆ Ի՞նչ երթուղիներ են ընտրում թրաֆիքինգ իրականացնող անձինք Ձեր երկրում:
- ◆ Ձեր երկրի դեպքում որտեղի՞ց են գալիս զոհերը: Ո՞ր են գնում:
- ◆ Շարժի ի՞նչ միտումներ են բնորոշ Ձեր երկրին մարդկանց թրաֆիքինգի առումով: Շարժի այս միտումները կամավոր, թե՛ ոչ կամավոր են:
- ◆ Որո՞նք են մարդկանց թրաֆիքինգին նպաստող՝ «վանող և ձգող» գործոնները:



Մարդկանց թրաֆիքինգը համաշխարհային է

Եվրոպական հանձնաժողովի՝ թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող կայքում նշվում է, որ ՄԹ-ն համաշխարհային երևույթ է. գրեթե յուրաքանչյուր երկիր ծագման, տարանցման կամ նպատակակետ երկիր է, երբեմն նաև՝ երեքը միասին:

- ◆ Թրաֆիքինգը մեծ մասամբ ազգային կամ տարածաշրջանային երևույթ է, թեև հայտնի են նաև մեծ հեռավորություններ ենթադրող (մայրցամաքների միջև) դեպքեր:
- ◆ Գլխավորապես Եվրամիությունն է նպատակակետ տարածաշրջան աշխարհի տարբեր կողմերից ծագող զոհերի համար: Զոհերը նաև հավաքագրվում են ԵՄ երկրներում և թրաֆիքինգի ենթարկվում կամ կոնկրետ երկրի ներսում, կամ այլ երկրում՝ ԵՄ տարածքում կամ դրանից դուրս:

Օգտակար հղումներ, որոնք կարող են նպաստել սահմանապահների տեղեկացվածությանը.

- ◆ <http://human.globalincidentmap.com>
- ◆ <http://www.mapsofworld.com/thematic-maps/illicit-trafficking-map.html>
- ◆ <http://www2.ohchr.org/english/issues/trafficking/index.htm>
- ◆ <http://ec.europa.eu/anti-trafficking/index.action>
- ◆ <http://www.state.gov/> (Միացյալ Նահանգների պետական դեպարտամենտի կայքը, մուտքագրելք «trafficking» հիմնաբառը)
- ◆ <https://www.europol.europa.eu> (մուտքագրելք «trafficking» հիմնաբառը)
- ◆ <http://www.iom.int/> (ՄՄԿ կայքը՝ առանձին երկրների մասին տեղեկություններով, մուտքագրելք «trafficking» հիմնաբառը)
- ◆ <http://ungift.org/knowledgehub>
- ◆ <http://www.unodc.org/unodc/en/human-trafficking/>

Երեխաների թրաֆիքինգ. ներածություն

Նշումներ
վերապատրաստողի
համար

Սահմանապահները պետք է հասկանան՝ անհնար է, որ երեխան (18 տարին չլրացած ցանկացած անձ) գիտակցված համաձայնություն տա: Նույնիսկ այն դեպքում, երբ երեխան հասկանում է, թե ինչ է տեղի ունեցել, նա, միևնույն է, հնարավոր է ինքնակամ ենթարկվի, իր համոզմամբ, ծնողների կամ ուղեկցող չափահասների կամքին:

Թիրախ հանդիսացող երեխաների վերաբերյալ բաժինը նպատակ ունի սահմանապահներին փոխանցելու անհրաժեշտ բազային գիտելիք, որպեսզի նպաստի թրաֆիքինգի պոտենցիալ զոհերին հայտնաբերելու կարողության զարգացմանը: Այդ բաժինը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու այն համայնքների և ընտանիքների մասին, հատկապես որոնք, հնարավոր է, թրաֆիքինգ իրականացնող անձանց թիրախ դառնան՝ շահագործման նպատակով:

Վերապատրաստվողները պետք է գրատախտակին թվարկեն շահագործման հնարավոր տեսակներն ու թիրախային խմբերը:

Հղումներ

Ուսումնական ձեռնարկ աշխատանքային, սեռական և այլ տեսակի շահագործման նպատակով երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ, ԱՄԿ և ՅՈՒՆԻՍԵֆ

Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների պաշտպանության վերաբերյալ ուղեցույց, ՅՈՒՆԻՍԵֆ

Տեղեկատու ձեռնարկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար՝ երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի լավագույն փորձի վերաբերյալ, ՄՄԿ, Վիեննա, մարտ, 2006 թ.

Երեխաների թրաֆիքինգը ԵՄ-ում. մարտահրավերներ, հեռանկարներ և լավագույն փորձ [http://fra.europa.eu/fraWebsite/attachments / Pub_Child_Trafficking_09_en.pdf](http://fra.europa.eu/fraWebsite/attachments/Pub_Child_Trafficking_09_en.pdf)



Ներածություն

Մարդկանց թրաֆիքինգի և, հատկապես, երեխաների թրաֆիքինգի խնդիրն ավելի քան մեկ տասնամյակ միջազգային օրակարգում առաջնային տեղ է զբաղեցրել: 2011/36/ԵՄ հրահանգում «երեխա» կամ «երեխաներ» բառն օգտագործվում է 65 անգամ: Երեխաների թրաֆիքինգը մարդու իրավունքների լուրջ խախտում է: Միջազգային հանրությունն, այդուհանդերձ, միայն վերջերս է ճանաչել, որ երեխաների թրաֆիքինգն անժխտելիորեն նաև աշխատանքային խնդիր է:

Մինչ մարդկանց մեծամասնությունն այսօր տեղյակ է, որ աշխարհով մեկ երեխաները և կանայք (իսկ երբեմն՝ տղաներն ու տղամարդիկ) թրաֆիքինգի են ենթարկվում սեռական ծառայությունների կոմերցիոն շահագործման նպատակով, երեխաների՝ շահագործման չենթարկվելու իրավունքը խախտվում է բազմաթիվ այլ եղանակներով: Երեխաներին հաճախ թրաֆիքինգի են ենթարկում գյուղատնտեսության ոլորտում աշխատանքային շահագործման համար՝ և՛ երկարաժամկետ, և՛ սեզոնային հիմունքներով: Նրանք, հնարավոր է, ծանր աշխատանք կատարեն վերամշակող արդյունաբերության տարբեր ճյուղերում՝ սկսած աշխատանքային իրավունքի կանոնների խախտումներով գործող խոշոր ձեռնարկություններից, մինչև փոքր արհեստանոցները: Աշխարհի որոշ հատվածներում երեխաներին շահագործում են հանքագործության և ձկնորսության ոլորտներում: Աղջիկները, մասնավորապես, թրաֆիքինգի են ենթարկվում երեխայի աշխատանքը կենցաղում օգտագործելու միջոցով: Երեխաներին թրաֆիքինգի են ենթարկում նաև հակամարտության գոտում գինված խմբավորումներում ու հրոսակախմբերում ընդգրկելու նպատակով, և թեև դա գուցե ուղղակի իմաստով «աշխատանք» չէ, այնուամենայնիվ, փաստ է, որ երեխաներին գործնականում այդպիսի իրավիճակներում աշխատեցնում են ոչ միայն որպես զինվորներ, այլև նրանք գործի են դրվում կերակրի պատրաստման գործում, սուրհանդակի գործառույթներ կատարում, իսկ հատկապես աղջիկներին օգտագործում են չափահաս մարտիկներին սեռական բնույթի ծառայություններ մատուցելու նպատակով:

Շատ երեխաների հեռացում են իրենց տնից և շահագործում ստվերային տնտեսություններում, որտեղ նրանց հետքը էլ ավելի դժվար է գտնել, և նրանք ենթակա են բռնության տարբեր ձևերի ենթարկվելու վտանգին: Հանցավոր ցանցերը և անհատները

երեխաներին շահագործում են մուրացկանության, փողոցային առևտրի, ավտոմեքենաների ապակիների լվացման մեջ և փողոցային այլ գործերում: Որոշ երեխաների շահագործում են թմրամիջոցների առաքման կամ վաճառքի նպատակով կամ ներգրավելով մանր ավագակային հանցագործություններում, ինչպիսիք են գրպանահատությունը կամ հափշտակությունը: Այդպիսի գործողությունների մի մասը գուցե և ուղղակիորեն որպես «աշխատանք» չի ընկալվում: Իրականում, սակայն, դրանց պարագայում առկա է առևտրային շահադրդում, և թրաֆիքինգի միջոցով շահույթ ստանալու նպատակ հետապնդող անձանց կողմից երեխան դիտվում է որպես շահագործման համար հեշտ որս: Առևտրային այդ նույն շարժառիթներն ընկած են նաև որդեգրման նպատակով մանկահասակ երեխաների թրաֆիքինգի հիմքում, և թրաֆիքինգի դեմ պայքարում կարևոր նշանակություն ունի հավաքագրման գործակալությունների գրանցումն ու մոնիտորինգը: Նմանապես, մանկահասակ երեխաների թրաֆիքինգը կանխարգելելու գործում կարևոր է որդեգրման հարցերով գործակալությունների գրանցումը և մոնիտորինգը:

Երեխաների թրաֆիքինգ

Մարդկանց՝ ինչպես երեխաների, այնպես էլ չափահասների թրաֆիքինգը մարդու իրավունքների կոպիտ խախտում է: Դեռևս չափահաս տարիքի չհասած անձանց դեպքում խախտվում են նաև նրանց՝ որպես երեխաների իրավունքները և մասնավորապես՝ շահագործումից պաշտպանված լինելու իրավունքը:

Միավորված ազգերի կազմակերպության «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի (1989 թվական) համաձայն՝ «երեխա է համարվում 18 տարին չլրացած յուրաքանչյուր մարդկային էակ, եթե նրա նկատմամբ կիրառվող օրենքով նա չափահասության չի հասնում ավելի վաղ»: Թեև իրականում երեխայի պաշտպանությամբ զբաղվողների մեծամասնությունը համարում է, որ 18 տարեկանը պետք է համարվի «իդեալական» տարիքը՝ որպես մանկության ավարտի սահմանագիծ, կարևոր է, թե ինչպես է «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայում ամրագրված այս սահմանումը, քանի որ գործնականում շատ երկրներում չափահասության տարիք է սահմանվել 18 տարեկանից ցածր տարիք: Իրավագործության առումով, շատ դեպքերում, եթե ոչ՝ մեծ մասամբ, «չափահասությունը» միասնական հասկացություն չէ, այլ տարբերվում է ըստ կոնկրետ գործողությունների. օրինակ՝ սեռական ակտիվությանը տրվող համաձայնության



առումով չափահասության տարիքը կարող է տարբերվել բանակում ծառայելու կամ գույք ձեռք բերելու համար սահմանված չափահասության տարիքից: Բացի դրանից, չափահասության տարիքը երբեմն տարբեր է լինում աղջիկների և տղաների համար, օրինակ՝ ամուսնության համաձայնություն տալու առումով: Դա կարևոր հետևանքներ ունի ազգային օրենսդրության առումով (օրինակ՝ միգրացիայի կամ այլ անձանց մարմնավաճառության շահագործման առնչությամբ), թեև եթե երկիրը «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին» ԱՄԿ-ի 1999 թվականի թիվ 182 կոնվենցիայի (Կ182) և (կամ) ՄԹ-ի մասին ՄԱԿ-ի արձանագրության մասնակից է, ապա, մասնավորապես թրաֆիքինգի առումով, այն երեխա պետք է համարի 18 տարին չլրացած ցանկացած անձի: Այս երկու միջազգային փաստաթղթերով չի թույլատրվում սահմանման որևէ տարամետություն:

- ◆ Կ182-ի համաձայն՝ «երեխա» եզրույթը կիրառվում է 18 տարին չլրացած բոլոր անձանց նկատմամբ:
- ◆ ՄԹ-ի մասին ՄԱԿ-ի արձանագրության համաձայն՝ «երեխա» պետք է համարվի 18 տարին չլրացած ցանկացած անձ:

Թեև ՄԹ-ի մասին ՄԱԿ-ի արձանագրությունն ըստ հարկի վերաբերում է միայն թրաֆիքինգի այն դեպքերին, ա) որոնք անդրազգային են, և բ) որոնցում ներգրավված են կազմակերպված հանցավոր խմբեր (սահմանվում են որպես «երեք կամ ավելի անձանց խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածի ընթացքում, և որի գործողությունները համաձայնեցված են»), սակայն թրաֆիքինգի՝ դրանով տրված սահմանումն այժմ լայնորեն ընդունված է և կիրառվում է այդ չափորոշիչների բացակայության դեպքում նույնպես:

- ◆ 3(ա) հոդվածով մարդկանց թրաֆիքինգը սահմանվում է որպես «Շահագործման նպատակով մարդուն հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը, ստանալը կամ շահագործման վիճակի մեջ դնելը կամ պահելը՝ բռնություն գործադրելով կամ դա գործադրելու սպառնալիքով կամ հարկադրանքի այլ ձևերով, առեւանգման, խաբեության կամ վստահությունը չարաշահելու, իշխանությունը կամ վիճակի խոցելիությունը օգտագործելու կամ նրան վերահսկող անձի հետ համաձայնություն ձեռք բերելու նպատակով նյութական կամ այլ օգուտ տալու կամ ստանալու միջոցով»: Շահագործումն առնվազն ներառում է այլ անձանց պոռնիկության շահագործումը

կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, անազատ վիճակը կամ օրգանների հեռացումը:

- ◆ Ըստ 3(բ) հոդվածի՝ «համաձայնությունը», օրինակ՝ պոռնկությամբ զբաղվելու, էական նշանակություն չունի այն դեպքում, երբ օգտագործվել է 3(ա) հոդվածում թվարկված ցանկացած միջոց:
- ◆ Ըստ 3(գ) հոդվածի՝ «շահագործման նպատակով երեխային հավաքագրելը, փոխադրելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը» համարվում է թրաֆիքինգ, եթե նույնիսկ չի օգտագործվել 3(ա) հոդվածում թվարկված ոչ մի միջոց:

Այսպիսով, կարճ ասած, երեխաների թրաֆիքինգի լայնորեն ընդունված, հակիրճ սահմանումն է «երեխային շահագործման նպատակով հավաքագրելը, փոխադրելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը»:

ԱՄԿ-ն կատարել է այս սահմանման գործառնական մասնատում, որի համաձայն երեխաների թրաֆիքինգը և շահագործումը ներկայացվում է հետևյալ կերպ.

Երեխաների թրաֆիքինգ.

- ◆ երեխա՝ 18 տարին չլրացած անձ.
- ◆ հավաքագրելու, փոխադրելու, փոխանցելու, թաքցնելու կամ ստանալու գործողություններ երրորդ անձի կամ խմբի կողմից՝ ուժի գործադրմամբ կամ առանց դրա.
- ◆ երրորդ անձը կամ խումբը կազմակերպում է հավաքագրումը և (կամ) նշված մյուս գործողությունները՝ շահագործման նպատակներով.
- ◆ տեղաշարժը՝ իրավապահ գործողությունների և քրեական հետապնդման կտրվածքով, հնարավոր է թրաֆիքինգի բաղկացուցիչ տարր չլինի:



Շահագործումը ներառում է՝

- ա) ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը նմանվող վիճակը, պարտքի պատճառով կախվածությունն ու կախյալ վիճակը և հարկադիր կամ ստիպողական աշխատանքը, ներառյալ երեխաների հարկադիր կամ ստիպողական հավաքագրումը՝ զինված ընդհարումներում օգտագործելու նպատակով (Կ182, 3(ա) հոդված)։
- բ) պոռնկության, պոռնկագրական նյութերի արտադրության նպատակով երեխային օգտագործելը, գնելը կամ առաջարկելը (Կ182, 3(բ) հոդված)։
- գ) հակահրավական գործունեությամբ զբաղվելու նպատակով երեխաներին օգտագործելը, գնելը կամ առաջարկելը, մասնավորապես՝ թմրամիջոցների արտադրության և թրաֆիքինգի համար, ինչպես սահմանված է համապատասխան միջազգային պայմանագրերում (Կ182, 3(գ) հոդված)։
- դ) այն աշխատանքը, որն իր բնույթից կամ իրականացման հանգամանքներից ելնելով, ամենայն հավանականությամբ, վնաս կհասցնի երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը (Կ182, 3(դ) հոդված և «Նվազագույն տարիքի մասին» ԱՄԿ թիվ 138 կոնվենցիա (Կ138), 3-րդ հոդված)։
- ե) աշխատանքի ընդունելու նվազագույն տարիքից փոքր երեխաների կատարած աշխատանքը (Կ138, 2-րդ և 7-րդ հոդվածներ)։

Իսկ համաձայնությամբ խնդիրը: 2011/36/ԵՄ հրահանգում հստակ ամրագրված է, որ երեխաների պարագայում հավաքագրման և տեղաշարժման ցանկացած փուլում ուժ գործադրելու սպառնալիքի կամ ուժ գործադրելու կամ հարկադրանքի այլ ձևերի, առևանգման, խարդախության կամ խաբեության կամ իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահման առկայությունը պարտադիր չէ:

Համաձայնությունն էական նշանակություն չունի. ըստ սահմանման՝ երեխան չի կարող համաձայնություն տալ շահագործվելուն:

Այդպիսով, թրաֆիքինգը տեղի է ունենում, երբ անձը մեկ այլ անձի կամ խմբի կողմից տեղափոխվում է մի վայրից մեկ այլ վայր՝ երկրի ներսում կամ երկրի սահմաններից դուրս՝ հայտնվելով այնպիսի իրավիճակում, որում ենթարկվում է շահագործման: Շահագործումը

կարող է ունենալ մի շարք տարբեր ձևեր, սակայն սովորաբար ներառում է տաժանակիր, վտանգավոր աշխատանք՝ ցածր վարձատրությամբ կամ առանց վարձատրության, հանգստի համար ոչ բավարար ժամանակի տրամադրմամբ, առանց այնպիսի ապահովության համակարգերի, ինչպիսիք են, օրինակ, առողջության ապահովագրությունը կամ սոցիալական աջակցությունը, և հաճախ՝ որոշակի ուժի կամ բռնության գործադրմամբ:

Թիրախ հանդիսացող երեխաներ

Երբ երեխաները տեղափոխվում են, կամ նրանց տեղափոխում են, քանի որ երեխա են՝ նրանք հատուկ պաշտպանության իրավունք ունեն, բացի այն պաշտպանությունից, որը պետք է ակնկալեն բոլոր անձինք՝ աշխատանք փնտրելու կամ ավելի բարեկեցիկ կյանք ունենալու նպատակով օրինական ճանապարհով տեղաշարժվելու դեպքում: Դա ներառում է առանց շահագործման ենթարկվելու աշխատելու ազատությունը (երբ լրացել է աշխատելու համար օրենքով սահմանված նվազագույն տարիքը, ինչպես նաև, առնվազն մինչև այդ տարիքի հասնելը, դպրոցում ուսանելու իրավունքը), առողջ լինելու իրավունքը և վատ վերաբերմունքի չենթարկվելու իրավունքը, աշխատանքի միջազգային չափանիշներին համապատասխան՝ պատշաճ աշխատանքի իրավունքը և մարդու իրավունքների միջազգային ու ազգային պայմանագրերում և ազգային օրենքներում ու ստանդարտներում ամրագրված այլ ազատություններ: Բոլոր դեպքերում պետք է հաշվի առնվեն նրանց լավագույն շահերը:

Թրաֆիքինգ իրականացնող անձինք որպես թիրախ հատուկ ընտրում են աղքատ համայնքները՝ նրանց խոցելիությունից օգտվելու համար: Հնարավոր է՝ աղքատ և տեղահանված ընտանիքներն իրենց երեխաների խնամքը վստահեն թրաֆիքինգ իրականացնող անձանց, որոնք խոստանում են նրանց ապահովել կրթությամբ կամ մասնագիտական ուսուցման հնարավորությամբ, սակայն իրականում շահագործում են նրանց: Կարևոր է գիտակցել, որ ծնողները և ազգականները կարող են ներգրավված լինել երեխայի շահագործման մեջ, և որ, ամենայն հավանականությամբ, երեխաները շատ հավատարիմ կլինեն իրենց ծնողներին կամ խնամողներին: Հնարավոր չէ ակնկալել, որ երեխան իր նախաձեռնությամբ կձգտի պաշտպանվել այդ անձանցից: Երեխաները, որոնք, հնարավոր է, թրաֆիքինգի զոհ լինեն, հաճախ խիստ զուսպ են տեղեկություններ հաղորդելու առումով



և իրենց պատմությունները պատմում են ակնհայտ սխալներով: Շատ դեպքերում դա տեղի է ունենում, քանի որ նրանց պատմությունները կազմում են այլ անձինք, իսկ նրանք սովորում են դրանք:

Ներքին տեղահանման ենթարկված՝ առանց ուղեկցության երեխաները, ընտանիքի գլխավոր հանդիսացող երեխաները, ընտանիքի գլխավոր հանդիսացող միայնակ (հատկապես իզական սեռի) անձինք, երիտասարդ աղջիկները, ապաստան հայցող և փախստական՝ տեղաշարժի մեջ գտնվող երեխաներն ու թրաֆիքինգի նախկին զոհերը կամ թրաֆիքինգ վերապրած անձինք հատկապես խոցելի են թրաֆիքինգի ենթարկվելու ռիսկի առումով: Հազվադեպ չեն այն դեպքերը, երբ նախքան թրաֆիքինգի իրավիճակում հայտնվելը մարդկանց թրաֆիքինգի զոհերը որևէ հանցագործության զոհ են եղել, մասնավորապես՝ ենթարկվել են սեռական ոտնձգության և ֆիզիկական բռնության: Հայտնի է նաև, որ թրաֆիքինգ իրականացնող անձինք զոհերին ընտրում են խոցելի խմբերից, ինչպիսիք թմրամիջոցներից կախվածություն ունեցող, մտավոր առողջության խնդիրներով կամ ուսումնական հատուկ կարիքներով անձանց խմբերն են:

Անձին թրաֆիքինգի ենթարկելու գործընթացին բնորոշ է այն, որ թրաֆիքինգ իրականացնող անձը պոտենցիալ զոհին առաջարկում է նրա վիճակը բարելավելու հնարավորություն: Սովորաբար լինում է որոշակի բարելավում, ինչը զոհի կամ նրա ընտանիքի համար որպես օգուտ է ներկայացվում: Հաճախ մարդկանց խոցելի խմբերն են դիտարկվում որպես թիրախ, քանի որ նրանց դեպքում ավելի հեշտ է հարկադրաբար այնպիսի իրավիճակ ստեղծել, երբ նրանց կարելի է մանիպուլյացիայի ենթարկել:

Երեխաներ. շահագործման ձևերը

Երեխայի շահագործումը կարող է շատ ձևեր ընդունել՝ կախված երեխայի սեռից, տարիքից, այն աշխատանքային շուկայի բնույթից, որում նա ներգրավվել է թրաֆիքինգի միջոցով, նրա հմտություններից, ինչպես նաև նրա խոցելիությունից:

Թեպետ թրաֆիքինգի կարող են ենթարկվել թե տղաները, թե աղջիկները, թրաֆիքինգի ենթարկված երեխաների նկարագիրը (պրոֆիլը) տարբերվում է՝ ըստ նպատակակետ վայրում գոյություն ունեցող պահանջարկի: Նկարագիրը (պրոֆիլը) կարող է փոխվել նաև երեխայի մեծանալուն զուգահեռ: Օրինակ՝ որոշ շրջաններում և՛ տղաները, և՛ աղջիկները թրաֆիքինգի են ենթարկվում գյուղական

կամ կիսաքաղաքային շրջաններից դեպի «մեծ քաղաքներ»՝ երեխայի աշխատանքը կենցաղում օգտագործելու համար: Տղաները, սակայն, դեռահասության հասնելով՝ հաճախ կենցաղային աշխատանքի փոխարեն կարող են սկսել շահագործվել գյուղատնտեսության, վերամշակման կամ ծառայությունների ոլորտում: Աղջիկների դեպքում երեխայի աշխատանքը կենցաղում ավելի երկար օգտագործելու հավանականությունն ավելի մեծ է:

- ◆ Սեռական շահագործում. ամբողջ աշխարհում աղջիկներն ու կանայք հատկապես խոցելի են մարմնավաճառության նպատակով թրաֆիքինգի ենթարկվելու տեսանկյունից: Դա տեղի է ունենում, քանի որ ամբողջ աշխարհում սեքս-ինդուստրիան զարգացող և շահութաբեր շուկա է, և քանի որ հաճախ առկա է այնպիսի աղջիկների և կանանց պահանջարկ, որոնք ինչ-որ կերպ «տարբերվում են» կամ «էկզոտիկ» են՝ սեռական առևտրի հաճախորդների և հասարակաց տների սեփականատերերի ու նրանց ծառայություններ մատուցող կավատների համեմատությամբ:
- ◆ 18 տարին չլրացած երեխաների պոռնկությունը համարվում է երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերից մեկը և, ընդհանուր առմամբ, կոչվում է «առևտրային նպատակով երեխաների սեռական շահագործում»: Կ182-ի համաձայն՝ դա պետք է արգելվի և վերացվի: Դրա մեջ ներգրավված երեխաները ենթարկվում են դաժան շահագործման: Այն պայմանները, որոնք, հնարավոր է, նրանց խոստացել են, մասնավորապես՝ կապված աշխատավարձի, աշխատանքային ժամերի, աշխատանքի բնույթի և ըստ ցանկության հեռանալու հնարավորության հետ, հաճախ չեն ապահովվում: Նրանց կարող են պահել իրենց կամքին հակառակ, երբ հասարակաց տան կառավարիչը կամ կավատը հրաժարվում է նրանց վերադարձնել անձնագիրը: Հնարավոր է՝ նրանց ասեն (ճշմարիտ կամ ոչ), որ նրանք երկիր են մուտք գործել կեղծ փաստաթղթերով և որ իրենց շահագործման մասին հայտնելու դեպքում ոստիկանության հետ խնդիրներ կունենան: Նրանց հաճախ սովորեցնում են թմրամիջոցներ օգտագործել, ու նրանք ստիպված են լինում շարունակել աշխատել՝ ձեռք բերելու այն նյութերը, որոնցից կախվածություն են ձեռք բերել, և սա հարկադիր աշխատանքի ձև է: Եվ իրական բռնությունը, և դրա



սպառնալիքը նույնպես զսպող միջոց են փախչել ցանկացողների համար: Թեև, ըստ վիճակագրության, սեռական շահագործման նպատակով թրաֆիքինգի զոհ դառնում են հիմնականում աղջիկները և կանայք, տղաներն ու երիտասարդ տղամարդիկ նույնպես ենթարկվում են թրաֆիքինգի այդ նպատակով:

- ◆ Հարկադիր մուրացկանություն. երեխաները և հատկապես շատ փոքր երեխաները թրաֆիքինգի են ենթարկվում նաև հարկադիր մուրացկանության նպատակով: Նրանք հաճախ գործում են երեխաների խմբերով, իսկ մեկ չափահաս վերահսկիչ կամ համակարգող վերահսկում է նրանց և նրանց վաստակած գումարները: Հնարավոր է՝ հաշմանդամություն ունեցող երեխաները շահագործվեն հարկադիր մուրացկանության մեջ, իսկ որոշ դեպքերում երեխաներին, հնարավոր է, հատուկ խեղեն, որ կարողանան նրանց այս ձևով շահագործել:
- ◆ Հանցավոր գործողություններ. թրաֆիքինգի ենթարկված երեխաներն օգտագործվում են նաև հանցավոր գործողությունների նպատակով՝ հաճախ ոչ ծանր այնպիսի հանցագործությունների համար, ինչպիսին գրպանահատությունն է, քանի որ նրանք համարվում են «մեկանգամյա օգտագործման» գործիք, որը բռնվելու դեպքում հեշտությամբ փոխարինվում է մեկ այլ երեխայով: Երեխաներին նաև ավելի ու ավելի հաճախ են թրաֆիքինգի ենթարկում կազմակերպված հանցավորության մեջ ներգրավելու նպատակով՝ նրանց գայթակղելով թանկարժեք նվերների, փողի և գրավիչ կենսակերպի խոստումներով: Հասակակիցների ճնշումը նույնպես գործոն է այս դեպքում, քանի որ մասնավորապես դեռահաս տղաները քաջալերում են միմյանց դիսկո դիմել և «բարձրաշխարհիկ կյանքով ապրել»: Կազմակերպված հանցավորության մեջ ներգրավված երեխաների մեծամասնության համար իրականությունը շատ ավելի պակաս գլամուրային է. նրանց նկատմամբ բռնություն են կիրառում հնազանդեցնելու նպատակով և սպառնում են նրանց ու նրանց ընտանիքներին:
- ◆ ՄԹ-ի հետ կապված հանցագործություններ. աշխարհի որոշ հատվածներում երեխաների թրաֆիքինգի թմրավաճառության միջև գաղտնի կապեր գոյություն ունեն: Երեխաներին թրաֆիքինգի են ենթարկում՝ շահագործելու որպես թմրամիջոցներ առաքողներ և թմրավաճառներ, և նրանց հաճախ տալիս են

անվճար թմրամիջոցներ՝ կախվածություն առաջացնելու և այդպիսով նրանց թակարդը զցելու համար: Բացի թմրամոլության առողջական և սոցիալական վտանգներից, այդպիսի երեխաներին սպառնում է նաև ֆիզիկական բռնության ենթարկվելու, ինչպես նաև թե հաճախորդների, թե շահագործողների կողմից վնասվելու վտանգը: Իրավապահ մարմինների կողմից բռնվելու դեպքում թմրավաճառության մեջ ներգրավված երեխաներին հաճախ վերաբերվում են որպես հանցագործների, այլ ոչ թե զոհերի: Այլ կերպ ասած, թրաֆիքինգ իրականացնող անձինք և շահագործողները թրաֆիքինգի ենթարկված երեխաներին աշխատեցնում են բոլոր այն դեպքերում, երբ հնարավորություն ունեն շահույթ ստանալու նրանց աշխատանքից և նրանց ծայրահեղ խոցելիությունից, որի պատճառը տնից ու ընտանիքից հեռու գտնվելն է:

Այսպես կոչված «թրաֆիքինգի ենթարկված լինելու իրավիճակում» քրեական իրավախախտում կատարող երեխաների դրությունը ծայրահեղ բարդ է: Նրանց թվին են պատկանում այն երեխաները, որոնք ընդգրկված են թմրամիջոցների արտադրության, շրջանառության և վաճառքի, գրպանահատության ու ապօրինի փողոցային առևտրի կամ մուրացկանության, անօրինական պոռնկության մեջ և քրեորեն պատժելի այլ արարքներում, ինչպիսիք են հափշտակությունը կամ ավազակային հարձակումը: Բացի դրանից, իհարկե, երբ երեխաներին անօրինականորեն տեղափոխում են երկրից երկիր, խախտվում են միգրացիոն օրենքները: Գոյություն ունի, սակայն, միջազգային համաձայնություն այն մասին, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաներն օրենքով պետք է համարվեն թրաֆիքինգի զոհեր և քրեական հետապնդման չենթարկվեն որպես անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներ: Կարևոր է, որ այդ իրավիճակներում հաշվի առնվի երեխայի՝ որպես թրաֆիքինգի զոհի կարգավիճակը և ուսումնասիրվի հանցագործության իրական բնույթը:



Ազդեցությունը երեխաների վրա

Թրաֆիքինգի ենթարկված երեխաները շահագործվում են, ենթարկվում ոտնձգությունների ու սովորաբար զրկվում կրթություն ստանալու հնարավորությունից և, հետևաբար, կենսական հնարավորություններից: Կեղծ ինքնության ստեղծումը և ընտանիքի ու համայնքի կորուստը կարող են լրջորեն նվազեցնել նրանց ինքնագնահատականը: Թրաֆիքինգի ենթարկված երեխաների մոտ հայտնաբերվելու պահին, հնարավոր է, նկատելի չլինեն ճշվածության կամ անմիջական վնասի ակնհայտ նշաններ: Հնարավոր է՝ նրանք խոցելի լինեն ոտնձգությունների որոշակի տեսակների առումով և շարունակեն չարաշահման հետևանքներն զգալ ապագայում: Թրաֆիքինգ իրականացնող անձի ցանկացած կարգադրություն, հնարավոր է, անվերապահորեն կատարվի, քանի որ կենսափորձ չունեցող երեխաները ոչ նորմալ վարքագիծը կարող են բնականոն համարել:

Թրաֆիքինգը կործանիչ հետևանքներ է ունենում նրանց համար, ովքեր դրա զոհ են դառնում, սակայն այն հատկապես վտանգավոր է երեխաների դեպքում, քանի որ ազդեցություն է ունենում երեխայի ապագայի վրա: Վատագույն դեպքերում թրաֆիքինգը և դրա մաս կազմող շահագործումը կարող են երեխայի մահվան, լուրջ հիվանդության կամ անբուժելի վնասվածքի պատճառ դառնալ: Ողևորությունը կարող է ծուղակներ պարունակել, աշխատանքի պայմանները հաճախ վտանգավոր են, իսկ թրաֆիքինգ իրականացնող անձանց կողմից ապահովվող կենսամակարդակն, առանց բացառության, անբավարար է լինում: Թրաֆիքինգի ենթարկված երեխաները, հնարավոր է, հնարավորություն չունենան դիմելու բժշկի և առողջապահության ոլորտի աշխատակիցներին, որոնք կարող էին նրանց դրության մասին տեղեկացնել իրավասու մարմիններին: Հաճախ շահագործողները հիվանդ երեխաներին պարզապես փողոց են նետում և թողնում անօգնական, իսկ որոշ դեպքերում երեխաները կարող են ավելի վատ ճակատագրի արժանանալ:

Թրաֆիքինգի ենթարկված երեխաների նկատմամբ բռնության բազմաթիվ ձևեր են կիրառվում: Հնազանդեցնելու նպատակով նրանց հնարավոր է ծեծեն կամ այրեն: Այդպիսի ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքն ինքնին հոգեբանական բռնության ձև է: Հաճախ թրաֆիքինգի ենթարկված երեխաներին վատ են կերակրում կամ նույնիսկ քաղցի են մատնում՝ ապահովելու, որ նրանք ենթարկվեն բռնացողների կամքին:

Աղջիկներին սպառնում է սեռական ոտնձգությունների ենթարկվելու վտանգը, թեև տղաները նույնպես հնարավոր է ենթարկվեն սեռական բռնության: Կախված աշխատանքի տեսակից, որը նրանք ստիպված կլինեն կատարել, երեխաները կբախվեն տարբեր առողջական հետևանքների. օրինակ՝ գյուղատնտեսական աշխատանքի դեպքում նրանք կարող են ենթարկվել թունավոր քիմիական նյութերի ազդեցությանը: Գործարանային աշխատանքը կարող է ներառել սարքավորումներ աշխատեցնելը, ինչը վեր է նրանց կարողություններից: Առևտրային նպատակներով սեռական բնույթի ծառայությունների մատուցումը պարունակում է իրեն բնորոշ ռիսկեր, ներառյալ անպաշտպան սեռական հարաբերությունները, որոնք կարող են հանգեցնել ՄՇՓՀ-ով (ներառյալ ՄԻԱՎ-ով) վարակման, անցանկալի հղիության կամ վերարտադրողական հիվանդության:

Թրաֆիքինգի գոհ շատ երեխաներ ենթարկվում են թմրամիջոցներից կախվածության վտանգին: Նրանց, հնարավոր է, թմրամիջոցներ տան, որ հնազանդ լինեն և շահագործման ենթակա, կամ ապահովելու նրանց կախվածությունը մատակարարից և, հետևաբար, նվազեցնելու փախուստի դիմելու հավանականությունը: Երեխաների համար թրաֆիքինգի իրավիճակում հայտնվելը նաև կապված է հոգեբանական լուրջ ռիսկերի հետ. նրանց գատում են իրենց ընտանիքներից, ընկերներից և համայնքից: Վախի, այդ թվում՝ իրենց ընտանիքներին ուղղված սպառնալիքներից վախի միջոցով նրանք, հնարավոր է, ամբողջությամբ մեկուսացվեն: Հաճախ թրաֆիքինգի ենթարկված երեխաները հայտնվում են հուսահատության, թրաֆիքինգի, շահագործման, կախվածության և կրկնա-թրաֆիքինգի փակ շրջանում:

Այս բազմաթիվ պատճառներով թրաֆիքինգի գոհ դարձած երեխաները կարող են լիովին կորցնել հույսը և հայտնվել դեպրեսիվ վիճակում, ինչը կարող է դրդել նրանց ինքնավնասման կամ նույնիսկ ինքնասպանության փորձի: Ազդեցությունն ընտանիքների վրա շատ լուրջ է: Թեև շատ ընտանիքներ կարող են կարծել, որ իրենց երեխաներին աշխատանք գտնելու նպատակով մեկ այլ վայր ուղարկելը կամ տեղափոխվելու թույլտվություն տալն օգուտ կբերի, իրականում շատ ընտանիքներ այլևս երբեք չեն տեսնում թրաֆիքինգի ենթարկված երեխային: Էլ ավելի շատերը երբեք չեն ստանում խոստացված եկամուտը:



Ինչի կարող են բախվել սահմանապահները

Շատ երեխաներ ժամանում են իրենց հետ որևէ կապ չունեցող չափահասների ուղեկցությամբ կամ այնպիսի հանգամանքներում, որոնք երեխայի պաշտպանության առումով մտահոգություններ են առաջացնում: Օրինակ, հնարավոր է՝ առկա լինեն շատ քիչ ապացույցներ մինչ այդ գոյություն ունեցող հարաբերությունների մասին, կամ երեխան նույնիսկ գուցե ոչինչ չիմանա հովանավորի մասին: Հնարավոր է՝ նախատեսված լինի անհամապատասխան կացարան կամ, գուցե, առկա չլինի հովանավորի հետ երեխայի ճամփորդության կամ գտնվելու համար ծնողների թույլտվության որևէ վկայություն: Այս անհարթությունները, հնարավոր է, միակ ցուցիչը լինեն, որ երեխան կարող է թրաֆիքինգի գոհ լինել:

Ուղեկցող ունեցող որոշ երեխաներ կարող են ապաստան հայցել՝ պնդելով, որ առանց ուղեկցողի են, երբ թրաֆիքինգ իրականացնող անձը նրանց ասի, որ այդ եղանակով նրանք Եվրոպայում բնակվելու թույլտվություն կստանան:

Տարիքի գնահատումը

Թրաֆիքինգի գոհի տարիքը գնահատելը կարող է անհրաժեշտ լինել, քանի որ երեխան կարող է ունենալ կեղծ կամ մեկ այլ երեխայի պատկանող փաստաթղթեր՝ ավելի մեծ կամ փոքր ներկայացվելու համար: Երեխաներին թրաֆիքինգի ենթարկող կամ շահագործող չափահասները հարկադրում են նրանց ստել իրենց տարիքի վերաբերյալ: Հետևաբար, ուղեկցող չափահասի կամ խնամք իրականացնող անձի կողմից ներկայացվող տեղեկությունները երեխայի մասին կարող են ճշգրիտ չլինել:

Եթե գոհի տարիքն անորոշ է, և պատճառներ կան կարծելու, որ նա երեխա է, քանի որ գոհն ասել է, որ իր 18 տարին չի լրացել, կամ օրենքով նախատեսված կամ մասնագիտացված գործակալությունների կողմից ներկայացվել են փաստաթղթեր կամ տեղեկություններ, որոնք մտահոգություն են առաջացրել այն մասին, որ գոհի 18 տարին կարող է լրացած չլինել, նա պետք է համարվի երեխա, և նրա համար պետք է ապահովվի լիարժեք պաշտպանություն՝ որպես թրաֆիքինգի գոհ դարձած երեխա:

Եթե մտահոգություն կա, որ երեխան կարող է թրաֆիքինգի ենթարկված լինել, և տարիքի վերաբերյալ տարաձայնություն է ծագում,

ապա տարիքի վերաբերյալ կասկածները պետք է համարվեն չփարատված՝ մինչև երեխայի տարիքը պարզելը: Այդ մոտեցումը համապատասխանում է «Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիային և դրա Բացատրական զեկույցին (Վարշավա, 2005 թվականի մայիսի 16):

Այն դեպքում, երբ պարզվում է, որ թրաֆիքինգի երիտասարդ գոհր չափահաս է, մասնագետները պետք է առաջնորդվեն խոցելի չափահասների պաշտպանության ընթացակարգով:

Երեխաների հատուկ կարիքները

Վերապատրաստման այս հատվածը պետք է կենտրոնացած լինի 18 տարին չլրացած անձանց հատուկ կարիքների և այն հարցի վրա, թե ինչպես սահմանապահները պետք է արձագանքեն այդ պահանջներին: Սահմանապահները պետք է տեղեկացված լինեն ամբողջ գործընթացում իրենց դերի և երեխաների պաշտպանության գործում ընդգրկված ազգային ու միջազգային այլ մարմինների ներգրավվածության մասին:

Յուրաքանչյուր սահմանապահ պետք է ամբողջությամբ ծանոթ լինի ազգային գործընթացներին և հասկանա, որ տարիքի վերաբերյալ տարաձայնությունների դեպքում պետք է առաջնորդվել ազգային մակարդակով ընդունված ուղենիշով, ըստ որի՝ մինչև անհատի տարիքը հստակեցնելը նրան հարկ է վերաբերվել որպես երեխայի:



ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Նշումներ վերապատրաս- տողի համար

Այս բաժինը նպատակ ունի շեշտելու, որ ան-
դամ պետությունների և համապատասխան միջ-
կառավարական ու հասարակական կազմակեր-
պությունների միջև բազմակողմանի միջազգային
համագործակցությունը կարևոր նշանակություն ունի
մարդկանց թրաֆիքինգի վտանգի դեմ արդյունավետ
պայքարում:

Համագործակցությունը միակ եղանակն է՝ համապարփակ կերպով
արձագանքելու մարդկանց թրաֆիքինգի երևույթին, ինչպես պա-
հանջվում է 2011/36/ԵՄ հրահանգով: Տարբեր շահագրգիռ կողմերի
հետ համագործակցությունն ու գործընկերությունը նպաստում են
կանխմանը, քրեական հետապնդմանն ու պաշտպանությանը: Սահ-
մանապահների դեպքում դա ենթադրում է առնվազն համագործակ-
ցություն ազգային և միջազգային այլ իրավապահ ծառայությունների,
թրաֆիքինգի զոհերին ծառայություններ մատուցող ՀԿ-ների, երե-
խաների պաշտպանության հարցերով ծառայությունների և խնա-
մակալության ու հոգաբարձության մարմինների, ապաստանի հար-
ցերով ազգային մարմինների հետ: Աջակցություն տրամադրող
համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցու-
թյունը ուղղորդման ազգային կամ համարժեք մեխանիզմների մի-
ջոցով ներկայումս պահանջվում է ԵՄ իրավունքով (2011/36/ԵՄ
հրահանգի 11(4) հոդված):

Սահմանապահների դերը շատ կարևոր է միջազգային իրավապահ
ծառայությունների և կազմակերպությունների հետ համագործակ-
ցության հարցում: Քրեական հարցերով միջազգային համագոր-
ծակցությունը մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի կարևոր
նախապայման է: Մարդկանց թրաֆիքինգի դեպքերի զգալի մասն
անդրազգային բնույթ ունի, և նույնիսկ միևնույն երկրի սահմաններում
տեղի ունեցող դեպքերը կարող են ներառել զոհեր կամ իրա-
վախախտներ, որոնց ծագման երկիրն այլ է: Փաստերի այս կամ այն
համախումբը կարող է հիմք հանդիսանալ և քրեական հետաքննություն
ու հետապնդում հարուցել մեկից ավելի երկրում: Միջազգային հա-
մագործակցության ոչ պաշտոնական և պաշտոնական եղանակները
կարևոր են թրաֆիքինգ իրականացնող անձանց ապահով հանգր-
վանից զրկելու առումով:

Քրեական հարցերով միջազգային համագործակցությունը կարող է շատ խնդրահարույց լինել և պահանջում է գիտելիք, պլանավորում ու իրազեկվածություն թե՛ խնդրանք ստացած, թե՛ խնդրանք ուղարկող պետություններում գոյություն ունեցող գործնական խնդիրների վերաբերյալ: Այդ խնդիրները ներառում են (սակայն չեն սահմանափակվում դրանցով) հետաքննության հետ կապված ծախսերը, դատաքննության իրականացման վայրը, կիրառելի իրավական շրջանակը, քաղաքացիությունը, վկաների գտնվելու վայրը, իրավախախտների գտնվելու վայրը, ապացույցների հավաքման և ապացույցների թույլատրելիության կանոնները:

Միջազգային համագործակցության տարրեր ձևերը ներառում են՝

- ◆ բռնագրավման նպատակով համագործակցությունը՝ թրաֆիքինգ իրականացնող անձանց հանցավոր ճանապարհով ստացված ակտիվներից զրկելու նպատակով.
- ◆ իրավապահ մարմինների միջև համագործակցությունը, ներառյալ տեղեկությունների փոխանակումն ու հարցումներ կատարելու նպատակով համագործակցությունը.
- ◆ համատեղ քննությունները.
- ◆ քննչական հատուկ տեխնիկական հնարքների կիրառման նպատակով համագործակցությունը:

Իրավապահ մարմինների միջև համագործակցության առավել համակարգված ձևերն ընդգրկում են՝

- ◆ կապի ապահովման գծով աշխատակիցների նշանակում՝ դյուրացնելու քրեական հետաքննությունների հարցում ընդունող պետության իրավապահ մարմինների աշխատակիցների հետ համագործակցությունը.
- ◆ երկկողմ և բազմակողմ համաձայնագրեր ու կարգավորումներ իրավապահ մարմինների համագործակցության և իրավապահ գործողությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրման վերաբերյալ.
- ◆ համագործակցություն այնպիսի կառույցների շրջանակներում, որոնց թվին է պատկանում Քրեական ոստիկանության միջազգային կազմակերպությունը (Ինտերպոլ), կամ տարածաշրջանային համագործակցության տարրեր կառույցների միջև, ինչպիսիք են Եվրոպական ոստիկանական գրասենյակը (Եվրոպոլ) կամ Եվրոջասթը.



- ◆ հետախուզության զարգացում.
- ◆ այնպիսի գործողություններ, ինչպիսիք են վերահսկվող առաքումը, հսկողությունը կամ ռադիոհետախուզությունը.
- ◆ հաստատելը, թե ինչ ապացույցներ են առկա՝ մինչև այդ ապացույցները ձեռք բերելու համար պաշտոնական հարցում կատարելը.
- ◆ եթե թրաֆիքինգի գոհը (պոտենցիալ գոհը) ունի նաև միջազգային պաշտպանության կարիք, ապա կիրառվում են ծագման երկրի իշխանության մարմինների հետ համագործակցության խիստ կանոններ:

Մարդու թրաֆիքինգի վերաբերյալ առասպելներ

Նշումներ վերապատրաստողի համար

Սույն բաժինը վերապատրաստողին հնարավորություն կտա ստուգելու, թե արդյոք երևույթի վերաբերյալ որոշ հիմնական հարցեր ճիշտ են ներկայացվել և ընկալվել:

Կարևոր է տեղյակ լինել մարդու թրաֆիքինգի վերաբերյալ մի շարք առասպելների և ոչ լիարժեք պատկերացման հետ կապված խնդիրների մասին:

- ♦ **Առասպել:** Անձը չի օգտագործել փախչելու հնարավորությունները, հետևաբար նրան չեն հարկադրում:

Իրականություն: Շահագործման իրավիճակում մնալը կարող է վկայել այդ իրավիճակում գտնվելու ցանկության և (կամ) հարկադրանքի բացակայության մասին: Սակայն գոյություն ունեն բազմաթիվ պատճառներ, թե ինչու անձը կարող է նախընտրել չփախչել շահագործման իրավիճակում, օրինակ՝ վախը պատասխան գործողություններից, խոցելիությունը, Ստոկհոլմյան սինդրոմը (հոգեբանական կախվածությունն իրենց շահագործող անձից), շրջակա միջավայրի ոչ բավարար իմացությունը:

- ♦ **Առասպել:** Թրաֆիքինգի ենթարկված անձ համարվելու համար սահմանը հատելը պարտադիր է:

- ♦ **Իրականություն:** Թրաֆիքինգի համար երկրի սահմանը հատելը պարտադիր չէ. այն կարող է տեղի ունենալ մեկ երկրի սահմաններում (ներքին թրաֆիքինգ):

- ♦ **Առասպել:** Մարդկանց թրաֆիքինգը որոշ մշակույթներում անխուսափելի չարիք է և, այդպիսով, պետք է ընդունվի:

Իրականություն: Անկախ մշակութային նորմերից՝ մարդկանց թրաֆիքինգը հանցագործություն է և մարդու իրավունքների խախտում:

- ♦ **Առասպել:** Մարդկանց թրաֆիքինգ չեն կարող համարվել այն դեպքերը, երբ կազմակերպիչը և գոհը կապ ունեն միմյանց հետ կամ ամուսնացած են/ապրում են միասին/սիրեկաններ են:



Իրականություն: Միտ հարաբերությունները հաճախ օգտագործվում են այլ անձանց շահագործելու և վերահսկելու համար: Հայտնի են բազմաթիվ դեպքեր, երբ գույքընկերները կանանց նախապատրաստել են սեքսուալ շահագործման, կամ ընտանիքի անդամները (դիտավորյալ կամ առանց դիտավորության) համաձայնության են եկել շահագործման վերաբերյալ: Այդպիսի հարաբերություններից շատերի դեպքում առկա են լինում նաև ընտանեկան բռնության ցուցիչներ:

- ◆ **Առասպել:** Անձը չի համարվում թրաֆիքինգի զոհ, եթե նա ասում է, որ ապրում է ավելի լավ կյանքով, քան նախկինում:

Իրականություն: Որոշ մարդիկ նախընտրում են հանդուրժել իրենց իրավիճակը, քանի որ, հնարավոր է, դա ընկալում են որպես ավելի լավ ապագա ունենալու միջոց, և նաև գուցե նրանց ընկալմամբ այդ իրավիճակը նրանց համար գերադասելի է տանը ունեցած փորձառությունից: Դա չի նշանակում, որ նրանք թրաֆիքինգի զոհ չեն:

- ◆ **Առասպել:** Անձը թրաֆիքինգի զոհ չէ, եթե նա մերժում է օգնության առաջարկները:

Իրականություն: Այնքան էլ հազվադեպ չեն դեպքերը, երբ զոհերն սկզբում մերժում են աջակցության և օգնության առաջարկները: Այս իրավիճակը բնորոշ չէ միայն այս հանցագործությունների զոհերին, սակայն մարդկանց թրաֆիքինգի բնույթից ելնելով՝ զոհերի ինքնաիդենտիֆիկացիայի և վաղ փուլում իրավապահ մարմիններին ու աջակցություն տրամադրող այլ կազմակերպությունների դիմելու դեպքերը քիչ են:



ՄՈԴՈՒԼ 2

ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Այս երկրորդ մոդուլի նպատակը սահմանային վերահսկողության մարմինների՝ մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ գոհերին, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի մեջ կասկածվող անձանց հայտնաբերելու կարողությունները զարգացնելն է: Ավելի կոնկրետ, թրաֆիքինգ իրականացնող անձանց ու պոտենցիալ գոհերի ցուցիչները և իրական կյանքից վերցված գործնական օրինակները սահմանապահներին կօգնեն կանխարգելել այդ հանցագործությունն ամենավաղ փուլում:

Ուսումնական արդյունքները

Այս մոդուլի ավարտին մասնակիցները կկարողանան՝

1. ճանաչել թրաֆիքինգ իրականացնող անձանց և նրանց գոհերին (պոտենցիալ գոհերին) հայտնաբերելու հարցում առաջին օղակի աշխատակիցների ներուժը.
2. տարանջատել այն ցուցիչներն ու առանցքային հարցերը, որոնք նրանց կօգնեն առաջին օղակում սահմանային վերահսկողության ժամանակ հայտնաբերել մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձանց ու նրանց գոհերին (պոտենցիալ գոհերին).
3. հայտնաբերված ցուցիչների հիման վրա առաջին օղակում տեղեկություններ հավաքել գոհերից (պոտենցիալ գոհերից) և հանցագործություն կատարող անձանցից.
4. թրաֆիքինգի գոհերի (թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի) շրջանում հայտնաբերել միջազգային պաշտպանության կարիք ունեցող խոցելի անձանց.
5. երեխա գոհերից (պոտենցիալ գոհերից) որոշարկված ցուցիչների հիման վրա տեղեկություններ հավաքելիս գիտակցել համապատասխան մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտությունը և գործել համապատասխանաբար.
6. համապատասխան գործողություններ ձեռնարկել գոհերին (պոտենցիալ գոհերին) և թրաֆիքինգ իրականացնող անձանց հայտնաբերելու առումով՝ հաշվի առնելով ազգային օրենսդրությունը:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Բովանդակություն	Մեթոդ	Գործիքակազմ
Ներածություն	Դասախոսություն Խմբային քննարկում Դեպքի նստումնասիրություն	◆ Արագ թեստ, պրեզենտացիա
		◆ Արագ թեստի պատասխաններ, բաժանվող նյութ
		◆ Արագ թեստի պատասխաններ, վերապատրաստողի կողմից բաժանվող նյութ
		◆ Ներածություն. Մոդուլ 2. պրեզենտացիա
		◆ 1-ին դեպքի ուսումնասիրություն. «Ուղևորները», փեսա հղովակ
		◆ 2-րդ դեպքի ուսումնասիրություն. «Կանայք Ուկրաինայից», պրեզենտացիա
		◆ 2-րդ դեպքի ուսումնասիրություն. «Կանայք Ուկրաինայից», բաժանվող նյութ
		◆ 3-րդ դեպքի ուսումնասիրություն. «Աշխատողները Մոլդովայից», պրեզենտացիա
		◆ 4-րդ դեպքի ուսումնասիրություն. «Երեխան Ալբանիայից», պրեզենտացիա
		◆ 4-րդ դեպքի ուսումնասիրություն. «Երեխան Ալբանիայից», բաժանվող նյութ
Ներածություն		◆ 5-րդ դեպքի ուսումնասիրություն. «Ալենասն Ալբանիայից», պրեզենտացիա
		◆ 5-րդ դեպքի ուսումնասիրություն. «Ալենասն Ալբանիայից», բաժանվող նյութ
		◆ 6-րդ դեպքի ուսումնասիրություն. «Հինգ չինացիները», պրեզենտացիա
		◆ 6-րդ դեպքի ուսումնասիրություն. «Հինգ չինացիները», բաժանվող նյութ

Բովանդակություն	Մեթոդ	Գործիքակազմ
Թրաֆիքինգի զոհերի (պոտենցիալ զոհերի) հայտնաբերման և նրանց հետ վարվեցողության հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները	Դասախոսություն Խմբային քննարկում Դեպքի օրինակ (օրինակներ)	◆ ԵՄ հրահանգը, պրեզենտացիա ◆ Հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները, պրեզենտացիա
ՄԹ-ի բացահայտումը, ցուցիչներ	Դասախոսություն Խմբային քննարկում Դեպքի օրինակ (օրինակներ)	◆ Ջոհերին հայտնաբերելու ցուցիչներ. ընդհանուր, պրեզենտացիա ◆ Ջոհերին հայտնաբերելու ցուցիչներ. անազատ վիճակ, պրեզենտացիա ◆ Թրաֆիքինգ իրականացնող անձանց հայտնաբերելու ցուցիչներ. պրեզենտացիա ◆ Հանրային հեռախոս, տեսահոլովակ ◆ Ազդանշաններ և ցուցիչներ, բաժանվող նյութ ◆ ՄԱԾՀՊԳ-ի ցուցիչներ, բաժանվող նյութ
Առաջին օղակում տեղեկությունների հավաքումը	Դասախոսություն Խմբային քննարկում Դերախաղ	◆ Առանցքային հարցեր, պրեզենտացիա
Ուղղորդումը երկրորդ օղակ	Խմբակային քննարկում Դասախոսություն	◆ ՄԹ-ի աշխարհագրությունը, պրեզենտացիա



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ

Ներածություն

Նշումներ
վերապատրաստողի
համար

Այս բաժնում սահմանապահներին ներկայացվում է, թե ինչ ակնկալել այս երկրորդ մոդուլից: Սահմանապահները կսովորեն կիրառել մի շարք գործիքներ (ցուցիչներ, առաջին գծում հարցեր տալու գործընթաց), որոնք կօգնեն նրանց բացահայտել զոհերին (պոտենցիալ զոհերին) և (կամ) հանցագործություն կատարող անձանց:

Առաջին հերթին, գործիքակազմում նախատեսված է «Արագ թեստ», որը պետք է վերապատրաստողին օգնի կապակցել 1-ին մոդուլն այս մոդուլի հետ:

Գործիքակազմում նախատեսված է չորս դեպքի ուսումնասիրություն, և վերապատրաստողը կարող է դրանցից մեկն օգտագործել ներածությունն ամփոփելու համար: Վերապատրաստողը պետք է առաջադրի բաց հարցեր ու նախ և առաջ համոզվի, որ բոլոր մասնակիցները նույն կերպ են ընկալում կամ պատկերացնում իրավիճակը: Այնուհետև, կարևոր է հասկանալ, թե մասնակիցներն ինչպես կարձագանքեին (ընագդորեն), և ինչ ազդեցություն ունեն այդ իրավիճակները նրանց ամենօրյա աշխատանքի վրա: Հարցերը պետք է նպաստեն պատրաստակամության ձևավորմանը և հանգեցնեն մասնակցող սահմանապահների իրազեկվածությանը «իրավագործության» հարցի մասին, այսինքն՝ որ նրանցից յուրաքանչյուրը կարող է վճռորոշ դեր կատարել, և որ գոյություն ունեն իրավական գործիքներ, որոնք կաշակցեն և կուղղորդեն նրանց իրենց գործողություններում:

Հղումներ

«Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի ու դրա գոհերի պաշտպանության և Խորհրդի 2002/629/ՄՆԳ շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2011 թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ հրահանգ:
«Երրորդ երկրների քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց որպես փախստական կամ, այլապես, միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձ որակելու և նրանց կարգավիճակի նվազագույն չափանիշների ու տրամադրված պաշտպանության բովանդակության վերաբերյալ» Խորհրդի 2004 թվականի ապրիլի 29-ի 2004/83/ԵՀ հրահանգ:

Հարցեր և պատասխաններ

Առաջին մոդուլում ներկայացվեց այն երևույթի (իրավական) հենքը, որը կարող է կոչվել ստրկության 21-րդ դարի տարբերակ: 2011/36/ԵՄ հրահանգում տրվում է սահմանում, որը (չափահասների դեպքում) ներառում է երեք բաղկացուցիչ տարր (գործողություն, միջոցներ և նպատակ): Նպատակը՝ շահագործումը, թրաֆիքինգի և անօրինական ճանապարհով մարդկանց տեղափոխման հիմնական տարբերությունն է: Տարբեր մարդիկ կարող են թրաֆիքինգի ենթարկվել տարբեր նպատակներով, և յուրաքանչյուր դեպք պետք է դիտարկվի առանձին:

Սահմանապահներն առանցքային օղակ են ՄԹ-ի կանխարգելման, հանցագործություն կատարող անձանց նկատմամբ քրեական հետապնդման իրականացման և գոհերի պաշտպանության գործում: Սահմանապահներն արժեքավոր գործընկեր են: Գործիքակազմում ներառված «Արագ թեստի» որոշ հարցերի միջոցով պետք է կապ ստեղծեն ընդհանուր իրազեկվածության և թրաֆիքինգ իրականացնող անձանց ու գոհերի ակտիվ բացահայտման և հայտնաբերման միջև:



Ինչի մասին է երկրորդ մոդուլը

Մարդկանց թրաֆիքինգը կանխարգելելու և դրա դեմ պայքարելու համար անհրաժեշտ է վաղ փուլում հայտնաբերել գոհերին (պոտենցիալ գոհերին) և թրաֆիքինգ իրականացնող անձանց: Թրաֆիքինգի մասին ԵՄ հրահանգի համաձայն՝ «Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ստեղծելու համապատասխան մեխանիզմներ՝ ուղղված վաղ փուլում գոհերի հայտնաբերմանը»¹⁴:

Այս երկու խմբին պատկանող անձանց հայտնաբերելու գործում առաջին գծի սահմանապահների դերը վճռորոշ է Եվրոպական միության՝ թրաֆիքինգի արդյունավետ կանխարգելման և դրա դեմ արդյունավետ պայքարի կարողության առումով: Վաղ փուլում հայտնաբերման բանալին իմանալն է, թե ինչ գործողություններ են կատարվում թրաֆիքինգի ժամանակ, և ինչպես դրանք կարող են արտահայտվել սահմանին: Այդ պատճառով առաջին գծի սահմանապահները պետք է ծանոթ լինեն, թե ինչպես է աշխատում «մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը, այդ թվում՝ այդ անձանց վերահսկելու իրավասությունը փոխանակելը կամ փոխանցելը»¹⁵ այն տարածաշրջանում, որտեղ նրանք գործունեություն են իրականացնում: Երկրորդ մոդուլում ներկայացված են մի շարք ցուցիչներ, որոնք թրաֆիքինգ իրականացնող անձանց հայտնաբերելու գործում կօգնեն առաջին օղակի սահմանապահներին: Նշված ցուցիչները հարկ է հավելյալ հարմարեցնել՝ հաշվի առնելով սահմանապահների գործունեության երկրի, ինչպես նաև տեղական առանձնահատկությունները:

Առաջին գծի սահմանապահները պետք է նաև ծանոթ լինեն թրաֆիքինգ իրականացնող անձանց և համակարգողների կողմից օգտագործվող այնպիսի միջոցների ցուցիչներին, ինչպիսիք են «ուժ գործադրելու սպառնալիքը կամ ուժի գործադրումը կամ հարկադրանքի մյուս ձևերը, առևանգումը, խարդախությունը, խաբեությունը, իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահումը կամ մեկ այլ անձի վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով վճարումներ կամ այլ օգուտներ տալը կամ ստանալը»¹⁶: Ինչպես նշվել է 1-ին մոդուլում, թրաֆիքինգի նպատակը շահագործումն է: Այդ բոլոր գործոններն ազդեցություն են ունենում գոհի և սահմանին նրա վարքագծի վրա, ինչպես նաև այն պատասխանների վրա, որոնք նա, հնարավոր է, տա սահմանապահներին: Երկրորդ մոդուլում ներկա-

¹⁴ 2011/36/ԵՄ հրահանգի 11(4) հոդված:

¹⁵ 2011/36/ԵՄ հրահանգի 2(1) հոդված:

¹⁶ 2011/36/ԵՄ հրահանգի 2(1) հոդված:

յացված է այն ցուցիչների ցանկը, որոնք սահմանապահներին օգնում են հայտնաբերել թրաֆիքինգի տարբեր ձևերի գոհերին, որոնց նրանք, հնարավոր է, առնչվեն: Այդ ցուցիչները նաև վերաբերում են այն իրավիճակին, երբ թրաֆիքինգի պոտենցիալ գոհը, հնարավոր է, լինի նաև փախստական կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձ¹⁷, որի նկատմամբ կիրառվում է անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքը:

Այս մոդուլի շրջանակներում սահմանապահները կսովորեն նաև, թե ինչպես աշխատել թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի հետ՝ առաջին գծի սահմանային վերահսկողության կետերում արագ հարցեր տալիս, և թե ինչպես հաղթահարել հաղորդակցության արգելքները: Երկրորդ մոդուլում կներկայացվեն նաև այն առաջնորդող սկզբունքները, որոնք հարկ է կիրառել թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի հետ աշխատելիս: Կարևոր է այն հանգամանքը, որ որոշ պոտենցիալ գոհեր, հնարավոր է, լինեն նաև սեռական բնույթի և գենդերային հիմքով բռնության, բռնաբարության կամ խոշտանգման գոհ: Այդ անձանց՝ հարցերին պատասխանելու ձևի վրա կարող է ազդեցություն ունենալ ոտնձգություններ, բռնություն և տրավմա վերապրած լինելու հանգամանքը:

Դեպքի ուսումնասիրություն

Երիտասարդ կանայք Ուկրաինայից, աշխատավորները Մոլդովայից, երեխաներն Ալբանիայից՝ տարբեր մարդիկ թրաֆիքինգի են ենթարկվում շահագործման տարբեր ձևերի ենթարկվելու նպատակով, և գործիքակազմը ներառում է որոշ կոնկրետ դեպքերի վերաբերյալ անհրաժեշտ ընդհանուր տեղեկություններ: Մի շարք պատճառներ կան, և իրավական շրջանակը դրանցից միայն մեկն է, թե ինչու է կարևոր տարբերակել՝

- ◆ արդյոք թրաֆիքինգի, թե՛ մաքսանենգ ճանապարհով տեղափոխման դեպք է.
- ◆ Թրաֆիքինգի գոհերի (պոտենցիալ գոհերի) և թրաֆիքինգ իրականացնող անձանց ինչ ցուցիչներ կարելի է առանձնացնել տվյալ դեպքում.
- ◆ տվյալ դեպքը թրաֆիքինգի դժբախտիկ տեսակին (տեսակներին) է վերաբերում.
- ◆ ինչպիսի գործողություններն են հարմար տվյալ իրավիճակում:

¹⁷ Ինչպես սահմանված է Որակման հրահանգի 2-րդ և 15-րդ հոդվածներով:



Հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները

Նշումներ
վերապատրաստողի
համար

Այս բաժնում ներկայացված են գոհերի հայտնաբերման հետ կապված մարտահրավերներն ու հիմնարար գործոնները, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի գոհերի և, հատկապես, երեխա գոհերի հետ աշխատելու առաջնորդող սկզբունքները:

Մասնակիցները կարող են փոքր խմբեր կազմել և թվարկել «ուշադրության արժանի հարցերը»՝ կապված տարբեր դեպքերի ուսումնասիրություններին առնչող հիմնարար սկզբունքների ու երաշխիքների հետ, որոնք ներկայացված են նաև գործիքակազմում:

Հղումներ

Թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով վերապատրաստման մոդուլ «Զոհերի հայտնաբերման և հարցազրույց վարելու հնարքներ», ՄՄԿ, 2006 թվական

Թրաֆիքինգի գոհերին ուղղակի աջակցության վերաբերյալ ձեռնարկ, Գլուխ 1՝ «Պաշտպանվածությունը և անձնական անվտանգությունը» և Գլուխ 2՝ «Թրաֆիքինգի գոհերի զննումը», ՄՄԿ, 2007 թվական

Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզբունքներ և ուղենիշներ, ՄԻԳՀԳ, 2010 թվական

Թրաֆիքինգի գոհ դարձած երեխաների պաշտպանության վերաբերյալ ցուցումներ, ՅՈՒՆԻՍԵՖ, 2006 թվական

Պոտենցիալ գոհերի հայտնաբերման կարևորությունը և դրա հետ կապված մարտահրավերները¹⁸

Զոհերի հայտնաբերման գերակա նպատակ է՝ ապահովել, որ ձեռնարկվեն համապատասխան միջոցներ՝ աջակցելու պոտենցիալ գոհերին և պաշտպանելու նրանց իրավունքները: Այդ միջոցներից ամենահրատապը կարող է լինել պոտենցիալ գոհերին շահագործման իրավիճակից հանելը, որպեսզի նրանք այլևս չենթարկվեն ֆիզիկական կամ հոգեբանական վնասի: Հետագա ոլորտներից նրանց գերծ պահելու համար, հնարավոր է, անհրաժեշտ լինեն պաշտպանության որոշակի ընթացակարգեր: Սահմանապահ ծառայության աշխատակիցները նույնպես կարող են բախվել որոշակի ռիսկերի:

Թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի հետ աշխատելիս սահմանապահ ծառայության աշխատակիցն առաջին հերթին պետք է հիշի, որ թրաֆիքինգի գոհերը հանցագործության գոհեր են. նրանք հանցագործներ չեն: Թեև ոչ բոլոր երկրներն ունեն թրաֆիքինգի դեմ պայքարի ոլորտի համապարփակ օրենքներ, որոնք քրեական պատասխանատվություն են նախատեսում մարդկանց թրաֆիքինգի համար, սակայն, ըստ էության, յուրաքանչյուր երկիր ունի օրենքներ, որոնք գործնականում կարող են կիրառվել թրաֆիքինգի հետ կապված հանցագործությունները քննելու և քրեական հետապնդում իրականացնելու նպատակով: Երկրորդ, մարդկանց թրաֆիքինգը մարդու իրավունքների խախտում է, որը կարող է առաջացնել հատուկ պաշտպանության, ներառյալ միջազգային պաշտպանության (օրինակ՝ ապաստանի) անհրաժեշտություն:

Զոհի հայտնաբերման հիմնարար գործոններ

Թրաֆիքինգի պոտենցիալ գոհերին հայտնաբերելու ուղղությամբ գործելիս անհրաժեշտ է մտքում ունենալ հետևյալ սկզբունքները.

- ♦ մարդկանց թրաֆիքինգը և միգրանտների անօրինական փոխադրումը տարբեր երևույթներ են.
- ♦ թրաֆիքինգը գործընթաց կամ իրադարձությունների շղթա է, որը հաճախ սկսվում է հավաքագրմամբ կամ հարկադրանքով և ավարտվում է անձին շահագործելու մտադրությամբ կամ փաստացի շահագործմամբ.

¹⁸ Բաժինը վերցված է «Զոհերի հայտնաբերման և հարցազրույց վարելու հնարքներ» ՄՄԿ-ի՝ թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով վերապատրաստման մոդուլից, էջ 15-16:



- ◆ մարդկանց թրաֆիքինգը նաև մարդու իրավունքների խախտում է: Անհրաժեշտ է հիշել անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքի մասին, եթե նա փախստական է կամ միջազգային պաշտպանության կարիք ունեցող անձ.
- ◆ մարդիկ կարող են թրաֆիքինգի ենթարկվել երկրի ներսում (ներպետական/ներքին թրաֆիքինգ) կամ երկրի սահմաններից դուրս (միջազգային թրաֆիքինգ).
- ◆ չափահասների և երեխաների դեպքում կիրառվում են տարբեր չափանիշներ.
- ◆ թրաֆիքինգի գոհ կարող են լինել տղամարդիկ, կանայք և երեխաները:

Թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի վարքագիծը¹⁹

Թրաֆիքինգի ենթարկված անձինք մի շարք պատճառներով, հնարավոր է, իրենց չներկայացնեն որպես մարդկանց թրաֆիքինգի գոհեր և (կամ) գուցե օգնություն չխնդրեն: Չի բացառվում՝ նրանք տեղյակ չլինեն, որ կարող են աջակցություն ստանալ: Հնարավոր է՝ ֆիզիկապես լինեն փակի տակ կամ գտնվեն մշտական հսկողության ներքո: Չի բացառվում, որ նրանք վախենան իրենցից կամ իրենց ընտանիքից վրեժխնդիր լինելու հնարավորությունից կամ, հնարավոր է, ամաչեն, անհարմար զգան կամ որոշ առումով իրենց պատասխանատու համարեն իրենց շահագործման համար:

Առաջին գծի սահմանապահները գնման գործընթացն իրականացնում են՝ ելնելով հիմնարար սկզբունքներից ու երաշխիքներից: Եթե սահմանապահ ծառայության աշխատակիցը հայտնաբերում է թրաֆիքինգի պոտենցիալ գոհի, ապա նա պետք է անձին ուղղորդի երկրորդ օղակ, որտեղ անցկացվում է նախնական հարցազրույց կամ գնման նպատակով հարցազրույց:

¹⁹ Բաժինը վերցված է «Զոհերի հայտնաբերման և հարցազրույց վարելու հնարքներ» ՄՄԿ-ի՝ թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով վերապատրաստման մոդուլից, էջ 15:

Առաջնորդող սկզբունքները, որոնք պետք է կիրառվեն թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի հետ աշխատելիս²⁰

Սահմանապահ ծառայության աշխատակիցները թրաֆիքինգի պոտենցիալ գոհերի, այդ թվում՝ երեխաների հետ գործ ունենալիս պետք է առաջնորդվեն ստորև շարադրված սկզբունքներով:

- ◆ Հիշեք, որ ամենակարևորը գոհն է և նրա իրավունքները. պատշաճ ուշադրություն է պետք դարձնել այն հանգամանքին, որ սահմանապահների կողմից ձեռնարկված միջոցները չազդեն միջազգային և տարածաշրջանային օրենսդրությամբ երաշխավորված իրավունքների վրա, մասնավորապես՝ փախստականների ու ապաստան հայցողների, առանց ուղեկցության կամ ընտանիքից առանձնացված երեխաների և խոցելի այլ խմբերի իրավունքների վրա:
- ◆ Մի՛ վնասեք. հաշվի առնելով թրաֆիքինգի հետ կապված ծայրահեղ ռիսկերը, գոհերից շատերի փութը վիճակը և տրավմայի մեծացման հնարավորությունը՝ այս հիմնական կանոնի կարևորությունը հնարավոր չէ գերազնահատել: Վերաբերվեք յուրաքանչյուր անհատի և իրավիճակի այնպես, ասես առկա է վնասելու զգալի հնարավորություն, քանի դեռ չկան հակառակի ապացույցներ.
- ◆ Ապահովեք անվտանգություն, պաշտպանություն և աջակցություն. նախքան թրաֆիքինգի պոտենցիալ գոհի հետ զրուցելը կամ նրա հետ զրուցելու ընթացքում չափազանց կարևոր է հավաստիանալ, որ անձն իրեն ապահով ու պաշտպանված է զգում: Բովանդակային երկխոսություն չի կարող ծավալվել, եթե անձն իրեն անհանգիստ է զգում: Հնարավորինս շուտ պետք է անձին ուղիղ հարցնել, թե արդյոք նա բժշկական օգնության կամ լավ ինքնազգացողության համար անհրաժեշտ այլ խնամքի կարիք ունի.
- ◆ Հարցերն առաջադրեք նրբանկատ և ողջամիտ ձևով. հարցերի հաջորդականությունը, դրանց ձևակերպումն ու դրանք ներկայացնելու տոնը չափազանց կարևոր են օգտակար տեղեկու-

²⁰ Բաժինը վերցված է «Ջոհերի հայտնաբերման և հարցազրույց վարելու հնարքների մասին» ՄՄԿ-ի՝ թրաֆիքինգի դեմ պայքարի թեմայով վերապատրաստման մոդուլից, էջ 26-29: Տես նաև Հավելված I. Թրաֆիքինգի ենթարկված անձանց խնամքին և նրանց հետ հարցազրույց անցկացնելուն առնչվող էթիկայի սկզբունքները, Թրաֆիքինգի գոհերին ուղղակի աջակցություն տրամադրելու մասին ՄՄԿ ձեռնարկ, էջ 308-327:



թյուններ ստանալու և անձին սթրեսի ենթարկելու կամ վիրավորելու ռիսկը նվազեցնելու առումով: Անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել երեխաներին հարցեր ուղղելու եղանակին.

- ◆ Լսեք ակտիվորեն և արձագանքելով. փորձեք ամուր կապ հաստատել պոտենցիալ գոհի հետ. դա կարող է նպաստել հետագա քննության հաջողությանը, այն է՝ պատասխանատվության ենթարկել թրաֆիքինգ իրականացնող անձանց (համակարգողներին) և վերականգնել գոհերի իրավունքները: Ակտիվ լսել՝ նշանակում է ամբողջ ուշադրությունը սևեռել խոսող անձին և նրա ասածին ու զգացնել, որ այն ամենը, ինչ զրուցակիցն ասում է, լսվում և ընկալվում է:

Ակտիվորեն և արձագանքելով լսելու մեթոդները ներառում են՝

- խոսելը դադարեցնելը.
- հարցեր տալը և պարզաբանելը.
- հարցին պատասխանելու համար անձին ժամանակ տրամադրելը.
- ուշադրությունը կենտրոնացնելը.
- ընկալող լինելը.
- գոհի ասածն ընդունելը.
- ուշադիր լինելն այն նշանների նկատմամբ, որոնք վկայում են, որ գոհն ընդմիջման կարիք ունի:
- ◆ Հաշվի առեք ցանկացած կանխակալ կարծիք կամ նախապաշարմունք. չափազանց կարևոր է, որ թրաֆիքինգի ենթարկված անձանց հետ աշխատող (կամ նրանց հայտնաբերել փորձող) անձինք գիտակցեն, որ իրենք կարող են ունենալ բացասական կանխակալ կարծիք կամ նախապաշարմունք՝ կապված անձի ռասայի, ազգության, սոցիալ-տնտեսական դրության, տարիքի, արդյունաբերության այն ճյուղի հետ, որտեղ անձը շահագործվել է, ինչպես նաև կրոնի, սեռի, սեռական կողմնորոշման, մշակույթի կամ այլ հարցերի հետ: Կարևոր է ընդունել այդ զգացմունքների գոյության փաստը և ապահովել, որ դրանք չդրսևորվեն այնպիսի վարքագծի միջոցով, որը հարցվող անձի մոտ ստորադասության զգացում կառաջացնի և կհանգեցնի երկրորդային վիկտիմիզացիայի:

- ◆ Եղեք օբյեկտիվ, մի դատեք. պոտենցիալ թրաֆիքինգի ենթարկված անձինք պետք է զգան, որ այն, ինչ իրենք ասում են, չի ստուգվում ճշմարտացիության հաստատման նպատակով: Նմանապես, կարևոր է հիշել, որ թրաֆիքինգի ենթարկված անձինք ունեն այլ անձանց չվստահելու, մոլորության մեջ գցելու, ձևացնելու և անցյալի իրենց տարբերակը փոփոխված ներկայացնելու իրական պատճառներ:
- ◆ Պահպանեք պրոֆեսիոնալիզմ. «գործել պրոֆեսիոնալ»՝ նշանակում է անձի նկատմամբ վարվել հարգանքի և հավասարության դիրքից: Անհրաժեշտ է խուսափել այնպիսի ոճից, որը ենթադրում է մտավոր կամ մասնագիտական գերակշռություն, ինչի հետևանքով աջակցություն ստացող անձը հայտնվում է անօգնականի կամ համակերպվողի դերում: Սա կնշանակեր դժվարին հավասարակշռություն, հատկապես այն անձանց համար, որոնք նախկինում ահաբեկման միջոցով հարկադրվել են համակերպման, կամ որոնք իրենց նախկին փորձի պատճառով, հնարավոր է, չվստահեն կամ նույնիսկ վախենան իշխանություններից: Տրավմայի ենթարկված անհատները շատ հեշտորեն են ընդունում իրենց կախվածությունը և իրենց թույլ ու ստորացած զգում: Պահպանեք պրոֆեսիոնալ հեռավորություն և մասնագիտորեն վարվեք, սակայն միաժամանակ եղեք կարեկցող և հարմարավետության զգացում ներշնչող:
- ◆ Վստահեցրեք զոհին, որ ինքը մեղավոր չէ. հիշեք, որ ինքնախարազանումը թրաֆիքինգի ենթարկված անձի դեպքում սովորական արձագանք է:



ՄԹ-ի բացահայտում. ցուցիչներ

Ինչ է ցուցիչը

Ցուցիչն ազդանշան է, որը պետք է գրավի սահմանապահների ուշադրությունը, հուշում է, ախտանշան, որը վկայում է որևէ իրավիճակի առկայության կամ բացակայության մասին և մասնավորապես այս դեպքում՝ այն փաստի մասին, որ մեկ կամ մեկից ավելի անձինք, հնարավոր է, ներգրավված են մարդկանց թրաֆիքինգի մեջ:

Ըստ էության, ցուցիչները նկարագրում են «դասագրքային» գոհին: Սակայն իրականում հազվադեպ կարելի է հանդիպել դասագրքային գոհի և ելնելով գոհի վերապրածից կամ նրան տրված ցուցումներից՝ նա կարող է գործել ճիշտ հակառակ կերպով: Օրինակ՝ նա կարող է հարձակողական վարքագիծ դրսևորել՝ երկչոտ և ինքնամփոփ վարքագծի փոխարեն:

Ավելի շատ ցուցիչների առկայությունը ավելի մեծ որոշակիության հնարավորություն կտա, սակայն շատ դեպքերում հենց միայն մի փոքր նշանը կամ որակն է, որ կտպավորի փորձառու սահմանապահին և հնարավոր է հանգեցնի հետագա քննության:

Ջոհին (պոտենցիալ գոհին) հայտնաբերելու ընդհանուր ցուցիչներ

Վարքագծային ցուցիչներ²¹

- ◆ Հսկողություն իրականացնող մարմինների հետ հաղորդակցվելուց խուսափելը (ուղևորների սովորական հոսքի հետ չշարժվելը, տեսահսկողության համակարգի տեսախցիկների տեսադաշտից դուրս գտնվող տարածքներ փնտրելը և այլն):
- ◆ Որպես խմբի անդամ ժամանելը, սակայն սահմանային վերահսկողության ժամանակ որպես անհատ ներկայանալը:
- ◆ Ձևացնելը, որ միմյանց չեն ճանաչում, տարբեր գոտիներով գնալը:
- ◆ Վարքագծի ծայրահեղ դրսևորումները (օրինակ՝ չափազանց հնազանդ լինելը, չափազանց վստահ լինելը, չափազանց կտրուկ արձագանքելը և այլն):

²¹ Օդային սահմանին մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման մեջ ներգրավված հանցավոր կազմակերպությունների բացահայտման և վերացման վերաբերյալ գործնական Վեգա ձեռնարկի հիման վրա, Ֆրոնտեքս, 2012 թվական:

- ◆ Չափազանց պասիվ վարքագիծը, մասնավորապես՝ խմբի դեկավարից/համակարգողից առանձնանալու դեպքում խմբի անդամների հետ չշփվելը:
- ◆ «Վերահսկվելու» նշաններ ցույց տալը, այնպես գործելը, ասես ինչ-որ մեկը ցուցումներ է տվել իրենց, թույլ տալը, որ մեկ ուրիշը խոսի իրենց փոխարեն, ինչ-որ մեկի վերբալ կամ ոչ վերբալ ազդանշաններին համապատասխան գործելը և այլն:
- ◆ Պարզորոշ նկատվող նյարդային վիճակը, խոսակցի աչքերին նայելուց խուսափելը:
- ◆ Վախի նշաններ ցույց տալը:
- ◆ Ոչ պատշաճ միմիկա և ժեստեր կամ սիրախաղ սահմանապահների հետ:

Արտաքին ցուցիչներ²²

- ◆ Սպիներն ու կապտուկները՝ որպես ոտնձգությունների կամ բռնի գործողությունների, ինքնավնասման, թմրամիջոցների կամ ալկոհոլի հնարավոր չարաշահման (ապօրինի և օրինական) նշան:
- ◆ Անհատի հագուստը և նրա մոտ եղած բոլոր պարագաները չեն համապատասխանում նրա ֆինանսական վիճակին:
- ◆ Տարիքը, սեռը, հագուստը, ուղեբեռը և, ընդհանուր առմամբ, այն ամենը, ինչը կհամապատասխաներ թրաֆիքինգի որոշակի ձևի (աշխատանքային շահագործում, սեռական շահագործում և այլն) ենթարկված գոհի (պոտենցիալ գոհի) նկարագրին

Այլ ցուցիչներ²³

- ◆ Իրենց տրամադրության տակ սեփական ճամփորդական փաստաթղթերը կամ այլ օժանդակ փաստաթղթեր (անձնագիր, տոմսեր, փող, հրավեր և այլն) չունենալը կամ դրանք չտնօրինելը:

²² Օդային սահմանին մարդկանց թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխման մեջ ներգրավված հանցավոր կազմակերպությունների բացահայտման և վերացման վերաբերյալ գործնական Վեգա ձեռնարկի հիման վրա, Ֆրոնտեքս, 2012 թվական:

²³ Հիմնված է Օդային սահմանին մարդկանց թրաֆիքինգի և անօրինական միգրացիայի կազմակերպման մեջ ներգրավված հանցավոր կազմակերպությունների բացահայտման ու վերացման, վերաբերյալ գործնական ձեռնարկի (Վեգա ձեռնարկ) վրա, Ֆրոնտեքս, 2012 թվական:



- ◆ Կեղծված փաստաթղթեր ներկայացնելը կամ կեղծ ինքնություն
օգտագործելը (ավելի հավանական է՝ ինչ-որ մեկի օգնությամբ):
- ◆ Ծխակարգի միջոցով վերահսկման, հմայության, ինտերնե-
տային սիրավեպերի, արտաքին տեսքի նախապատրաստման
վկայությունները:
- ◆ Սահմանափակ, անսովոր կամ չգրանցված ուղեբեռը կամ մեկ
այլ վայր ուղարկված ուղեբեռը (որպես ծուղակ):
- ◆ Ընտանեկան/այլ հարաբերությունները, պարզվում է, իրակա-
նում այնպիսին չեն, ինչպես ներկայացվել են (օրինակ՝ տարիքի
հետ կապված անհամապատասխանությունները, շատ կարճ
ժամանակահատվածում ծնված երեխաների արտասովոր թիվը
և այլն):
- ◆ Անձնական կարևորագույն տվյալները (ծննդյան ամսաթիվ,
տարիք) նշելու անկարողությունը:
- ◆ Կացարանի/տան, աշխատանքի վայրի կամ այլ վերաբերելի
հասցեներ նշելու անկարողությունը:
- ◆ Ճամփորդության նպատակների, ուղևորության և տվյալ վայ-
րում հանգրվանելու հետ կապված կազմակերպական հարցերի
մասին որևէ պատկերացում չունենալը կամ սահմանափակ
պատկերացում ունենալը:
- ◆ Տանը բարդ կամ խնդրահարույց իրավիճակի առկայությունը:

Հարցեր, որ պետք է մտքում ունենալ

**Արդյո՞ք այս անձն իրեն պահում է այնպես, ինչպես ես
կակնկալեի:**

**Արդյո՞ք այս անձը ճամփորդում է ինչ-որ մեկի հետ, կամ
հանդիպելու է ինչ-որ մեկին:**

**Ձեր կողմից հավաքվող ցանկացած տեղեկություն կարող է
այսօր դառնալ քրեական հետապնդման համար: Անհրաժեշտ է
կատարել նշումներ, պահպանել ցանկացած ապացույց:**

Թրաֆիքինգ իրականացնող անձը (թրաֆիքինգ իրականացնող անձինք)

Որոշ ընդհանուր տեղեկություններ

Թրաֆիքինգ իրականացնող անձինք կարող են՝

- ◆ լինել միջազգային կազմակերպված (մասնագիտացված) հանցավոր խմբերի անդամներ.
- ◆ ներկայացնել փոքր հանցավոր ցանցեր, որոնք պարտադիր չէ, որ վերահսկվեն խոշոր հանցավոր ցանցերի կողմից.
- ◆ աշխատել թույլ կառուցվածք ունեցող փոքր խմբերով՝ ներառյալ ընտանիքի անդամները:

Տարբեր իրավախախտումների (կոռուպցիա, փաստաթղթերի կեղծում, աշխատանքային ու ներգաղթի օրենքների խախտում և այլն) և իրավախախտների շղթա է կապված Թրաֆիքինգի գործընթացի հետ:

Տարբեր խմբեր մասնագիտացած են թրաֆիքինգի գործընթացի տարբեր փուլերում (օրինակ՝ հավաքագրում, փոխադրում կամ շահագործում):

Թրաֆիքինգ իրականացնող խմբերն ու ցանցերը հաճախ կազմված են համասեռ էթնիկ կամ ազգային խմբերից (օրինակ՝ Նիգերիայի քաղաքացիներ, ալբանախոս մարդիկ):

Թրաֆիքինգ իրականացնող անձանց վերաբերյալ տեղեկությունների ընդհանուր կատեգորիաներ, որոնք պետք է հաշվի առնել²⁴

- ◆ Սեռ
- ◆ Քաղաքացիություն
- ◆ Թրաֆիքինգ իրականացնող անձանց տարիքը
- ◆ Ընտանեկան/ամուսնական կարգավիճակ
- ◆ Ճամփորդությունների պատմությունը (օդային փոխադրումների հաճախականությունը)
- ◆ Թրաֆիքինգ իրականացնող անձանց զբաղմունքը, կրթությունը և դատվածության մասին տեղեկություններ

²⁴ Անհրաժեշտ է հաշվի առնել, որ ընդհանուր ցուցիչները կարող են կիրառելի լինել թրաֆիքինգի պոտենցիալ զոհերի և (կամ) թրաֆիքինգ իրականացնող անձանց դեպքում:



Թրաֆիքինգ իրականացնող անձանց հայտնաբերելու ցուցիչներ

- ◆ Որոշակի գործերով, ինչպես օրինակ՝ անօրինական միգրացիայի կազմակերպման, փաստաթղթերի կեղծման կամ ապօրինի կերպով զենք պահելու համար դատվածություն ունենալը:
- ◆ Անձ, որը թրաֆիքինգի պոտենցիալ զոհի հետ բնակվում է հյուրանոցի նույն սենյակում կամ նույն բնակարանում:
- ◆ Անձ, որի մոտ չհիմնավորված կերպով առկա են առևտրային ընկերությունների կամ բանկերի միջոցով դրամական փոխանցումների ստացականներ:
- ◆ Անձ, որը կարող էր կապ ունենալ ուղեկցման ծառայությունների, շոգեբաղնիքների կամ հասարակաց տների հետ:
- ◆ Անձ, որի մոտ առանց հիմնավոր պատճառի առկա են (օրինակ՝ ինչպես հայտնաբերվել է խուզարկության ընթացքում) մեկ այլ անձի փաստաթղթեր կամ անձնական իրեր (օրինակ՝ գրառումներ, բջջային հեռախոս, նկարներ):
- ◆ Որոշ դեպքերում թրաֆիքինգ իրականացնող անձինք կարող են նախկինում թրաֆիքինգի ենթարկված լինել: Այդպիսի դեպքեր հաճախ զրանցվել են հարկադրյալ պոռնկության առնչությամբ: Այդ պարագայում, չի բացառվում, որ նրանք սեռական բնույթի ծառայություններ առաջարկեն զոհերի հետ մեկտեղ. սովորաբար նրանք զոհերի գործողությունները վերահսկողներն են: Այս «վերահսկողների» դերը ապահովելն է, որ շահագործման ենթարկված զոհի համար բացառվի փախուստի դիմելու և (կամ) օգնություն փնտրելու հնարավորությունը: Լավ կանոն է սահմանային ստուգման կամ շուրջկալի ժամանակ իրավապահ հաստատության տարածքում պահվող անձանց առանձնացնելը և նրանց առանձին ստուգելը:

Առանցքային հարցերը

Նշումներ վերապատրաստողի համար	Այս բաժնում ներառված են մի շարք հարցեր, որոնք կարող են տրվել/պետք է տրվեն՝ կախված պոտենցիալ ԹԶ-ի մասին վկայող որոշակի ցուցիչների առկայությունից:
Հղումներ	UN.GIFT-ի VITA գործիք (http://www.ungift.org - ընտրել «գործիքները»)

Ստորև թվարկված առանցքային հարցերը առաջին գծի սահմանապահների համար պետք է համարվեն օրինակ, ուղեցույց կամ առաջարկություն: Առանցքային հարցերը պետք է տրվեն՝ մտքում ունենալով հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները:

Ուղևորությանը վերաբերող հարցեր

- ◆ Որտեղից եք գալիս²⁵: Ո՞ր եք գնում:
- ◆ Ի՞նչ նպատակով եք եկել այս երկիր:
- ◆ Որտեղ եք մնալու: Ո՞ր հյուրանոցում: Ո՞ր քաղաքում:
- ◆ Ի՞նչ վայրեր եք այցելելու: Պլանավորո՞ւմ եք այցելել որևէ տեսարժան վայր: Կարո՞ղ եք մի փոքր մանրամասնել:
- ◆ Արդյո՞ք հյուրանոցում ամրագրել եք սենյակ: Քանի՞ գիշեր եք այնտեղ գտնվելու: Արդյո՞ք արդեն վճարել եք սենյակի համար:
- ◆ Ո՞վ է ամրագրել Ձեր տոմսերը և վճարել դրանց համար: Քանի՞ հատ: Ե՞րբ: Որտե՞ղ:
- ◆ Ո՞ւմ ավտոմեքենան է սա: Ինչպե՞ս պատահեց, որ դուք ճամփորդում եք այս ավտոմեքենայով: Որտեղից է վարորդը Ձեզ վերցրել: Ո՞ր է նա Ձեզ տանում:
- ◆ Ինչո՞ւ եք ճամփորդում այս մարդու հետ: Ո՞վ է վճարում բենզինի համար: Արդյո՞ք ծախսերը միասին եք հոգում:
- ◆ Ո՞ր է Ձեր վերադարձի տոմսը: Ե՞րբ եք նախատեսում վերադառնալ: Ո՞ր օդանավակայանից:
- ◆ Ինչպե՞ս եք նախատեսում վերադառնալ Ձեր երկիր:

²⁵ Եթե անձը գալիս է այնպիսի երկրից կամ աշխարհի այնպիսի տարածաշրջանից, որը, ինչպես հայտնի է, ենթակա է պատերազմի, զինված հակամարտության, մարդու իրավունքների ռստահարումների կամ խախտումների ազդեցությանը, կամ գալիս է այնպիսի վայրից, ինչպիսին փախստականների ճամբարն է, ապա դա կարող է վկայել, որ անձը միջազգային պաշտպանության կարիք ունի:



Ճամփորդական փաստաթղթերին վերաբերող հարցեր

Ուշադրություն. եթե անձը ներկայացնում է նաև իր ճամփորդակցի փաստաթուղթը (փաստաթղթերը), ապա նախընտրելի է համեմատել փաստաթղթերի որոշակի տվյալներ, օրինակ՝ կատարած ուղևորությունների թիվն ու նպատակակետ վայրերը, վիզաների թիվը և այլն:

- ◆ Ի՞նչ է Ձեր անունը: Ո՞րտեղ եք ծնվել:
- ◆ Ամուսնացած եք, թե ամուրի: Ունե՞ք երեխաներ: Որտե՞ղ են նրանք:
- ◆ Ի՞նչ մասնագիտություն ունեք:
- ◆ Որտե՞ղ և ե՞րբ եք ստացել ձեր ճամփորդական փաստաթուղթը: Ի՞նչ փաստաթուղթ եք ներկայացրել այն ստանալու համար:
- ◆ Փաստաթղթի վրա Ձե՞ր ստորագրությունն է:
- ◆ Ո՞րն է Ձեր անձնագրի համարը (այս հարցին շատ քիչ մարդիկ են կարողանում պատասխանել, ուստի, պատասխանելու հանգամանքը սահմանապահի մոտ պետք է կասկած հարուցի):

Պոտենցիալ թրաֆիքինգ իրականացնող անձին վերաբերող հարցեր

- ◆ Ո՞վ է Ձեզ հետ ճամփորդում: Ի՞նչ է նրա անունը: Որտե՞ղ եք նրան հանդիպել: Որտե՞ղ եք նրան տեսել առաջին անգամ:
- ◆ Արդյո՞ք նրան լավ եք ճանաչում: Արդյո՞ք վստահում եք այս անձին:
- ◆ Ինչո՞ւ եք ճամփորդում այս անձի հետ:
- ◆ Որտեղի՞ց է նա Ձեզ վերցրել ավտոմեքենայով:
- ◆ Արդյո՞ք սա նրա ավտոմեքենան է:
- ◆ Ինչո՞ւ է Ձեր անձնագիրը գտնվում այս անձի մոտ:
- ◆ Ինչո՞ւ է նա ներկայացրել Ձեր փաստաթուղթը սահմանի անցման կետում:

Եթե որևէ ցուցիչի և այլ տեղեկության հիման վրա սահմանապահը հանգում է եզրակացության, որ անձը թրաֆիքինգի հանցագործության զոհ (պոտենցիալ զոհ) է կամ վկա, ապա հարցեր տալու գործընթացը պետք է դադարեցվի՝ անձի պաշտպանվածությունը և հետագա քրեական հետապնդման որակը չվտանգելու նպատակով: Անհրաժեշտ է զոհին (պոտենցիալ զոհին) հնարավորինս շուտ ուղղորդել երկրորդ գիծ:

VITA (Վիտա)

Ջոհին թարգմանչական աջակցություն տրամադրելու գործիք

Այս աուդիո գործիքը, որը կազմված է հանդիպման ժամանակ հարկավոր առանցքային հաղորդագրություններից, մշակվել է՝ դյուրացնելու թրաֆիքինգի ենթարկված անձանց հայտնաբերումն ու քրեական հետաքննության մեկնարկը: Ձայնագրվել են երեսունհինգ հիմնական հարցեր ու հաղորդագրություններ, և դրանք թարգմանվել են 40 լեզվով, իսկ երեխաների համար նախատեսված են հատուկ հարցեր:

*Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս հետևյալ կայքը՝
<http://www.ungift.org> (ընտրեք «գործիքները» (tools))*



Թրաֆիքինգի երեխա զոհերի (պոտենցիալ զոհերի) բացահայտումը

Նշումներ
վերապատրաստողի
համար

Այս բաժնում ներառված են այնպիսի տեղեկություններ և խորհուրդներ, որոնք առաջին գծի աշխատակից սահմանապահներին կօգնեն բացահայտել մարդկանց թրաֆիքինգի զոհ դարձած կամ պոտենցիալ զոհ երեխաներին:

Վերապատրաստողը պետք է հասկանա, որ տարածության և ժամանակի մեջ ցուցիչները տարբերվում են: Վերապատրաստողը պետք է ներառի և շեշտի տվյալ վայրին բնորոշ ու իրական ցուցիչները, որոնք վերաբերելի են մասնակիցներին:

Այս բաժնում թվարկված են նաև որոշ հարցեր, որոնք առաջին գծի աշխատակիցներին պետք է հնարավորություն ընձեռեն բացահայտելու թրաֆիքինգի երեխա զոհերին (պոտենցիալ զոհերին):

Վերապատրաստողը պետք է դիտարկի վերապատրաստմանը մասնակցելու նպատակով փորձագետ/հոգեբան հրավիրելու հնարավորությունը:

Հղումներ

Պայքարը սեռական շահագործման նպատակով երեխաների թրաֆիքինգի դեմ. վերապատրաստողի ուղեցույց, ECPAT

*(Տե՛ս նաև չափահասների դեպքերի համար
նախապեսված հղումները:)*

Սկզբունքներ, որոնք երեխայի հետ աշխատելիս հարկ է մտքում ունենալ

Երեխայի հետ շփվելիս Ձեզ համար պետք է առաջնային լինեն նրա լավագույն շահերը: Ձեր բոլոր գործողությունները պետք է հիմնված լինեն մարդու իրավունքների պաշտպանության և դրանց նկատմամբ հարգանքի սկզբունքների վրա, ինչպես նախատեսված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով:

Անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի զարգացման փուլը, նրա տարիքը և սեռը: Տասնութ տարին չլրացած բոլոր երեխաների հետ

պետք է վարվել՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները և առանձնակի խոցելիությունը: Երեխայի հետ միշտ պետք է խոսել նրա տարիքին համապատասխան լեզվով: Երեխային արագ հարցեր ուղղելու ամբողջ ընթացքում պետք է հաշվի առնել երեխայի սեռը:

Անհրաժեշտ է որդեգրել այնպիսի մոտեցում, որը չի վախեցնի երեխային. պետք է ուշադրություն դարձնել ձայնի տոնին, ժեստերին և երեխայի չափսերին: Թրաֆիքինգի պոտենցիալ գոհ երեխաներին վաղ փուլում հայտնաբերելու նպատակով տեղեկություններ հավաքելը հարցաքննություն չէ:

Անհրաժեշտ է ուսումնասիրել երեխային, ուշադրություն դարձնել նրա դեմքի արտահայտություններին, ժեստերին ու մարմնի լեզվին և ուշադիր լինել երեխայի մոտ տանջանքի նշանների նկատմամբ:

Անհրաժեշտ է հասկանալ, թե արդյոք երեխան ունի տրավմա, ֆիզիկական կամ մտավոր անկարողություն, արդյոք նրա մոտ նկատվում են տանջանքի նշաններ, արդյոք ունի կապտուկներ կամ գուցե որևէ այլ վնասվածք է ստացել, կամ ինքնազգացողությունը վատ է: Երկրորդ օղակի սահմանապահները պետք է տեղեկացվեն, որ կարողանան նրանց ուղղորդել խնամք իրականացնող համապատասխան աշխատակիցների/բուժաշխատողների մոտ:

Եթե երեխան ուղղորդվել է երկրորդ օղակ՝ հարցազրույցի, ապա անհրաժեշտ է նրան բացատրել ուղղորդման նպատակը: Պետք է ձգտել խուսափել երեխային հավելյալ վնասելուց:

Մարդկանց թրաֆիքինգի գոհ դարձած երեխային վերաբերող որոշակի ցուցիչներ

- ◆ Մարմնի լեզու.
 - ամաչկոտություն,
 - երկչոտություն,
 - խոսակցի աչքերին նայելուց խուսափելը,
 - ցած նայելը,
 - ինքնամփոփություն,
 - վախեցած տեսք ունենալը,
 - խմբի մյուս անդամներից մեկուսի թվալը,
 - երեխային անտեսող մեկ կամ մեկից ավելի անձանց հետ տեսողական կապ հաստատելու փորձ կատարելը:



- ◆ Ծնողների/ուղեկցող անձանց նկատմամբ երեխայի վերաբերմունքը.
 - ուսումնասիրել, թե արդյո՞ք երեխան հանգիստ է զգում իրեն ուղեկցող չափահասի կողքին.
 - արդյո՞ք երեխան կարողանում է ազատորեն խոսել.
 - արդյո՞ք առկա են նշաններ, որ երեխան վախենում է ուղեկցող չափահասից.
 - կա՞ որևէ ֆիզիկական նմանություն չափահասներին.
 - եթե մեկ ընտանիքում կա մի քանի երեխա, ապա անհրաժեշտ է համեմատել երեխաների և ծնողների ծննդյան ամսաթվերը՝ ստուգելու հնարավոր անհամապատասխանությունները:
- ◆ Փաստաթղթեր.
 - եթե երեխաներն ունեն եվրոպական անձնագիր կամ բնակության (կեցության) թույլտվություն, ապա պետք է լինի որևէ ապացույց, որ նրանք մեկնել են Եվրոպայից՝ այժմ վերադառնալու նպատակով.
 - եթե երեխաներն ունեն եվրոպական անձնագիր կամ բնակության (կեցության) թույլտվություն, ապա նրանց մեծամասնությունը պետք է հասկանա որևէ եվրոպական լեզու.
 - եթե ծնողները չեն ուղեկցում երեխաներին, ապա անհրաժեշտ է ստուգել, թե արդյո՞ք ուղեկցող անձի մոտ առկա է ճամփորդության համար օրենքով սահմանված թույլտվություն.
 - ստուգել, թե արդյո՞ք երեխաների և ուղեկցող անձի համար ամրագրված է նույն հյուրանոցը:

Թրաֆիքինգի պոտենցիալ զոհ երեխաներին առաջին օղակում տրվող որոշակի հարցեր

Միայնակ կամ առանց իր ծնողների սահմանը հատող երեխան կարող է լինել երեխաների թրաֆիքինգի զոհ: Քիչ հավանական է, որ թրաֆիքինգի ենթարկված երեխաները երբևէ բացահայտեն, որ հանցանք է կատարվում, քանի որ նրանք չեն գիտակցում, որ վաճառվել կամ վաճառվելու են կամ, այլ կերպ, շահագործվում կամ շահագործվելու են: Այն անձը, որը պնդում է, որ ինքը երեխայի ազգականն է, չի բացառվում, որ իրականում ներգրավված լինի երեխաների թրաֆիքինգի մեջ:

Երեխայի հետ շփվելիս մշտապես պետք է հաշվի առնել երեխայի տարիքն ու սեռը: Ստորև ներկայացված են առաջին գծում տրվող հարցերը, որոնք կարող են բացահայտել թրաֆիքինգի փաստը:

- ◆ Որտեղից եք գալիս²⁶: Ո՞ր եք գնում:
- ◆ Ո՞ւմ հետ եք ճամփորդում (ծնողների/օրինական ներկայացուցչի/ազգականների):
- ◆ Որտեղ են Ձեր ծնողները (օրինական ներկայացուցիչները): Ե՞րբ եք վերջին անգամ տեսել Ձեր ծնողներին:
- ◆ Որտեղ է այն անձը, որի հետ դուք ճամփորդում եք: Ո՞վ է պատասխանատու Ձեզ համար ուղևորության ընթացքում:
- ◆ Ո՞ր եք գնում:
- ◆ Ո՞վ է հոգ տանելու Ձեր մասին ճամփորդության ավարտից հետո:
- ◆ Ո՞վ է կազմակերպել ճամփորդությունը:
- ◆ Ո՞վ է վճարել ճամփորդության համար:

Ինչպես չափահասների դեպքում, այնպես էլ այս դեպքում, եթե որևէ ցուցիչի (կամ) այլ տեղեկության հիման վրա սահմանապահը եզրակացնում է, որ երեխան թրաֆիքինգի հանցագործության զոհ (պոտենցիալ զոհ) է կամ վկա, ապա հարցեր տալու գործընթացը պետք է դադարեցվի՝ երեխայի պաշտպանվածությունը և հետագա քրեական հետապնդման որակը չվտանգելու նպատակով: Զոհին (պոտենցիալ զոհին) հնարավորինս շուտ ուղղորդեք երկրորդ օղակ:

²⁶ Եթե երեխան գալիս է աշխարհի այնպիսի տարածաշրջանից, որը, հայտնի է, որ ենթակա է այնպիսի երևույթների ազդեցությանը, ինչպիսիք են պատերազմը, զինված հակամարտությունը, անկայունությունը կամ մարդու իրավունքների խախտումները, կամ այնպիսի վայրից, ինչպիսին է փախստականների ճամբարը, սա կարող է վկայել, որ երեխան, հնարավոր է, միջազգային պաշտպանության կարիք ունի:



Սահմանային վերահսկողության երկրորդ օղակ ուղղորդելը

Նշումներ
վերապատ-
րաստողի համար

Այս բաժնում ներկայացվում է համապատասխան գործողությունների, ուղղորդման և փոխանցման շրջանակ այն դեպքի համար, երբ առաջին օղակի սահմանապահը բախվել է այնպիսի ցուցիչների կամ ապացույցների, որոնք վկայում են մեկ կամ ավելի անձի ներգրավվածությունը ՄԹ-ի մեջ:

Վերապատրաստողը պետք է իրազեկ լինի ազգային և (կամ) նույնիսկ տվյալ վայրին բնորոշ լավագույն փորձին, որին պետք է առաջնահերթություն տրվի՝ հաշվի առնելով հիմնարար սկզբունքներն ու երաշխիքները:

Ունեմ ահա վեց ազնիվ ծառա

(Նրանցից եմ ամեն բան սովորել).

Նրանց անուններն են Ինչ և Ինչու և Երբ

և Ինչպես և Որտեղ և Ով:

Ռադյարդ Բիլիինգ, 1902 թվական

Այն դեպքում, երբ, սահմանապահի գնահատմամբ, առկա է ՄԹ-ի հնարավորություն կամ ապացույց, նա պետք է առաջնայնություն տա պատշաճ կանխարգելմանը, հնարավոր քրեական հետապնդման հաջողությանը և բոլոր ներգրավված կողմերի պաշտպանությանը: Սահմանապահ ծառայությունը պետք է ունենա առաջին օղակից երկրորդ օղակ փոխանցելու ստանդարտ աշխատակարգ: Ստորև ներկայացված ցուցումների ցանկն, իհարկե, սպառիչ չէ:

Պատշաճ կանխարգելման համար

- ◆ Որևէ կասկած ունենալու դեպքում ուղղորդել երկրորդ գիծ:
- ◆ Կողմերին պահել առանձին:

- ♦ Ճիշտ և հարգալից վերաբերմունքը նույնպես կօգնի կանխել իրավիճակի սրումը:
- ♦ Կանխել փախուստը, այդ թվում՝ զոհի (պոտենցիալ զոհի) փախուստը:
- ♦ Բոլոր կողմերը պետք է մշտապես պատշաճ դիտարկվեն և հսկվեն (հաշվի առնելով նրանց, ամենայն հավանականությամբ, անորոշ կարգավիճակը որպես զոհ կամ հանցագործություն կատարող անձ և մտքում պահելով ծայրահեղ ու սթրեսային արձագանքների հնարավորությունը):

Քրեական հետապնդման հաջողության համար

- ♦ Եթե հայտնաբերվել է որևէ ցուցիչ, ապա պետք չէ փորձել քննություն իրականացնել կամ լրացուցիչ հարցեր տալ, քանի որ դա կարող է անգամ վտանգել գործի հետագա քննությունը, իսկ թրաֆիքինգի զոհի (պոտենցիալ զոհի) դեպքում պետք է խուսափել բազմակի հարցազրույցներից: Պարզապես պետք է որոշում ընդունել երկրորդ օղակ ուղղորդելու մասին:
- ♦ Անհրաժեշտ է առանձին-առանձին տեղեկացնել առաջին օղակի մյուս գործընկերներին (նրանք, հնարավոր է, հանդիպեն ուրիշ պոտենցիալ զոհերի, թրաֆիքինգ իրականացնող անձանց, հանցակիցների կամ վկաների):
- ♦ Օժանդակություն հայցեք (առաջին կամ երկրորդ օղակից) և բացառեք փախուստի հնարավորությունը:
- ♦ Կողմերին պահեք առանձին:
- ♦ Բոլոր կողմերը պետք է հսկվեն, քանի որ անհրաժեշտ է պարզել նրանց կարգավիճակը (որպես զոհ կամ հանցագործություն կատարող անձ), և հնարավոր է՝ զոհն ու հանցագործություն կատարող անձը համագործակցում են:
- ♦ Ապահովեք, որ բոլոր (հնարավոր) ապացույցները, ներառյալ՝ հաղորդակցության բոլոր միջոցները, պահպանվեն կալանելու և հետագա փոխանցման ժամանակ:
- ♦ Հետևեք հնարավոր ուղեբեռին:
- ♦ Կարևոր տեղեկությունները հաղորդեք կարճ և արդյունավետ կերպով. դուք կարող եք օգտագործել «հինգ W-ների (և մեկ H-ի)» սկզբունքը, որը հայտնի է նաև որպես «վեց W-ներ»:



- Երբ դա պատահեց (When):
- Պատահածի մեջ ինչն էր ոչ բնականոն (What):
- Ո՞վ էր ներգրավված (Who):
- Որտեղի՞ց էին անձինք գալիս, ո՞ր էին գնում, և որտե՞ղ են նրանց կանգնեցրել (Where):
- Ինչո՞ւ եք կարծում, որ սա ՄԹ-ի դեպք է (Why):
- Ինչպե՞ս էր, Ձեր կարծիքով, պլանավորվել իրականացումը (How):

Գրի առեք բոլոր մանրամասները և հնարավորինս շուտ հաղորդեք դրանք երկրորդ օղակ:

Պաշտպանության համար

- ◆ Որպես սահմանապահ՝ ձեր անվտանգությունն առաջնային է: Դա Ձեր հետագա գործողություններում հաջողության հասնելու կարևոր գործոններից է: Մտապահեք Ձեր ծառայության անվտանգության և պաշտպանվածության ստանդարտ միջոցները, ինչպես նաև հիշեք, որ չի բացառվում՝ զոհը և հանցագործություն կատարող անձը համագործակցեն:
- ◆ Անհրաժեշտ է առանձին-առանձին ու արագ տեղեկացնել առաջին օղակի մյուս գործընկերներին կամ կառավարիչներին և հավաստիանալ, որ առկա է օժանդակություն ու համակարգված մոտեցում:
- ◆ Կողմերին պահեք առանձին և հսկողության ներքո:
- ◆ Պատրաստ եղեք հուզական արձագանքների:
- ◆ Եթե փոխանցումն իրականացվում է ավտոմեքենայով, ապա նախապատվությունը պետք է տրվի առանց նշումների տրանսպորտային միջոցներին, հատկապես այն դեպքերում, երբ փոխանցվում են երեխաներ:
- ◆ Կողմերին հնարավորինս հեռու պահեք հանրության տեսադաշտից և, հնարավորության դեպքում, հանրությունից:
- ◆ Խուսափեք տեսողական հաղորդակցությունից, ինչպես նաև բոլոր այն խոսակցություններից, որոնք կարող են լավել:

- ♦ Ժամանակ մի կորցրեք և երկրորդ օղակին տեղեկացրեք, որ անձն ուղղորդվում է իրենց մոտ:
- ♦ Երկրորդ օղակի համար նախատեսված նախնական տեղեկությունների մեջ պետք է արդեն իսկ նշված լինի, որ տվյալ անձը, հնարավոր է, օգնության, այդ թվում՝ բուժօգնության կամ այլ մասնագիտական խնամքի կարիք ունի:



ՄՈԴՈՒԼ 3

Հարցազրույցների անցկացում

Սույն մոդուլը նախատեսված է երկրորդ օղակի սահմանապահների համար: Մոդուլի նպատակն է ամուր հիմք ապահովել այնպիսի հարցազրույցի համար, որը պետք է թույլ տա վերջնական գնահատելու, թե արդյոք անձը մարդու թրաֆիքինգի զոհ (պոտենցիալ զոհ) է՝ հաշվի առնելով աջակցություն ցուցաբերելու, ինչպես նաև սոցիալական, դատական և վարչական հետագա միջոցներ ձեռնարկելու նպատակով ամենաարդյունավետ ուղղորդման ցանկացած անհրաժեշտություն:

Ուսումնական ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Այս մոդուլի ավարտին մասնակիցները կկարողանան՝

1. սահմանել հարցազրույցների անցկացման այն կոնկրետ տեխնիկական հնարքների կիրառության հիմքը, պատճառները և դրանց տեսակները, որոնք ՄԹ-ի հետ կապված աշխատանքների շրջանակներում պահանջում են հատուկ հմտություններ.
2. որոշել ՄԹ-ի զոհի (պոտենցիալ զոհի) հնարավոր խոցելիությունները և պաշտպանության կարիքները՝ ելնելով զոհի տեսակից (հատկապես երեխա զոհեր և տրավմայի ենթարկված զոհեր, մասնավորապես՝ գենդերային հիմքով բռնության զոհեր), և հաշվի առնելով, թե ինչպես կարող է սա անդրադառնալ հարցազրույցի արդյունքի վրա.
3. հարցազրույց վարել պատշաճ ձևով՝ օգտագործելով «յոթ քայլի մոդելը».
4. հասկանալ նախապատմությունը և երեխա զոհի (պոտենցիալ զոհի) հետ հարցազրույց անցկացնելիս կիրառել տարբեր հմտություններ, հնարքներ, պաշտպանական միջոցներ և ընթացակարգեր.
5. հավաքված տեղեկություններն ստանալ և ուղարկել համապատասխան երրորդ կողմերին.
6. զոհի (պոտենցիալ զոհի) համար երաշխավորել անհրաժեշտ պաշտպանություն և աջակցություն, որը հասանելի է սահմանապահի գործառնական միջավայրում:



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԼԱՆ

Բովանդակություն	Մեթոդ	Գործիքակազմ
Ներածություն	Դասախոսություն	
	Դեպքի ուսումնասիրություն Տեսաշար Խմբային քննարկում	- Կասիա, «Լա Ստրադա»-ի տեսանյութ - Ներածություն, պրեզենտացիա
Հարցազրույցը	Մտազրոհ	Ինչ անել և ինչ՝ ոչ, պրեզենտացիա
	Դասախոսություն	«Պեզաս»՝ յոթ քայլի մոդել, բաժանվող նյութ «Պեզաս». յոթ քայլի մոդել, պրեզենտացիա
Երեխաների հետ հարցազրույց անցկացնելը	Մտազրոհ	Երեխաների հետ հարցազրույց անցկացնելը, պրեզենտացիա
	Դասախոսություն	Երեխա գոհերի դեպքում կիրառվող ընթացակարգերի ձևանմուշ, բաժանվող նյութ
Հավաքված տեղեկությունների հետ կապված հետագա գործողությունները	Դասախոսություն	Տեղեկություններ, պրեզենտացիա
	Դեպքի ուսումնասիրություն և քննարկում	ՄՄԿ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի համատեղ զննման ձև, բաժանվող նյութ
	Դերախաղ	ՄՄԿ-ի՝ թրաֆիքինգի գոհերի հետ զննման նպատակով հարցազրույցի անցկացման ձև, բաժանվող նյութ

Ուղղորդում, օգնություն, աջակցություն և պաշտպա- նություն 2011/36/ԵՄ հրահանգի համաձայն	Դասախոսություն	◆ ԵՄ հրահանգ, պրեզենտացիա
Վարժություն, գնահատում	Դերախաղ	◆ The Dutch connection (Հոլանդական կապը), պրեզենտացիա ◆ The Dutch connection (Հոլանդական կապը), բաժանվող նյութ ◆ Թրաֆիքինգի զոհի դերախաղի ցուցումներ ◆ Թրաֆիքինգի պոտենցիալ զոհի դերախաղի ցուցումներ



ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Ներածություն

Նշումներ
վերապատ-
րաստողի
համար

Այստեղ դուք կգտնեք բազմաթիվ փաստարկներ, թե ինչու հարցազրույցի անցկացման հատուկ տեխնիկական հնարքները կօգնեն ՄԹ-ի հայտնաբերման գործում, որոշելու՝ ա) ինչ է անհրաժեշտ գոհերի պաշտպանությունն ապահովելու համար, բ) ինչն է կարևոր հետագա քննության համար, և գ) ի վերջո, ինչը կպաշտպանի նաև հենց իրեն՝ սահմանապահին:

Հղումներ

«Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի ու դրա գոհերի պաշտպանության և հտորհրդի 2002/629/ԱԵԳ շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական պառլամենտի և հտորհրդի 2011 թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ հրահանգ:

Կանանց և դեռահասների թրաֆիքինգի առողջական ռիսկերն ու հետևանքները. Եվրոպական հետազոտության տվյալներ, Եվրոպական հանձնաժողովի «Դափնե» ծրագիր, 2003 թվական:

Գողացված ժպիտներ. Եվրոպայում թրաֆիքինգի ենթարկված կանանց և դեռահասների ֆիզիկական ու հոգեկան առողջության վրա հետևանքների վերաբերյալ ամփոփ գեկույց, Եվրոպական հանձնաժողովի «Դափնե» ծրագիր, 2006 թվական:

Առաջնային օժանդակություն մարդկանց թրաֆիքինգի գոհերին, ՄՄԿ ձեռնարկ, 2007 թվական:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործիքակազմ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գլոբալ ծրագիր, ՄԱԹ-ՀՊԳ, Նյու Յորք, 2008 թվական:

Լավագույն փորձի մեթոդական ձեռնարկ քննություն իրականացնող անձանց համար, երկրորդ հրատարակություն, Իստերպուլի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբ, 2008 թվական:

Հոգեկան հիվանդությունների ախտորոշման և վիճակագրության ձեռնարկ, 4-րդ հրատարակություն (ԱՎԶ-IV-ՏՎ), Ամերիկյան հոգեբուժական ասոցիացիա, 2008 թվական:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ ձեռնարկ՝ քրեական արդարադատության ոլորտի գործող մասնագետների համար, ՄԱԹ-ՀՊԳ, Նյու Յորք, 2009 թվական:

Հիմնավորում

««Մարդկանց թրաֆիքինգ» նշանակում է շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալն ուժ գործադրելու սպառնալիքով կամ ուժ գործադրելով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահման, կամ մեկ այլ անձի վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով: «Շահագործում» հասկացությունն առնվազն ներառում է այլ անձանց պոռնկության շահագործումը կամ այլ տեսակի սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, անազատ վիճակը կամ օրգանների հեռացումը²⁷»:

Թրաֆիքինգի վերաբերյալ ՄԱԿ-ի արձանագրության մեջ ընդգրկված այս սահմանմամբ արդեն իսկ բերվում է մեկ կամ մի քանի պատճառ, թե ինչու սահմանապահները, հնարավոր է, ներգրավվեն կամ, որ ավելի հավանական է, կներգրավվեն թրաֆիքինգի գոհերի և հանցագործություն կատարող անձանց հայտնաբերման գործընթացում: Թեպետ պարտադիր չէ, որ այդպես լինի, սակայն ցանկացած «տեղափոխում» կամ «փոխանցում», անշուշտ, կարող է լինել միջսահմանային: Կամ՝ սահմանային ընթացիկ ստուգումների ընթացքում կարող են երևան գալ շահագործման մեկ կամ մի քանի ցուցիչներ, եթե սահմանապահը գիտի՝ ինչ փնտրել:

Ավելին, սահմանապահը պետք է տեղյակ լինի, որ հանցավոր այլ գործունեության հետ առնչվելիս հետագա փուլում նա հաճախ կարող է հանդիպել այդ նույն ցուցիչներին: ՄԹ-ի հետ կապված հանցավոր գործողությունների թվին են դասվում՝

- ◆ անօրինական ելքն ու մուտքը,
- ◆ անօրինական բնակությունը և աշխատանքը,
- ◆ ինքնությունը հաստատող և ճամփորդական կեղծ փաստաթղթեր ունենալը և (կամ) օգտագործելը,
- ◆ ինքնությունը հաստատող և ճամփորդական հափշտակված փաստաթղթեր գողանալը, ունենալը և օգտագործելը,

²⁷ Միավորված ազգերի կազմակերպության «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» կոնվենցիան լրացնող՝ «Մարդկանց, հատկապես կանանց և երեխաների առևտրի կանխարգելման, արգելման ու պատժի մասին» արձանագրություն, 3 (ա) հավելված:



- ◆ խաբեության նպատակով ինքնությունը հաստատող փաստաթղթեր և մուտքի արտոնագրեր ներկայացնելը,
- ◆ կոռուպցիան:

Մինչ այժմ եզրակացությունն այն է, որ անկասկած՝ սահմանապահը բավականաչափ շահագրգիռ կողմ է և բացառիկ կարևոր դեր է կատարում ՄԹ-ի հայտնաբերման գործում: Հետագա քննության (հաջողության) մեծ մասը կախված կլինի սահմանապահի կողմից ձեռնարկված առաջին գործողություններից և արձագանքից:

«Գրեթե անհնար է թրաֆիքինգի հանցագործություն կատարել մեկուսի, կամ որ թրաֆիքինգ իրականացնող անձինք գործեն միայնակ. իրենց զոհերին հարկադրանքի միջոցով հավաքագրելու, տեղափոխելու և շահագործելու անհրաժեշտությունից ելնելով՝ թրաֆիքինգ իրականացնող անձինք սովորաբար գործում են խմբերով և թրաֆիքինգի հանցագործությունը կատարելու համար կատարում են մի շարք առնչվող հանցագործություններ. նրանց հայտնաբերելու և նրանց նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունն առավելագույնի հասցնելու համար քննություն իրականացնող անձը պետք է մանրակրկիտ ուշադրություն դարձնի քննության ընթացքում բացահայտված առանց բացառության յուրաքանչյուր կասկածյալի և հանցագործության»:

*Ինսերպուլ, 2008 թվական, թրաֆիքինգին առնչվող
իրավահասկումների վերաբերյալ*

Մինչ առաջ անցնելը

Նախնական հարցազրույցը սահմանային հսկողության ծառայության կողմից ձեռնարկվելիք գործողությունների մասն է կազմում: Ջոհի համագործակցությունն²⁸ ինքնին հետագա քրեական հետապնդման առումով²⁹ էական նշանակություն չունի, սակայն հայտարարությունը կարող է օգնել հետագա քննության և գործը կազմելու հարցում հաջողությանը: Հետևաբար, հարցազրույց անցկացնող(ներ)ը պետք է ունենա(ն) հատուկ հմտություններ և պետք է տեղյակ լինի(են)

²⁸ Սահմանապահները պետք է տեղյակ լինեն, որ զոհը կարող է չափազանց շատ վախենալ իշխանությունների հետ խոսելուց:

²⁹ Ծանոթություն. 2011/36/ԵՄ հրահանգում նշվում է, որ զոհի համագործակցությունը հետագա քննության և քրեական հետապնդման առումով էական տարր չէ:

- ◆ մարդկանց թրաֆիքինգի դեպքերի առանձնահատկությունների,
- ◆ ներգրավված մարդկանց բազմազանության (ինչպես օրինակ՝ գենդերով և տարիքով պայմանավորված),
- ◆ հարցազրույցի ընթացքում ակնկալվող արձագանքների,
- ◆ զոհի, ինչպես նաև հարցազրույց անցկացնողի համար հնարավոր ռիսկերի և հասանելի պաշտպանական միջոցների մասին:

Ինչն է ՄԹ-ն «հատուկ» դարձնում հարցազրույց անցկացնողի համար

- ◆ Օրինակ, 2011/36/ԵՄ հրահանգում նշվում է, որ անդամ պետություններն իրենց իրավական համակարգերի հիմնական սկզբունքների հիման վրա պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ «ապահովելու, որ իրավասու պետական մարմիններն իրավունք ունենան մարդկանց թրաֆիքինգի զոհերին քրեական հետապնդման չենթարկելու կամ նրանց նկատմամբ պատժամիջոցներ չկիրառելու այն հանցավոր գործողությունների մեջ նրանց ներգրավվածության համար, որոնք նրանց ստիպել են կատարել»: Եթե որևէ մեկը պետք է որ ներգրավված լինի մարդկանց անօրինական տեղափոխման (անօրինական միգրացիայի կազմակերպման) և կեղծված անձնագրով ճամփորդելու մեջ, ապա սահմանապահի կողմից նրան որպես ՄԹ-ի զոհ ճանաչելու փաստը որոշիչ ազդեցություն կունենա գործի հետ կապված մյուս հարցերի նկատմամբ մոտեցման վրա:
- ◆ Ավելի գործնական մակարդակում, հարցազրույց անցկացնողը պետք է իմանա, որ այլ դեպքերից առավել, զոհերի հետ անցկացվող հարցազրույցների դեպքում իրադարձությունների նկարագրության փոփոխականությունը (հաճախ ստացված տրավմայի պատճառով) սովորական երևույթ է, և սա պաշտպանության կողմը կարող է օգտագործել զոհին որպես ստախոս ներկայացնելու համար: Ահա թե ինչու զոհի պատմությունը պետք է հնարավորինս հիմնավորել այլ ապացույցներով կամ ցուցմունքներով:
- ◆ Այլ տարրեր փնտրելու մյուս պատճառն այն է, որ զոհերը, հնարավոր է, չունենան կանոնավոր միգրացիոն կարգավիճակ:



Քրեական հետապնդման կամ հեռացման նկատմամբ վախը կարող է հանգեցնել իրադարձությունների նկարագրության փոփոխության: Նույնիսկ եթե զոհի պատմությունը լիովին համապատասխանում է իրականությանը, թրաֆիքինգ իրականացնող անձի պաշտպանության կողմը կարող է պնդել, որ զոհը կեցության թույլտվություն ստանալու նպատակով հնարել կամ հաստատել է մեղադրանքները:

- ◆ Ի հակադրություն անօրինական ճանապարհով մարդկանց տեղափոխման, որի դեպքում բռնությունը և ահաբեկումը բավականին կողմնակի բնույթ ունեն, այս տարրերը բնորոշ են թրաֆիքինգի դեպքերի մեծ մասին, երբ դրանք, հնարավոր է, անհրաժեշտ լինեն զոհին շահագործման վիճակում պահելու համար: ՄԹ-ի դեպքերի մեծ մասին նաև բնորոշ է զոհի ինքնիշխանության և ազատության կտրուկ սահմանափակումը:
- ◆ Ջոհերը, հնարավոր է, շատ լուրջ տրավմա ունենան:
- ◆ Հաղորդակցությանը շատ հաճախ կխոչընդոտեն, թարգմանիչների ներգրավվածությունից զատ, նաև մշակութային տարբերությունները, սեռով և տարիքով պայմանավորված նրբությունները կամ թյուրըմբռնումը կամ նույնիսկ ինքնին լեզուն, որը կարող է լինել չափազանց անմիջական և պարունակել ժարգոնային արտահայտություններ:
- ◆ Ջոհերը, հնարավոր է, տրամադրված չլինեն համագործակցելու: Հարցազրույց անցկացնողը պետք է իմանա, որ զոհի կյանքը, չի բացառվում, դեռևս վտանգված լինի: Թրաֆիքինգ իրականացնող անձինք գուցե ճանաչելիս լինեն զոհի ընտանիքին և ընկերներին ու սպառնան նրանց:
- ◆ Հարցազրույց անցկացնողը, հնարավոր է, հանդիպի զոհի, որը նրան չի վստահում (ավելի վաղ ունեցած փորձի պատճառով կամ թրաֆիքինգ իրականացնող անձի թելադրանքով):
- ◆ Սեռական շահագործման դեպքերում զոհը երբեմն կնախընտրի, որ իր ընտանիքը չտեղեկանա այդ մասին:
- ◆ Անձն ինքը հնարավոր է տեղյակ չլինի, որ թրաֆիքինգի է ենթարկվում:
- ◆ Հնարավոր է այն տարբերակը, որ արդյունավետ հետաքննության արդյունքում զոհի եկամուտը դադարի: Ջոհերը կարող են հաշվի առնել, որ իրենց ընտանիքները կտուժեն, եթե

իրենք այլևս չկարողանան նրանց ուղարկել իրենց ունեցած փոքրիկ գումարը:

- ◆ Թրաֆիքինգի դեպքերը հաճախ շատ բարդ են լուծման առումով, և քրեական արդարադատության որոշ համակարգերում, հնարավոր է, խնդիրներ ծագեն (օրինակ՝ ժամանակային սահմանափակումներ): Եթե, օրինակ, կասկածյալը կալանքի տակ է պահվում, ապա ձեր տրամադրության տակ, հնարավոր է, ապացույց ներկայացնելու քիչ ժամանակ լինի:
- ◆ Թրաֆիքինգը ֆինանսական, ինչպես նաև քրեական հարց է: Հարցազրույցը պետք է ուղղված լինի երկու ասպեկտների վերաբերյալ էլ տեղեկություններ հավաքելուն: Նույնիսկ եթե որպես իրավական ապացույց ծառայելու համար բավարար հիմնավոր չէ, արդյունքը դեռևս կարող է արժեքավոր լինել թրաֆիքինգի ցանցի վերաբերյալ հետաքննական տվյալներ ստանալու առումով:
- ◆ ՄԹ-ի դեպքերում, հավանական է, որ հարկ լինի զոհի համար կացարան գտնել:

«Թրաֆիքինգի և մաքսանենգ ճանապարհով տեղափոխման գործելակերպերը շատ նման են, ինչը իրավապահ մարմինների աշխատակիցների համար ավելի է դժվարացնում հանցագործության երկու տեսակի տարբերակումը: [...] Տարանջման ժամանակ և սահմանային կետերում թրաֆիքինգ հայտնաբերելը շատ դժվար է. շատ դեպքերում հնարավոր է անհնար լինի թրաֆիքինգը և մաքսանենգ ճանապարհով տեղափոխումը տարբերակելը, քանի դեռ չի ավարտվել տեղափոխման փուլը, և չի սկսվել շահագործման փուլը»:

Ինտերպոլ, 2008 թվական, մարդկանց թրաֆիքինգի և անօրինական ճանապարհով միգրանտների տեղափոխման գործընթացների մասին

Անհատական մոտեցում

Հավանական է, որ ՄԹ-ի զոհերը շատ տարբեր լինեն, և հետևաբար՝ հարցազրույցի անցկացման տեխնիկան կամ ընդհանուր մոտեցումը պետք է լինեն համապատասխան ու դիտարկվեն՝ հաշվի առնելով ամեն առանձին դեպք: Ստորև բերված ցանկը, հնարավոր է,



ամբողջական չէ, սակայն հիմնական նպատակը հավելյալ մտորումներ կամ քննարկումներ հարուցելն է մի առանցքային հարցի շուրջ, այն է՝ «Իսկ ինչ, եթե»:

Սահմանապահը կարող է բախվել հետևյալ դեպքերից ցանկացածին.

- ◆ արդեն իսկ շահագործված գոհեր.
- ◆ պոտենցիալ գոհեր, որոնք՝
 - նախատեսված են շահագործման համար,
 - խոցելի են շահագործման նկատմամբ,
 - տեղյակ (չ)են ռիսկերի կամ հետևանքների մասին.
- ◆ տղամարդիկ, կանայք (ՄԹ-ն գենդերով պայմանավորված երևույթ է, երբ կանայք և տղամարդիկ հաճախ թրաֆիքինգի են ենթարկվում տարբեր նպատակներով) ու երեխաներ (տես էջ 95՝ երեխաների հետ հարցազրույց անցկացնելու վերաբերյալ).
- ◆ գոհեր, որոնք համաձայնել են շահագործման ենթարկվել.
- ◆ գոհեր, որոնք չեն ցանկանում համագործակցել.
- ◆ Շենգենյան գոտի մուտքի կամ ելքի հայտնաբերում.
- ◆ գոհեր երրորդ երկրներից կամ ԵՄ քաղաքացիներ.
- ◆ գոհեր, որոնք միջազգային պաշտպանության կարիք ունեցող փախստականներ են,
- ◆ միևնույն հանցավոր գործունեության մաս կազմող տարբեր տարրեր (ինչպես օրինակ՝ սեռական շահագործումը, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, այդ թվում՝ հարկադիր մուրացկանությունը, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, անազատ վիճակը, հանցավոր գործողությունների շահագործումը կամ օրգանների հեռացումը):

«Արևմտյան Եվրոպայում ներկայումս դիտվում է ստանում 120 հազար հիվանդ, իսկ 40 հազար հիվանդ ընդգրկված է փոխպատվաստման համար հերթագրվածների ցուցակում: Հիվանդների 15-30 %-ը մահանում է՝ սպասելով փոխպատվաստման»:

Ինտերպոլ, 2008 թվական, այն մասին, թե ինչու է երիկամների թրաֆիքինգը ավելի լայն տարածում գտնում

Հոգեկան առողջություն

Հասկանալու համար գոհերի վարքը, որը կարող է որոշ դեպքերում խնդրահարույց կամ դժվար լինել ըմբռնելու կամ վերահսկելու առումով, կարևոր է հաշվի առնել նրանց ունեցած տրավմատիկ փորձառությունը:

Հոգեբանական հարկադրանքը և չարաշահումը թրաֆիքինգի ենթարկված անձի նկատմամբ կիրառված բռնության առանձնահատկություններն են, որոնք թրաֆիքինգի հանցագործություն կատարող անձանց կողմից օգտագործվում են՝ ստիպելու գոհին իրեն անպետք և անգոր զգալ: Ջոհերին թակարդում պահելու և նրանց կամակատարությունն ապահովելու նպատակով թրաֆիքինգ իրականացնող անձինք օգտագործում են վերահսկողության տարբեր գործելակերպեր, այդ թվում՝ խաբեություն, ահաբեկություն, հասարակությունից մեկուսացում, հուզական մասնիկույացիա և գոհի սիրելիներին վնասելու կամ մարմնավաճառության ասպարեզում նրանց աշխատանքի վերաբերյալ տեղեկությունը նրանց ընտանիքներին հասցնելու սպառնալիքներ:

Բռնի միջավայրը, որտեղ գոհերը սովորաբար ապրում են թրաֆիքինգի ենթարկվելու ընթացքում, հաճախ նրանց մղում է որդեգրելու հարմարվողական վարք, երբ հնազանդության միջոցով ձգտում են խուսափել իրենց նկատմամբ բռնի ռեակցիաներից: Շատերն ապրում են խաբեության միջավայրում, երբ թրաֆիքինգ իրականացնող անձինք տրամադրում են կեղծ տեղեկություններ և վախ ներշնչում՝ կանխելու ոստիկանության օգնությանը կամ փախուստի դիմելու նրանց փորձերը: Դրա հետևանքով գոհերից շատերը, աստիճանաբար կորցնելով իրականության զգացումը, դառնում են պասիվ և միաժամանակ իշխանությունների նկատմամբ կասկածամիտ:

Թրաֆիքինգի գոհերը կոտրվում են շարունակաբար կիրառվող և դաժան ֆիզիկական ու հոգեբանական բռնությունների հետևանքով, ինչը հանգեցնում է մի շարք հոգեբանական խնդիրների ի հայտ գալուն: Ինչպես նշել են հոգեբանները, թրաֆիքինգի հետևանքով շահագործումը կարող է բազմաթիվ տրավմաներ հասցնել և հիմնականում առաջ է բերում ծայրահեղ տագնապի ախտանիշներ ու կարող է արգելակել հիշողությունը: Ջոհերի մոտ հոգեբանական խնդիրներ սովորաբար ի հայտ են գալիս շահագործման պայմանների հետ կապված վտանգավոր և նվաստացուցիչ հանգամանքների



հետևանքով, ինչը կարող է էապես ազդել նրանց հոգեկան առողջության ու ինքնագգացողության վրա:

Ճնշվածության և տագնապի հետ կապված ախտանիշների թվին են դասվում փսիխոսոմատիկ ախտանիշները (ցավ, նյարդայնություն, անքնություն, մղձավանջներ), վարքագծի փոփոխությունները (ինքնամիտություն, թերահավատություն, գրգռվածություն, ագրեսիվություն, դեպրեսիա, վախ) և ճանաչողական ֆունկցիայի խանգարումը (շփոթմունք, ապակողմնորոշում, հիշողության խանգարումներ, ուշադրությունը կենտրոնացնելու անկարողություն):

Հետտրավմատիկ սթրեսային խանգարում

Թրաֆիքինգի գոհերի նկատմամբ կիրառված բռնարարքի տրավմատիկ ազդեցությունները սովորաբար բազմաթիվ են և կարող են ի հայտ գալ երկարատև ժամանակահատվածում: Ստացված տրավման կարող է հանգեցնել մի վիճակի, որը կոչվում է հետտրավմատիկ սթրեսային խանգարում (ՀՏՄ):

Համաձայն *Հոգեկան հիվանդությունների ախորոշման և վիճակագրության ձեռնարկի 4-րդ հրապարակության* (ԱՎՁ-IV)՝ ՀՏՄ-ն ուժեղ տագնապով արտահայտված խանգարում է, որը կարող է զարգանալ որևէ տրավմատիկ կամ սարսափելի դեպքի հետևանքով, որի ընթացքում լուրջ ֆիզիկական վնաս է հասցվել: ՀՏՄ-ի ախտորոշիչ նշանակություն ունեցող ախտանիշները ներառում են նախնական տրավման վերապրելը հիշողությունների, զայրույթի միջոցով և տրավմայի հարուցիչներից խուսափելը:

Վերևում նշվածներին նման ախտանիշները նպաստում են գործունեության հետ կապված խնդիրների ի հայտ գալուն, որոնք ներառում են հույզերը, բարկության հանկարծակի պոռթկումները, սուիցիդալ վարքը, թմրանյութերի և ալկոհոլի չարաշահումն ու գիտակցության փոփոխությունները վերահսկելու հետ կապված բարդություններ: Ավելին, այնպիսի ֆիզիկական ախտանիշներ, ինչպիսիք արյան բարձր ճնշումը, սրտի կծկումների հաճախականությունը, արագացած շնչառությունը, մկանների լարումը և սրտխառնոցն են, նույնպես կարող են գերակշռել ու լինել ՀՏՄ-ի հետևանք:

Դաժան և տրավմատիկ փորձառություն ունեցող գոհերի դեպքում նրանց ուժերից վեր է ոչ միայն դրա ծայրահեղ բնույթը բանականորեն հիմնավորելն ու ընդունելը, այլև այն հաճախ հանգեցնում է այդ

փորձառության ժխտմանը, ինչը հոգեբանական վիճակ է՝ հայտնի որպես տարանջատում (դիսոցիացիա):

Տարանջատումը տարածված ռեակցիա է բռնության ենթարկված կանանց շրջանում: Այն կարող է հարուցել մի շարք այլ ախտանիշներ, ինչպիսիք են ժամանակի զգացումի փոփոխությունը, հիշողության թուլացումը և անցած դեպքին մտովի վերադառնալը, երբ գոհերին կարող է թվալ, թե չարաշահումը նրանց նկատմամբ դարձյալ տեղի է ունենում ներկայում:

Թրաֆիքինգի ենթարկված գոհերի հետ հարցազրույցի վարման վրա տրավմայի ազդեցությունն ու հետևանքները

Թրաֆիքինգի և շահագործման ընթացքում տեղի ունեցած տրավմատիկ դեպքերի ազդեցությունը հիշողության և մտաբերելու կարողության վրա, կարևոր է հետազայում, երբ կանանց խնդրում են ներկայացնել մարդկանց, վայրերի և իրադարձությունների ժամանակագրության վերաբերյալ մանրամասները: Մասնավորապես, պետք է ճանաչել այդ տրավմայի հետևանքներն այն դեպքում, երբ ոստիկանությունը ձգտում է տեղեկություններ ստանալ թրաֆիքինգի ենթարկված անձանցից: Զոհերը, հնարավոր է, դժվարանան ներկայացնել իրենց հետ պատահածի մանրամասները, և նրանց հայտարարություններում գուցե անհամապատասխանություններ և բացեր լինեն այն դեպքերում, երբ անկարող են նկարագրել իրենց հետ պատահածը:

Չարաշահման հետագա դեպքերի ռիսկը նվազեցնելու և իրենց գոյությունն ապահովելու նպատակով գոհերը, հնարավոր է, համապատասխանաբար փոփոխեն իրենց վարքագիծը: Որոշ գոհեր կփորձեն իրենց դնել թրաֆիքինգ իրականացնող անձի դերում, որդեգրել նրա հայացքները, որպեսզի կարողանան ճշգրտությամբ պարզել և յուրացնել վարքագծի այն տեսակները, որոնք, ամենայն հավանականությամբ, հավանության կարժանանան: Հարմարեցված վարքագծի այս տեսակը համարվում է գոյատևման մեխանիզմ և հաճախ անվանվում է «Ստոկիոլմյան սինդրոմ»:

Թրաֆիքինգ իրականացնող անձի հետ նույնականացումը կարող է լուրջ ազդեցություն ունենալ հարցազրույցի ընթացքի վրա: Թրաֆիքինգի՝ տրավմա ստացած գոհերը իրավապահ մարմինների աշխատակիցներին առաջին անգամ բախվելիս շարունակաբար կիրառվեն համագործակցելուց կամ, ամենայն հավանականությամբ,



կրկնեն այն պատմությունը, որը թրաֆիքինգ իրականացնող անձն է իրենց ներկայացրել, քանի որ, նրանց համոզմամբ, դա կարժանանա նրանց հավանությանը:

Սահմանապահները պետք է գիտակցեն տրավմայի ազդեցությունը թրաֆիքինգի ենթարկված գոհերի վրա և իմանան, որ այնպիսի ախտանիշները, ինչպիսիք են համագործակցության բացակայությունը, թշնամական վերաբերմունքը, բարկությունը, դեպքերի մանրամասները մտաբերելու անկարողությունը, կոնկրետ դեպքերի վերաբերյալ սխալները կամ հորինովի տեղեկություններ ներկայացնելը, ամենայն հավանականությամբ, տրավմայի հետևանք են:

Տրավմա ստացած գոհի մոտ առկա ախտանիշների շրջանակը լուրջ խնդիրներ է առաջացնում ոչ միայն հենց իր՝ գոհի, այլև իրավապահ մարմինների աշխատակիցների համար, քանի որ գոհի մասնակցությունը իրավական ընթացակարգերին հաճախ կախված է նրանց հուզական և հոգեկան վիճակից: Տրավմա ստացած գոհերը հաճախ կհերքեն թրաֆիքինգի ենթարկված լինելու փաստը, չնայած ցուցիչներն այլ բան կվկայեն: Ավելին, ամենայն հավանականությամբ, նրանք կդժվարանան հետաքննություն իրականացնող անձանց հստակ և հետևողական հայտարարություն ներկայացնել: Այդուհանդերձ, հարցազրույց անցկացնող աշխատակցի համար կարևոր է խուսափել անձին կրկին զոհականացնելուց՝ լինի դա ձգտելով քրեականացնել նրանց գործողությունները, թե նրանց վրա չափազանց մեծ ճնշում գործադրելով, որ վերհիշեն դեպքերն ու ներկայացնեն իրենց պատմության մանրամասները:

Ջոհի հետ շփման մեջ մտնելու համար սահմանապահները պետք է խուսափեն բացասաբար պատասխանել որևէ թշնամական վերաբերմունքի: Ջոհին մարտահրավեր նետելը, հարցերի առաջադրման նախնական փուլում թերահավատության նշաններ ցույց տալը և ընդհանրապես՝ գոհին որպես կասկածյալի վերաբերվելը կարող է հանգեցնել գոհի օտարացմանն ու կրկին տրավմայի ենթարկվելուն, ինչև, ի վերջո, կվերացնի համագործակցության ցանկացած հնարավորություն: Հետևաբար, մեթոդական և հանդուրժողական մոտեցում որդեգրելն, ամենայն հավանականությամբ, գոհին կխրախուսի ներկայացնել ճշմարտությունը:

Հարցազրույցը

Նշումներ
վերապատ-
րաստողի
համար

Այս բաժինը պարունակում է օգտակար տեղեկություններ և խորհուրդներ, որոնք սահմանապահին կօգնեն նախապատրաստել ու իրականացնել երկրորդ գծի հարցազրույց՝ հայտնաբերելու զոհին և դուրացնելու հետագա քննությունը՝ հաշվի առնելով, որ թրաֆիքինգի դեմ պայքարի միջոցառումները չպետք է բացասաբար ազդեն զոհի մարդու իրավունքների և արժանապատվության վրա:

Յոթ քայլի մոդելը կուղղորդի սահմանապահին՝ ԹԶ-ի (պոտենցիալ ԹԶ-ի) հետ տրամաբանական և արդյունավետ հարցազրույց անցկացնելու: Մտապահելով «Պեզաս» հապավումը՝ այնուամենայնիվ օգտակար կլինի ձեռքի տակ ունենալ քայլերը ներառող ստուգացանկ:

Հավանական է՝ նպատակահարմար լինի ևս մեկ անգամ հակիրճ ընդգծել, որ սահմանապահի կողմից առաջարկված կամ ձեռնարկված ցանկացած միջոցառում չի սահմանափակի 1951 թվականի «Փախստականների կարգավիճակի մասին» կոնվենցիայով (Ժնևի կոնվենցիա) ամրագրված՝ անձի վերադարձի անթույլատրելիության սկզբունքի գործողությունը և կիսմասպատախանի «Հիմնարար իրավունքների մասին» Եվրոպական միության խարտիայի 4-րդ և 19(2) հոդվածներին:

Հղումներ

«Մարդկանց թրաֆիքինգի կանխարգելման, դրա դեմ պայքարի ու դրա զոհերի պաշտպանության և հորհրդի 2002/629/ԱԵԳ շրջանակային որոշումը փոխարինելու մասին» Եվրոպական պառլամենտի և հորհրդի 2011 թվականի ապրիլի 5-ի 2011/36/ԵՄ հրահանգ:

«Մոդուլ 8. մարդկանց թրաֆիքինգի պոտենցիալ վկաներ հանդիսացող զոհերի հետ հարցազրույցի վարումը», Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի ձեռնարկ քրեական արդարադատության ոլորտի գործող մասնագետների համար, ՄԱԹՀՊԳ, Նյու Յորք, 2009 թվական:

Լավագույն փորձի մեթոդական ձեռնարկ քննություն իրականացնող անձանց համար, երկրորդ հրատարակություն, Ինտերպոլի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբ, 2008 թվական:

Ուղղակի օգնություն մարդկանց թրաֆիքինգի զոհերին, ՄՄԿ ձեռնարկ, 2007 թվական:



Մարդկանց թրաֆիքինգի խնդրին առնչվելիս կիրառվելու համար նախատեսված առաջին օգնության փաթեթ իրավապահ մարմինների արագ արձագանքման ծառայության համար, ՄԱԹՀՊԳ, UN.GIFT:

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործիքակազմ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գլոբալ ծրագիր, ՄԱԹՀՊԳ, Նյու Յորք, 2008 թվական

Մարդու իրավունքների և մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ առաջարկվող սկզբունքներ և ուղեցույցներ, մեկնաբանություն, ՄԻԳՀԳ, 2010 թվական:

Ինչ անել և ինչ՝ ոչ

Որոշ ընդհանուր տեղեկություններ

- ◆ Մանրամասները կարող են շատ բան փոխել. կարող է պարզվել, որ առաջին հայացքից մարդկանց անօրինական տեղափոխում թվացող դեպքն իրականում թրաֆիքինգ է:
- ◆ Հարցազրույցի նպատակն է ավելի ընդհանուր ձևով տեղեկություն հավաքելը, ինչպես նաև, հատկապես, անձին որպես զոհ (պոտենցիալ զոհ) նույնականացնելն ու սոցիալական աջակցություն տրամադրելը՝ որպես ամուր հիմք հետագա քննության համար:
- ◆ Տեղեկացեք զոհի միջազգային պաշտպանության հնարավոր կարիքի մասին:
- ◆ Հանգիստ գործեք: Մի շտապեք ընթացակարգերը կատարելիս: Մի մոռացեք, որ գուցե Դուք զոհի համար օգնության առաջին և վերջին հնարավորությունն եք:
- ◆ Զոհի (պոտենցիալ զոհի) համար շարունակաբար գնահատեք ՄԹ-ի հետ կապված ռիսկերը:
- ◆ Եթե ծանոթ եք ակտիվ լսելու մեթոդներին, ապա դրանք մեծապես կօգնեն Ձեզ: Ձեր մարմնի լեզուն պետք է վկայի զոհի (պոտենցիալ զոհի) հետ Ձեր անկեղծության մասին: Փոքր-ինչ առաջ հակվեք, սակայն խուսափեք ֆիզիկական շփումից: Յուրյալ եղեք, որ հետաքրքրված եք, ուշադրությունը կենտրոնացրեք անձի և պատմության վրա և ժամանակ առ ժամանակ կրկնեք հայտարարության մի մասը («Ահա թե երբ ես հանդիպեցի նրան»: «Այսպիսով՝ այդ ժամանակ էր, որ հանդիպեցիք նրան»:)

Բացի դրանից, գլխով անելը նույնպես կվկայի, որ Դուք ուշադիր եք:

- ◆ Հավանական է, որ հաղորդակցվելը դժվար լինի մի շարք առումներով: Հնարավոր է՝ անհրաժեշտ համարեք դանդաղեցնել հարցազրույցի ընթացքը՝ համապատասխանեցնելով զոհի խոսքի արագությանը. խոսեք դանդաղ և նախքան պատասխանելը որոշ ժամանակ տրամադրեք զոհին: Եղեք համբերատար:
- ◆ Հարցազրույցին պատրաստվելիս վերլուծեք առաջին օղակի աշխատակիցների կողմից զոհի վերաբերյալ արդեն իսկ հավաքված տեղեկությունները և ուսումնասիրեք բռնագրավված իրերը. ճանաչեք ձեր գրուցակցին:
- ◆ Ջոհին մի հարցրեք՝ արդյոք հասկացել է, այլ զրույցի ընթացքում մի քանի անգամ կրկնեք կարևոր տեղեկությունները՝ համոզվելու, որ նա ուշադրության է առել տեղեկությունը:

Անհրաժեշտության դեպքում ընդմիջեք: ՄԹ-ի դեպքում ավելի հաճախ, քան այլ դեպքերում, կարող է պահանջվել հարցազրույցի ընթացքում դադար տալ:

- ◆ Առաջնահերթություն պետք է տալ բժշկական կամ ցանկացած այլ անհապաղ օգնության, եթե դա պահանջվում է հանգամանքներից ելնելով, կամ եթե դա պահանջում է զոհը: Օգտակար կլինի, եթե Ձեր ծառայությունում առկա լինեն որոշ լայնորեն կիրառվող, առանց դեղատոմսի տրվող դեղամիջոցներ (ասպիրին, պարացետամոլ և այլն)՝ թեթև զանգատների համար: Պատրաստ եղեք հատուկ ուշադրության դարձնել հատուկ կարիքներով զոհերին, մասնավորապես եթե այդ կարիքները բխում են հղիությունից, նրանց առողջական վիճակից, հաշմանդամությունից, մտավոր կամ հոգեկան խանգարումներից կամ ծանր բռնությունից տուժած լինելու հանգամանքից:
- ◆ Խուսափեք հարցազրույցների անհարկի կրկնությունից: Այս փուլում ուշադրության կիզակետում պահեք այն տեղեկություններն ու հարցերը, որոնք անհրաժեշտ են՝ բացահայտելու անձի հնարավոր կարիքները, նրան որպես զոհ նույնականացնելու և աջակցելու հետագա քննությանը. ավելի հեռուն գնալ պետք չէ:



- ◆ Հարցազրույցները պետք է պատշաճ ձևով ձայնագրվեն: Օգտակար կլինեն տեսաձայնագրությունը (սաև կրկնություններից խուսափելու համար):

Հարցազրույց անցկացնողների վերաբերյալ

- ◆ Հնարավորության դեպքում օգտակար կլինեն ներգրավել երկու հարցազրուցավարի: Նրանցից մեկի գործառույթը կարող է լինել վերբալ հաղորդակցությունը և հարցերի առաջադրումը, իսկ մյուսը կարող է հետևել և նշումներ կատարել զոհի (պոտենցիալ զոհի) արձագանքների ու վարքագծի վերաբերյալ:
- ◆ Երկու հարցազրուցավարի առկայությունը կարող է նաև կանխարգելել կամ հստակեցնել զրուցակցի կողմից ցանկացած մեղադրանք. ուշադիր եղեք հարցազրուցավարի կողմից սեռական ոտնձգության վերաբերյալ հնարավոր մեղադրանքների առումով:
- ◆ Եթե հարցազրուցավարը չի կարողանում պատշաճ շփում հաստատել զոհի հետ, ապա նա հնարավորինս շուտ պետք է փոխարինվի:
- ◆ Հարցազրուցավարի սեռի հետ կապված հարցը հաճախ էական է, մասնավորապես՝ սեռական շահագործման դեպքերում: Այս պարագայում, հնարավորության դեպքում, պետք է հաշվի առնել զոհի նախընտրությունը: Չնայած որոշ զոհեր ավելի լավ կշփվեն հակառակ սեռի հարցազրուցավարի հետ, սակայն որոշ դեպքերում ավելի նպատակահարմար կարող է լինել զոհի սեռին պատկանող հարցազրուցավարի ներգրավելը:

Ենթակառուցվածքը

- ◆ Համոզվեք, որ հարցազրույցն անցկացվում է փակ, լուռ և անվտանգ վայրում:
- ◆ Գործընկերները հնարավորության դեպքում պետք է հարցազրույցին հետևեն միակողմանի հայելու միջոցով:
- ◆ Խուսափեք հեռախոսազանգերի հետևանքով հարցազրույցի ընդհատումներից. անջատեք բջջային հեռախոսները:
- ◆ Օգտակար կլինեն տեղադրել «Չանհանգստացնել» գրությամբ ցուցանակ:

Լեզուն

- ◆ Լեզուն պետք է լինի ոչ խտրական և ոչ սեքսիստական:
- ◆ Դուք պետք է ծանոթ լինեք սեռական առումով բաց լեզվին: Եթե հարցազրույց անցկացնողը չի հասկանում որոշ բառեր, ապա զոհին միայն պետք է (հարգալից) խնդրել բացատրել դրանք հարցազրույցի այն փուլում, երբ նա իրեն ավելի անկաշկանդ է զգում, և հաստատվել է բավարար փոխվստահություն:
- ◆ Հաշվի առնելով տղամարդկանց, կանանց, տղաների և աղջիկների տարբերվող փորձառությունը՝ օգտագործեք յուրաքանչյուր զոհին համապատասխանեցված լեզու:
- ◆ Անհրաժեշտության դեպքում տրամադրեք գրավոր և բանավոր թարգմանությունների ծառայություններ: Բանավոր թարգմանության դեպքում մի օգտվեք «կամավորների» ծառայություններից. նրանք կարող են այդ դեպքի մասնակից լինել: Համոզվեք, որ բանավոր թարգմանիչները վստահելի են և ունեն բարձր բարոյական որակներ: Հնարավորության դեպքում բանավոր թարգմանչին ընտրելիս հաշվի առեք նրա սեռը:
- ◆ Բանավոր թարգմանչի ներգրավվածության դեպքում անպայման տեսողական կապ հաստատեք զոհի, այլ ոչ թե թարգմանչի հետ:

Հարցազրույցը

- ◆ Պլանավորեք հարցազրույցի մեկնարկային րոպեները:
- ◆ Հոգացեք, որ զոհի (պոտենցիալ զոհի) հետ Ձեր գրույցը տեղի ունենա առանձնացված պայմաններում, և այլ անձինք չկարողանան ականջ դնել կամ տեսնել, հատկապես այն անձինք, որոնց հետ նա ճամփորդում է:
- ◆ Սահմանափակեք ներկա գտնվող մարդկանց թիվը՝ հասցնելով այն անհրաժեշտ նվազագույնին (այսինքն՝ զոհը, հարցազրուցավար(ներ)ը, բանավոր թարգմանիչը և գուցե՝ այլ հիմնական մասնակիցները):
- ◆ Փորձեք այնպես անել, որ զոհն իրեն անվտանգ և անկաշկանդ զգա: Ստեղծեք վստահություն: Մեկ բաժակ ջուրը կամ մեկ գավաթ սուրճը կամ թեյը կարող են հրաշքներ գործել: Ուշադիր եղեք տառապանքի, վախի, անհանգստության և այլ նշանների նկատմամբ:



- ◆ Զոհին իրադրության նկատմամբ որոշակի վերահսկողություն տրամադրելը կարող է հանգստացնող և լիցքաթափող ազդեցություն ունենալ (լոգարան գնալ, կարճատև ընդմիջում, ինչ-որ բան ուտել և այլն):
- ◆ Թույլ տվեք զոհին օգտագործել իր սեփական բառերը:
- ◆ Խուսափեք զոհի մոտ տպավորություն ստեղծելուց, որ իրեն հարցաքննում են:
- ◆ Բացման փուլում, անշուշտ, պետք է օգտագործեք բաց տեսակի հարցերը:
- ◆ Ընդհանրապես խուսափեք «Այո» կամ «Ոչ» պատասխանը ենթադրող հարցերից: Դուք կարող եք ձեր հարցերը կազմել (կարո՞ղ եք, արդյոք, ասել) «ի՞նչ», «որտե՞ղ», «ե՞րբ» և այլ բառերի շուրջ:
- ◆ Օգտագործեք պարզ հարցեր: Յուրաքանչյուր հարց պետք է պարունակի միայն մեկ հիմնական:
- ◆ Մի ընդհատեք զոհին:
- ◆ Դատողություն մի արեք տրված պատասխանների վերաբերյալ և հավանություն կամ անհամաձայնություն մի արտահայտեք: Ուշադիր եղեք Ձեր մարմնի լեզվի (ոչ վերբալ հաղորդակցության) հարցում: Արտաքին գործոնները, ինչպիսիք են անձի անցյալի վերաբերյալ տեղեկության բացակայությունը կամ չվստահող վերաբերմունքը, կարող են (կտրուկ) ազդել պատմության վրա:
- ◆ Խուսափեք «ինչու» բառի կիրառությունից: Սա կարող է խոսել Ձեր հավանություն չտվող վերաբերմունքի մասին և խոցելի մարդկանց մեղքի ու անապահովության զգացում ներշնչել:
- ◆ Խուսափեք ակնարկող կամ հուշող հարցերից, որոնք, հավանական է, արդեն իսկ ենթադրում կամ ընդգրկում են պատասխանը: Խոցելի զոհերը կարող են հակված լինել համաձայնելու այն ամենին, ինչ Դուք ասում եք:
- ◆ Կասկածի տակ մի առեք զոհի պատմությունը, ինչ էլ նա պատմի. սրա հետևանքով նա, հնարավոր է, այլևս չցանկանա համագործակցել: Հաջորդ փուլում հետագա քննությունը ցույց կտա՝ արդյոք պատմությունը ճիշտ էր, թե՛ ոչ:

Հարցազրույցից հետո

- ◆ Մի տվեք խոստումներ, որոնք համոզված չեք, որ կարող եք կատարել:
- ◆ Զոհի (պոտենցիալ զոհի) որևէ ուղղորդում չպետք է պայմանական լինի (օրինակ՝ կախված լինի հետագայում համագործակցելու ինչ-որ խոստումից): Օգնության և աջակցության միջոցները պետք է տրամադրվեն համաձայնության և իրազեկվածության հիման վրա: Հարցազրույց անցկացնող սահմանապահը պետք է հավաստիանա, որ զոհը (պոտենցիալ զոհը) գիտի, կամ նրան տեղեկացրել են (կամ կտեղեկացվի համապատասխան ժամկետում) ապաստան հայցելու հնարավորության և ապաստանի տրամադրման գործընթացի վերաբերյալ:

Ձեր տեղեկությունները փոխանցեք միայն ծառայողական անհրաժեշտության հիմքով:³⁰ Ձեր կողմից ձեռք բերված տվյալների կամ Ձեր միջամտության մասին մի խոսեք այդ գործի հետ առնչություն չունեցող ոչ մեկի հետ: Հնարավոր է՝ վտանգ լինի զոհերի համար:

- ◆ Մի պատասխանեք Ձեր աշխատասենյակում զոհի ներկայության վերաբերյալ որևէ երրորդ կողմի հարցերին:
- ◆ Զոհին լրատվամիջոցների կամ հանրային հետաքրքրության թիրախ մի դարձրեք:
- ◆ Եթե պարզվում է, որ հարցազրույցի ենթարկված անձի հայտարարություններն արժեքավոր են հնարավոր քնության և քրեական հետապնդման առումով, ապա համոզվեք, որ արդյունքները կարող են օգտագործվել դատաքնության ընթացքում (ելնելով ազգային համակարգից՝ հնարավոր է անհրաժեշտ լինի անցկացնել ևս մեկ հարցազրույց դատախազի կամ նույնիսկ դատավորի և իրավաբանների ներկայությամբ, եթե դա պահանջվում է ազգային իրավական նորմերով):

³⁰ Ծառայողական անհրաժեշտության այս հիմքը ներառում է տեղեկությունների փոխանցման վերաբերյալ ազգային օրենսդրությունն ու արձանագրությունները (օրինակ՝ տվյալների կենտրոնական բազա):



Յոթ քայլի մոդել՝ «Պեգաս» (Pegasus)

«Պեգաս»

Յոթ քայլի մոդելն արդեն ապացուցել է իր արժեքը գոհերի (պոտենցիալ գոհերի) հետ հարցազրույցի գործընթացում: Ֆրոնտեքսը կազմել է «Պեգաս» (Pegasus) հապավումը՝ որպես մենտոտեխնիկական օժանդակություն (հապավումը կազմվել է անգլերենում յոթ քայլերից յուրաքանչյուրի հիմնաբառերի առաջին տառերի համադրությամբ):

Յոթ քայլի մոդելը

Յոթ քայլի մոդելը սահմանապահներին առաջնորդում է ԹԶ-ի (պոտենցիալ ԹԶ-ի) հետ տրամաբանական և արդյունավետ հարցազրույցի գործընթացում: Ստորում ունենալով «Պեգաս» հապավումը՝ այնուամենայնիվ, օգտակար կլինեն ձեռքի տակ ունենալ ստորև ներկայացված քայլերը ներառող ստուգացանկ:

Քայլ 1. Ներկայանալը (Presentation)' հարցազրույցի բացումը

- ◆ Ներկայացնել գոհին որպես ՄԹ-ի ոլորտում փորձառու աշխատակից:
- ◆ Նշել, որ հանդիպել եք համանման իրավիճակում հայտնված մարդկանց:
- ◆ Դուք պետք է ներկայանաք որպես չեզոք, բայց ոչ հակառակորդ կողմ:

Քայլ 2. Բացատրել (Explain) տվյալ պահին այդտեղ գոյություն ունեցող իրավիճակը

- ◆ Բացատրել, թե ինչու է գոհը (պոտենցիալ գոհը) փոխանցվել այդտեղ:
- ◆ Բացատրել, որ հարցազրույցը նպատակ ունի ամենապատշաճ եղանակով պարզելու, թե ինչ աջակցության կարիք, հնարավոր է, ունի գոհը, և կանխելու հետագա վնասը կամ վտանգը:
- ◆ Բացատրել, թե ում համար, հնարավոր է, հասանելի լինեն գոհի (պոտենցիալ գոհի) կողմից տրամադրվող տեղեկությունները:
- ◆ Բացատրել հարցազրույցի կառուցվածքն ու կանոնակարգը:
- ◆ Բացատրել, որ նա կասկածյալ չէ և կարող է ցանկացած պահի հրաժարվել հարցազրույցին մասնակցելուց:

- ◆ Հավաստիացեք, որ գոհը (պոտենցիալ գոհը) հասկանում է, թե ինչ (սահմանափակ) դեր ունի բանավոր թարգմանիչը:

Քայլ 3. Տեղեկությունների հավաքումը (Gathering information)

- ◆ Պարզեք, թե ով է հարցազրույցին մասնակցող անձը:
- ◆ Հնարավորություն տվեք, որ նա որոշ կենսագրական տվյալներ ներկայացնի և պատմի, թե ինչպես է հայտնվել տվյալ իրավիճակում:
- ◆ Տեղեկություններ հավաքեք տվյալ իրավիճակի տարբեր ապեկտների վերաբերյալ:
- ◆ Պարզեք, թե ինչպես է նա հայտնվել տվյալ իրավիճակում:
- ◆ Պարզեք, թե ինչ իրավիճակ է տվյալ պահին:
- ◆ Ինչո՞ւ է նա լքել իր երկիրը: Իր կարծիքով ի՞նչ կպատահի, եթե վերադառնա այնտեղ: Ուշադրություն դարձրեք, թե արդյոք պատասխանը մատնանշում է ընտանիքի կամ իշխանության մարմինների կողմից բռնության, վրեժխնդրության, խտրականության, պատժի վախ:
- ◆ Պարզեք, թե ինչ է նա ցանկանում, ակնկալում և ինչի կարիք ունի:
- ◆ Ուշադրություն դարձրեք թրաֆիքինգի (հնարավոր) նշաններին:

Կախված ազգային օրենսդրությունից կամ սահմանապահների կարգավիճակից/գործառույթներից՝ կարող են հավաքվել տեղեկություններ, որոնց հիման վրա կհարուցվի քրեական գործ՝ մտքում ունենալով այն հանգամանքը, որ ոչ հարցազրուցավարը, ոչ էլ հարցերը չպետք է ուղղորդեն գոհին:

- ◆ Որտեղի՞ց է գալիս գոհը (պոտենցիալ գոհը):
- ◆ Ո՞վ է նախաձեռնել ուղևորությունը:
- ◆ Ինչպե՞ս է նա հանդիպել թրաֆիքինգ իրականացնող անձին: Հաղորդակցության ի՞նչ միջոցներ են օգտագործվել (փոստ, հեռախոս և այլն):
- ◆ Ուղևորության մանրամասները:
- ◆ Ո՞վ է վճարել տոմսերի համար: Որքա՞ն:
- ◆ Արդյո՞ք գոհի (պոտենցիալ գոհի) փաստաթղթերը (օրինակ՝ տոմսերը, անձնագիրը, վիզան, նույնականացման քարտը) իր մոտ են եղել ուղևորության ողջ ընթացքում:



- ◆ Որտեղ են տոմսերն ու ճամփորդական փաստաթղթերն այս պահին: Արդյո՞ք գոհին խնդրել են ժամանումից հետո թրաֆիքինգ իրականացնող անձին կամ որևէ այլ անձի վերադարձնել կամ տալ փաստաթղթերը:
- ◆ Ինչպե՞ս են ձեռք բերվել ճամփորդական փաստաթղթերը:
- ◆ Ի՞նչ խոստումներ են տրվել (օրինակ՝ կապված աշխատանքի, զբաղմունքի, վճարման հետ):
- ◆ Արդյո՞ք գոհի (պոտենցիալ գոհի) ազատությունը սահմանափակվել է: Արդյո՞ք եղել են սպառնալիքներ կամ բռնություն գործադրվել է:

Քայլ 4. Իրավիճակի գնահատում (Assessment) տեղեկությունները թարմացնելու միջոցով

Հետևյալ քայլերի միջոցով սահմանապահները, ինչպես նաև գոհը պետք է հնարավորություն ունենան գնահատելու իրավիճակը և փնտրելու հետագա պաշտպանություն, հնարավորություններ կամ լուծումներ:

- ◆ Տվյալ անձին բացատրեք իրական իրավիճակը, նրա իրավունքները և տարբերակները (միջազգային պաշտպանություն, փախստականի կարգավիճակ):
- ◆ Բացատրեք համապատասխան ներպետական քաղաքականությունները:
- ◆ Բացատրեք գոհերի պաշտպանության (ներպետական) ընթացակարգերը:
- ◆ Բացատրեք երկրում գտնվելու թույլտվության էությունը:
- ◆ Բացատրեք քրեական իրավունքի նորմերը:
- ◆ Բացատրեք քաղաքացիական իրավունքի նորմերը:

Քայլ 5. Զոհի (պոտենցիալ գոհի) հետ պայմանավորվել (Settle with) հետագա քայլերի վերաբերյալ

- ◆ Ուսումնասիրեք տվյալ իրավիճակի հետ կապված խնդիրները և չբացահայտված հնարավորությունները:
- ◆ Մշակեք նախընտրելի սցենարը:
- ◆ Սահմանեք միասնական մոտեցում:

Քայլ 6. Ձեռնարկել (Undertake) հնարավոր հետագա քայլեր՝ ելնելով րեղի սահմանապահներին առնչվող իրավիճակից

- ◆ Ձեռնարկեք կարիքների և ռիսկերի գնահատում ու համաձայնեցրեք այն:
- ◆ Կազմակերպեք օթևանի հարցը:
- ◆ Արեք հնարավորն անձի անվտանգությունն ապահովելու համար:
- ◆ Կարգավորեք երկրում գտնվելու համար կարճաժամկետ թույլտվության հարցը:
- ◆ Կազմակերպեք օգնության և աջակցության տրամադրումը:
- ◆ Կապ ապահովեք աջակցության ծառայություն տրամադրող տեղական կառույցների հետ:

Քայլ 7. Որոշում կայացնել (Settle on) հետագա գործողությունների վերաբերյալ. հարցազրույցի ավարտը

- ◆ Հարցրեք, թե ինչ է նա մտածում տվյալ պահին տիրող իրավիճակի վերաբերյալ:
- ◆ Համաձայնության եկեք այն մասին, թե ինչպես եք կապի մեջ մնալու:
- ◆ Մանրամասներ ներկայացրեք հետագա գործողությունների վերաբերյալ:
- ◆ Հստակ և կոնկրետ պայմանավորվածություններ ձեռք բերեք ցանկացած այլ կարևոր հարցերի շուրջ:



Երեխաների հետ հարցազրույց անցկացնելը

Նշումներ վերապատրաստողի համար	Այս բաժինը վերաբերում է երկրորդ օղակի սահմանապահների կողմից երեխայի հետ հարցազրույցի անցկացմանը, որպես թրաֆիքինգի զոհ (պոտենցիալ զոհ) նրա նույնականացմանը և հետագա քննության ու մասնագիտացված կամ փորձագիտական ծառայությունների կողմից օգնության նպատակով ուղղորդմանը:
Հղումներ	Երեխաների թրաֆիքինգի դեմ պայքարի լավագույն փորձի վերաբերյալ տեղեկատվական գրքույկ իրավապահ մարմինների աշխատակիցների համար, ՄՄԿ, Վիեննա, 2006 թվականի մարտ: Եկեք խոսենք. բռնության և թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների հետ արդյունավետ հաղորդակցություն հաստատելը, ՅՈՒՆԻՍԵֆ, 2004 թվական: Ցուցումներ թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների պաշտպանության վերաբերյալ, ՅՈՒՆԻՍԵֆ: Եվրոպայում թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների իրավունքների պաշտպանության տեղեկատու ձեռնարկ, ՅՈՒՆԻՍԵֆ:

Սկզբունքները

- ◆ Գործընթացի յուրաքանչյուր փուլում պետք է հաշվի առնվեն երեխայի լավագույն շահերը: Այս բաժնում դա հիմնական նկատառումն է: Բոլոր գործողությունները պետք է հիմնված լինեն մարդու իրավունքների պաշտպանության և դրանց նկատմամբ հարգանքի սկզբունքների վրա, ինչպես նախատեսված է «Երեխայի իրավունքների մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայով և Մարդկանց թրաֆիքինգի վերաբերյալ 2011/36/ԵՄ հրահանգով:
- ◆ Տասնութ տարին չլրացած բոլոր երեխաների հետ պետք է վարվել՝ հաշվի առնելով նրանց հատուկ կարիքները և առանձնակի խոցելիությունը: Ցանկալի է, որ երեխաների և մտավոր/ֆիզիկական անկարողություն կամ ուսումնական դժվարություններ ունեցող՝ թրաֆիքինգի ենթարկված չափահասների նկատմամբ ցուցաբերվի նույն վերաբերմունքը (այս բաժնում նկարագրված): Երեխայի հետ միշտ պետք է խոսել նրա

տարիքին համապատասխան լեզվով: Հարցազրույցի ամբողջ ընթացքում պետք է հաշվի առնել երեխայի սեռը:

- ◆ Հարցազրույցը հարցաքննություն չէ: Հարցազրույցը նպատակ ունի օգնել, որ երեխան բարձրաձայնի տեղեկություններն ու այդպիսով նպաստի քննությանը և իրավախախտների նկատմամբ քրեական հետապնդմանը:
- ◆ Հարցազրույցները պետք է անցկացվեն միայն հատուկ մասնագիտական հմտություններ ունեցող վերապատրաստված անձնակազմի կողմից:
- ◆ Բոլոր այն դեպքերում, երբ երեխան օտարերկրյա քաղաքացի է, պետք է օգտվել բանավոր թարգմանչի ծառայություններից՝ անգամ եթե երեխան, կարծես թե, խոսում է այն երկրի լեզվով, որտեղ անցկացվում է հարցազրույցը:
- ◆ Օրենսդրությունը պետք է հաշվի առնի երեխայի առանձնակի խոցելիությունը (օրինակ՝ դիտարկել տեսագրման հարցը, բացառել խաչաձև հարցաքննությունը և, հնարավորության դեպքում, անցկացնել միայն մեկ հարցազրույց), քանի որ օրենսդրության բարեփոխման արդյունքում մեծացել է շահագործման ենթարկված երեխաներին առնչվող գործերով քրեական հետապնդումների և մեղադրական դատավճիռների թիվը:
- ◆ Հարցազրույցավարները պետք է ազնիվ լինեն երեխայի հետ և երբեք չտան կեղծ խոստումներ: Հարցազրույցավարը պետք է երեխային բացատրի հարցազրույցի կամ հարցերի առաջադրման նպատակը և տեղեկացնի նրան այդ մասին:
- ◆ Հարցազրույցավարները չպետք է կրեն համազգեստ և (կամ) պետք է հարցազրույցից առաջ հեռացնեն տարբերանշանները:



Ներածություն

Եթե առաջին օղակի սահմանափակների կողմից հավաքված նյութերը վկայում են մարդկանց թրաֆիքինգի հնարավորության մասին, ապա այդ միջամտությանը սովորաբար հաջորդում են հարցազրույցն ու վերջնական գնահատումը երկրորդ օղակում ընդունելության ժամանակ:

2011/36/ԵՄ հրահանգի 15(3) և (4) հոդվածով երեխաների պաշտպանության ընդհանուր իրավական ուղղորդում է տրամադրվում հարցազրույցների պարագայում:

- «3. Չսահմանափակելով պաշտպանության իրավունքների գործողությունը՝ անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ 2-րդ և 3-րդ հոդվածներում նշված հանցանքների վերաբերյալ քրեական գործերով քննության և վարույթի իրականացման ընթացքում՝
- ա) երեխա զոհի հետ հարցազրույցներն անցկացվեն իրավասու մարմիններին փաստերը հաղորդելուց հետո՝ առանց չհիմնավորված ուշացումների.
 - բ) երեխա զոհի հետ հարցազրույցներն, անհրաժեշտության դեպքում, անցկացվեն այդ նպատակով նախատեսված կամ հարմարեցված տարածքներում.
 - գ) երեխա զոհի հետ հարցազրույցներն, անհրաժեշտության դեպքում, անցկացվեն այդ նպատակով վերապատրաստված մասնագետների կողմից կամ նրանց միջոցով.
 - դ) հնարավորության և նպատակահարմարության դեպքում, երեխա զոհի հետ բոլոր հարցազրույցներն անցկացնի նույն անձը.
 - ե) հարցազրույցների թիվը լինի հնարավորինս սահմանափակ, և հարցազրույցներն անցկացվեն միայն այն դեպքում, երբ դրանք խիստ անհրաժեշտ են քրեական գործով քննության և վարույթի իրականացման համար.
 - զ) հնարավոր լինի երեխա զոհի ուղեկցումը նրա ներկայացուցչի կամ, նպատակահարմարության դեպքում, երեխայի ընտրությամբ որևէ չափահաս անձի կողմից, եթե տվյալ անձի վերաբերյալ չի կայացվել հիմնավորված այլ որոշում:
4. Անդամ պետությունները ձեռնարկում են անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու, որ 2-րդ և 3-րդ հոդվածներում նշված ցանկացած հանցանքի վերաբերյալ քրեական գործերով քննության իրա-

կանացման ընթացքում երեխա զոհի կամ, նպատակահարմարության դեպքում, երեխա վկայի հետ անցկացված բոլոր հարցազրույցները հնարավոր լինի տեսագրել, և որ այդ տեսագրված հարցազրույցները հնարավոր լինի օգտագործել որպես ապացույց քրեական դատավարության ընթացքում՝ տվյալ երկրի ներպետական իրավունքի նորմերին համապատասխան»:

Առաջին շփում. առաջին օղակի սահմանային ստուգում

Տեն Մոդոլ 2՝ «Հայտնաբերում. առանցքային հարցեր»:

Երկրորդ օղակի հարցազրույցի անցկացում

Այս հարցազրույցի նպատակը պետք է լինի հավելյալ մանրամասն հարցեր առաջադրել՝ որոշելու, թե արդյոք երեխան թրաֆիքինգի պոտենցիալ կամ իրական զոհ է: Ստորև ներկայացվում են որոշ ընդհանուր նկատառումներ:

- ◆ Երկրորդ օղակի անցակետ կամ հարցազրույցի անցկացման վայր երեխայի ժամանելուն պես հարցազրուցավարի կողմից պետք է գնահատվեն նրա անմիջական կարիքները:
- ◆ Նպատակահարմարության դեպքում, հնարավորինս շուտ պետք է նշանակվի խնամատար՝ ամբողջ գործընթացում երեխային ուղեկցելու համար:
- ◆ Նախքան հարցազրույցը պետք է ուշադրության առնել, թե արդյոք երեխան ունի որևէ տեսակի բուժօգնության կամ աջակցության կարիք, և ապահովել դրանց հասանելիությունը, ինչպես նաև հարցազրույց անցկացնողը պետք է հավաստիանա, որ երեխան քաղցած կամ ծարավ չէ, զուգարանի կարիք չունի կամ չի ցանկանում քնել: Եթե երեխան ունի նշվածներից ցանկացածի կարիքը, ապա պետք է փորձել բավարարել այն նախքան հարցազրույցի մեկնարկը: Հնարավոր է՝ այս փուլում առաջանա սոցիալական ծառայություններին կամ գործընկեր կազմակերպություններին դիմելու անհրաժեշտություն: Հարցազրույցի մեկնարկը պետք է հետաձգել, մինչև կբավարարվեն երեխայի կարիքները:
- ◆ Կատարյալ տարբերակում, հարցազրույցը պետք է անցկացվի հանգիստ սենյակում՝ զերծ ուշադրությունը շեղող, ընդմիջող



երևույթներից, կամ որտեղ այլ մարդիկ չեն կարող են լսել
խոսակցությունը:

- ◆ Հնարավորության դեպքում, հարցազրույցը պետք է անցկացվի
հատուկ մասնագիտական վերապատրաստում անցած և երե-
խաների հետ հարցազրույց վարելու փորձ ունեցող աշխատակ-
ցի կողմից:
- ◆ Հարցազրույցին պետք է ներկա գտնվեն միայն այն անձինք,
որոնց ներկայությունն իսկապես անհրաժեշտ է:
- ◆ Հարցազրույցի ընթացքում երեխաները պետք է հնարա-
վորություն ունենան հաղորդակցվելու իրենց մայրենի լեզվով:
- ◆ Կարող է առաջանալ հոգեբանական խորհրդատուի մաս-
նագիտական աջակցության անհրաժեշտություն:
- ◆ Հարցազրույցը պետք է արձանագրվի հստակ, ամփոփ և
ճշգրիտ կերպով՝ գործող օրենսդրությամբ նախատեսված կոն-
կրետ եղանակով:
- ◆ Խորհուրդ է տրվում հաշվետվությունը գրառելիս օգտագործել
երեխայի լեզուն և նշումներ կատարել երեխայի վարքագծի
վերաբերյալ այն դեպքում, երբ հարցազրույցը չի ձայնագրվում:
- ◆ Հիշեք, որ երեխան ևս կարող է փախստական լինել:

«Պեզաս» յոթ քայլի մոդելը՝ երեխաների կարիքների հատուկ շեշտադրմամբ

Հարցազրույցի ընթացքում պետք է անդրադառնալ որոշակի թե-
մաների, որոնք հարցազրույց անցկացնողին կօգնեն գնահատել երե-
խայի իրավական կարգավիճակը: Ընդ որում, յուրաքանչյուր հար-
ցազրույց պետք է հարմարեցվի կոնկրետ երեխայի իրավիճակին:
Ընդհանուր առմամբ, երեխաների դեպքում նույնպես «Պեզաս» յոթ
քայլի մոդելն արժեքավոր կլինի:

Սկսեք Քայլից 1-ից՝ «Ներկայացեք», և այնուհետև անցնեք Քայլին
2-ին՝ «Բացատրեք իրավիճակը»: Երեխային պետք է բացատրել հար-
ցազրույցի նպատակը:

Հաջորդը՝ Քայլ 3՝ «Տեղեկությունների հավաքում»: Ստորև ներ-
կայացված են որոշ թեմաներ, որոնց պետք է անդրադառնալ երեխա
ԹՁ-ի հետ հարցազրույցի ընթացքում:

- ◆ Անձնական տվյալներ. անուն, ազգանուն, հասցե, ծննդյան ամսաթիվ, քաղաքացիություն, ինքնություն:
- ◆ Հավաքագրում. ինչպե՞ս է կապ հաստատվել:
- ◆ Ճամփորդություն. ինչպե՞ս է նա հասել տվյալ վայր:
- ◆ Շահագործում. ի՞նչ գործողություններում են նրանք ներգրավված եղել:
- ◆ Աշխատանք. որտե՞ղ և ի՞նչ պայմաններով են աշխատել:
- ◆ Փող. նրանք վարձատրություն ստացել են:
- ◆ Պարտքեր. ինչի՞ համար էին դրանք:
- ◆ Կապ. ո՞ւմ հետ է նա կապի մեջ եղել և ինչպե՞ս:
- ◆ Ազատություն. նրանք ունեցել են, արդյոք, տեղաշարժվելու ազատություն:

Քայլ 4. Գնահատեք իրավիճակը. գոհերի հայտնաբերման ժամանակ որոշակի հարցերին տրված պատասխանները չպետք է դիտարկվեն մեկուսի: Նախքան որոշում կայացնելը, անհրաժեշտ է տեղեկությունները գնահատել, դրանք ներկայացնել քննության մեջ ներգրավված մյուս գործընկերներին և քննարկել նրանց հետ:

Քայլ 5. Որոշում կայացրեք հետագա քայլերի վերաբերյալ, այնուհետև անցեք Քայլ 5-ին՝ գործողություն ձեռնարկեք: Հնարավոր է՝ լինի դրսի որևէ գործակալության կողմից պաշտպանության և աջակցության անհրաժեշտություն, հետևաբար՝ պետք է ուղղորդել համապատասխան գերատեսչություններ, ինչպիսիք են բժշկական և սոցիալական ծառայություններ տրամադրող կառույցները: Երեխայի բարօրության համար էական նշանակություն ունի ժամանակին և պատշաճ աջակցություն տրամադրելը, քանի որ նա նոր է դուրս եկել թրաֆիքինգի իրավիճակից և հետևաբար, ամենայն հավանականությամբ, կունենա բժշկական աջակցության կարիք, ինչպես նաև շատ հավանական է, որ փախուստի կղիմի կամ կրկին կրոնվի թրաֆիքինգ իրականացնող անձանց կողմից: Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաները, հնարավոր է, նաև միջազգային պաշտպանության կարիք ունենան:

Մինչև հարցազրույցն ավարտելը հիշեք Քայլ 7-ի մասին՝ «Որոշում կայացնել հետագա գործողությունների վերաբերյալ»:

Հիշեցում: Այն պահից, երբ երեխան նույնականացվել է որպես թրաֆիքինգի հանցագործության զոհ կամ վկա, առաջին ընդունելության շրջանակներում հարցերի առաջադրումը պետք է դադարեցվի: Այդ պահից՝ գործողություններն ուղղվում են քննության գործընթացին



առնչվող ապացույցների նախնական հավաքմանը, ինչպես նաև ապացուցողական հարցազրույց անցկացնելու նպատակահարմարությունը որոշելուն:

Հավաքված տեղեկությունների հետ կապված հետազա գործողությունները

Նշումներ վերապատրաստողի համար

Այս բաժնում ներկայացվում է, թե ինչ տեղեկություններ է հնարավոր ձեռք բերել հարցազրույցի ընթացքում, ինչպես դրանք կարող են օգտակար լինել առանձին դեպքի գնահատման ժամանակ, և ինչպես է պետք աշխատել տեղեկությունների հետ առհասարակ:

Շատ կարևոր է, որ հետախուզական տվյալների հավաքումը և հետախուզության կառավարումը (այսինքն՝ հետախուզական նյութերի ձայնագրումը, կառավարումը և տարածումը) իրականացվի օրենքին և տվյալ ոլորտին առնչվող մյուս բոլոր կարգավորումներին խստորեն համապատասխան: Ազգային վերապատրաստողը պետք է պրեզենտացիա պատրաստի այն մասին, թե ինչպես պետք է տեղեկությունները փոխանցվեն, և ինչ տեղեկություններ պետք է փոխանցվեն սահմանապահների կազմակերպության ներսում, տեղական գործընկերներին և պետական մարմիններին՝ ներպետական իրավունքի նորմերին համապատասխան և գոհի շահերի տեսանկյունից ամենաարդյունավետ արդյունքներն ապահովելու համար:

Հղումներ

Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գործիքակազմ. Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի գլոբալ նախաձեռնություն, ՄԱԹՀԴԳ, Նյու Յորք, 2008 թվական:

Լավագույն փորձի մեթոդական ձեռնարկ քննություն իրականացնող անձանց համար, երկրորդ հրատարակություն, Իստերպուլի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբ, 2008 թվական:

Aanwijzingen van slachtofferschap van mensenhandel & mensensmokkel: de identificatie van een slachtoffer (versie 2011-01), Դաշնային ոստիկանություն, Բելգիա:

Մարդկանց թրաֆիքինգ և մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխում Իտալիա. Թրանսքրայմի հաշվետվություններ թիվ 8, Տրենտոյի համալսարան, 2004 թվական, Savona, E.U., Belli, R., Curtol, F., Decarli, S., DiNicola, A.:

Ինչ կոնկրետ օգտակար տեղեկությունների կարող են հանդիպել առաջին և երկրորդ օղակի սահմանապահները:

- ◆ Կասկածյալների և զոհերի ինքնությունը (կեղծանուններ, քաղաքացիություն, ծննդյան վայր ու ամսաթիվ և այլ տվյալներ):
- ◆ Հավաքագրման եղանակը (խաբեություն, հարկադրանք, առևանգում և այլն):
- ◆ Գովազդի միջոցը (օրինակ՝ տպագիր մամուլ, ինտերնետ, խոսակցություններ):
- ◆ Տեղափոխման եղանակը (օրինակ՝ երթուղիներ, ճամփորդելու միջոցներ, համարանիշեր, ճամփորդական տոմսեր և պատրաստություններ):
- ◆ Վայրերը (հավաքագրում, թաքցնելու տներ և այլն):
- ◆ Մանրամասներ շահագործման տեսակի մասին (օրինակ՝ աշխատանքային, սեռական շահագործում):
- ◆ Օգտագործվող փաստաթղթերը (բոլոր տեղեկությունները ճամփորդական փաստաթղթերի, նույնականացման քարտերի, թույլտվությունների, լիցենզիաների և այլ փաստաթղթերի վերաբերյալ՝ անկախ այն հանգամանքից, թե դրանք ինչպես են ձեռք բերվել և կեղծված են, թե ոչ):
- ◆ Հաղորդակցության միջոցները (էլեկտրոնային փոստի հասցեներ, ֆիքսված հեռախոսակապի համարներ, բջջային հեռախոսների բոլոր տվյալները և այլն):
- ◆ Ֆինանսական գործողությունները և գործարքները:
- ◆ Հանցագործության առանձնահատկություններին առնչվող այլ կոնկրետ մանրամասները:



«Քանի որ իրականում անհնար է մարդկանց երկարաժամկետ թաքցնել, ամենը, որ անհրաժեշտ է թրաֆիքինգի վերաբերյալ հետախուզական տվյալներ հավաքելու համար այն է, որ աշխատակիցները լրջորեն մոտենան առաջադրանքին և իրենց մտավոր կարողություններն օգտագործեն՝ հայտնաբերելու հետախուզական աղբյուրները»:

Լավագույն փորձի մեթոդական ձեռնարկ քննություն իրականացնող անձանց համար, Բնությունի Մարդկանց թրաֆիքինգի հարցերով աշխատանքային խումբ, 2008 թվական

Իրեղեն ապացույցների միջոցով ստացված տեղեկությունները

Վերը նշված տեղեկությունները կարող են ձեռք բերվել նաև իրեղեն ապացույցների միջոցով: Բացի ցուցիչներից, պրոֆիլից և հարցազրույցից (որպես վերջնական, եզրափակիչ տարր), իրեղեն ապացույցները ևս կարող են էական նշանակություն ունենալ զոհի (պոտենցիալ զոհի), ինչպես նաև թրաֆիքինգ իրականացնող անձի հայտնաբերման հարցում:

Որպես սկիզբ՝ սահմանապահների համար օգտակար տեղեկությունների աղբյուր կարող են լինել ներգրավված անձանց դատվածության մասին տվյալները: Սակայն անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև՝

- ◆ (զոհի) հագուստին, ուղեբեռին կամ այն առարկաներին, որոնք կարող են բնորոշ լինել կասկածվող գործողություններին.
- ◆ օգտագործվող փոխադրամիջոցում գտնվող այն բոլոր առարկաներին, որոնք կարող են վկայել մեկնման վայրի և անցած երթուղիների (դրանցից օգտվելու հաճախականության) մասին.
- ◆ ավտոբուսի, ինքնաթիռի, գնացքի կամ որևէ այլ փոխադրամիջոցի տոմսերին.
- ◆ ցանկացած նամակի.
- ◆ ձեռագիր գրառումներին.
- ◆ ցանկացած կնքված պայմանագրի կամ գրավոր համաձայնագրի (դրանց պատճեններին).
- ◆ աշխատանքային ժամերի հետ կապված հաշվարկներին.
- ◆ հնարավոր շահագործման վայրի մասին վկայող ցանկացած փաստաթղթի.

- ◆ նոթատետրերին.
- ◆ հասցեների գրքում, բջջային հեռախոսների տեղեկագրքերում և այլուր առկա հեռախոսահամարներին.
- ◆ անձնագրերին, կնիքներին, վիզաներին, ցանկացած այլ նույնականացման քարտի և հնարավոր կեղծիքներին.
- ◆ թերթում տեղադրված գովազդներին.
- ◆ բժշկի կամ հիվանդանոցի կողմից տրամադրված տեղեկանքներին.
- ◆ լուսանկարներին.
- ◆ մատնահետքերին.
- ◆ էլեկտրոնային սարքերում (դյուրակիր համակարգիչ, հիշողության քարտ, բջջային հեռախոս, նավիգացիոն համակարգեր և այլն) առկա ցանկացած տեղեկության (հաշվի առնելով անձնական կյանքի անձեռնմխելիության և իրավական հարցերը):

Գնահատում

Հարցագրույցը համարվում է ՄԹ-ի գոհի հայտնաբերման գործընթացի չորրորդ՝ վճռորոշ տարրը:

Տվյալ անձի պատմությունը, ինչպես նաև հարցագրույցի ժամանակ նրա ռեակցիաները կարևոր տեղեկությունների աղբյուր են: Այնուհետև այդ տեղեկությունները կարող են գնահատվել՝ հաշվի առնելով հետևյալ գործոնները.

- ◆ ցուցիչների առկայությունը,
- ◆ տվյալ անձի նկարագիրը (պրոֆիլը),
- ◆ հայտնաբերված իրեղեն ապացույցները կամ վկայությունները (նոթատետրեր, տոմսեր, հագուստ և այլն):

Հետագա քայլերը (քննություն, հարցաքննություն, ուղղորդման ընթացակարգեր և այլն) կախված կլինեն այս եզրակացությունից, ինչպես նաև սահմանապահների կազմակերպության շրջանակներում գործող ընթացակարգերից:



Ինչո՞ւ է կարևոր հավաքված տեղեկությունների փոխանցումը:

Թեմատիկ հետախուզության առումով էական նշանակություն կունենան սոցիալական և տնտեսական այն գործոնները, որոնք վերաբերելի են թրաֆիքինգի առաջարկին և պահանջարկին, կրոնական և մշակութային այնպիսի գործոններ, ինչպիսիք «վուդուի» որոշ սովորույթներն են, պատմական և լեզվաբանական այնպիսի գործոններ, ինչպիսիք են նախկին գաղութային կապերը և այլ առնչվող գործոններ: Այդուհանդերձ, սահմանապահների ներդրումը հիմնականում կոնկրետ տեղեկությունների ապահովումն է: Այս կոնկրետ տեղեկությունները կլրացվեն մարտավարական հետախուզության³¹ միջոցով ստացված տվյալներով և կարող են էական նշանակություն ունենալ հետևյալի համար.

- ◆ թրաֆիքինգ իրականացնող անձանց և զոհերի ու հանցագործության առանձնահատկությունների մասին պատկերացում կազմելը,
- ◆ (այլ) զոհերի տեղորոշումն ու նրանց փրկելը,
- ◆ հետագա քննության իրականացումը,
- ◆ գործողությունների ծրագրումը,
- ◆ ցանցերի ձևավորման կանխարգելումը, դրանց բացահայտումը կամ վերացումը,
- ◆ երևույթի վերաբերյալ ռազմավարական ընդհանուր պատկերացում կազմելը,
- ◆ վերապատրաստման ծրագրի մշակումն ու իրագեղակածության մակարդակի բարձրացումը,
- ◆ անօրինական ներգաղթի դեպքերի վերաբերյալ եվրոպական պատկերացումների հավելյալ զարգացումը (օրինակ՝ լրացնելով Եվրոպայի վերլուծության աշխատանքային ֆայլերը),
- ◆ այլ երկրներում քննություն սկսելուն նպաստելը և (կամ) Եվրոպայի մակարդակով համակարգման խթանումը (օրինակ՝ Եվրոջառթի կողմից միջամտությունները համակարգելու միջո-

³¹ Գործիքակազմը ներառում է ՄՄԿ-ի և ՄԱԿ ՓԳՀ-ի համատեղ զննման ձևը և ՄՄԿ-ի Թրաֆիքինգի զոհերի հետ զննման նպատակով հարցազրույցի անցկացման ձևը՝ որպես լավ օրինակներ, որոնց միջոցով ներկայացվում է, թե ինչպես և ինչ տեղեկություններ կարող են փոխանցվել տարբեր մակարդակներում օգտագործելու համար:

ցով՝ կազմակերպված հանցավոր ցանցերը կազմալուծելու հարցում գործնական արդյունքների հասնելու նպատակով):

Ո՞ւմ է սահմանապահը փոխանցում տեղեկությունները

Տեղեկությունները պետք է փոխանցվեն՝

- ◆ հնարավորինս շուտ և
- ◆ համապատասխան մարմիններին ու այն գործընկերներին, որոնք կարող են դրանք օգտագործել (օրինական եղանակով՝ հաշվի առնելով զոհի շահերը և մասնավոր կյանքի անձեռնմխելիությունը³²):

Որտեղ է սխալը

Կոնկրետ այս «ՄԹ-ի դեպքում» պետական մարմինները բազմաթիվ խնդիրներ են ունեցել զոհի ինքնությունը, հանուն նրա պաշտպանության, քողարկելու հարցում: Նրանք միայն մեկ սխալ են գործել՝ քանի որ զոհը բժշկական ծառայությունների կարիք է ունեցել, բժշկական տեղեկանքը, որում նշված էր նրա անունը, ազգանունը և հասցեն, ներառվել է ֆայլում:...

Ծանոթություն: Ազգային վերապատրաստողը բացատրում և վարժությունների միջոցով ներկայացնում է, թե ինչպես և ինչ տեղեկություններ պետք է փոխանցվեն սահմանապահների կազմակերպության ներսում, տեղի գործընկերներին և պետական մարմիններին՝ ներպետական իրավունքի նորմերին համապատասխան և զոհի շահերի տեսանկյունից ամենաարդյունավետ արդյունքներն ապահովելու համար: Այդ գործողություններն իրականացնելիս վերապատրաստողը չպետք է անտեսի այնպիսի լավագույն փորձը (հնարավոր է՝ տվյալ անդամ պետությունում ընդունված) շեշտելու կարևորությունը, ինչպիսիք են՝

³² Հիշեք, որ եթե զոհը (պոտենցիալ զոհը) նաև միջազգային պաշտպանության կարիք ունի, ապա գոյություն ունեն խիստ կանոններ, որոնք սահմանափակում են ծագման երկրի իշխանության մարմինների (օրինակ՝ դեսպանություն, հյուպատոսական հիմնարկ) հետ հաղորդակցությունը («Անդամ պետություններում փախստականի կարգավիճակ տրամադրելու և դրանից զրկելու ընթացակարգերի վերաբերյալ նվազագույն չափանիշների մասին» Խորհրդի 2005 թվականի դեկտեմբերի 1-ի 2005/85/ԵՀ հրահանգի Հոդված 22):



- ◆ արձանագրությունները, որոնցով սահմանվում են հարցերի առաջադրման ստանդարտ ընթացակարգեր (կարևոր են քրեական հետապնդում իրականացնելու համար ավելի որակյալ տեղեկություններ հավաքելու առումով)։
- ◆ տվյալների տեղական կամ կենտրոնացված բազաները (կարևոր են մի շարք այնպիսի աղբյուրներ լրացնելու և դրանց խաչաձև հղումներ կատարելու առումով, ինչպիսիք են արհմիությունների, բժիշկների հաշվետվությունները, առանձին անհատների բողոքները)։

Ուղղորդում. օգնություն, աջակցություն և պաշտպանություն՝ 2011/36/ԵՄ հրահանգի համաձայն

Նշումներ
վերապատ-
րաստողի
համար

ՄԹ-ի վերաբերյալ հրահանգի զգալի մասը նվիրված է զոհին (զոհերին) օգնություն, աջակցություն և պաշտպանություն տրամադրելուն և, ավելի կոնկրետ, այն հարցին, թե անդամ պետություններն ինչ պետք է ապահովեն այս ոլորտում։ Այդ դրույթները կարևոր են ինչպես նախքան պոտենցիալ ԹՋ-ին հայտնաբերելը, այնպես էլ հայտնաբերումից հետո և ուղղորդման հարցի ծագման պահին։

Վերապատրաստողը պետք է իրազեկ լինի իր երկրում ընդունված ուղղորդման ազգային մեխանիզմների մասին (դրանց առկայության դեպքում) և այս պարապմունքի ընթացքում անդրադառնա դրանց։

Օգնություն և աջակցություն փոխհամաձայնության և տեղեկացվածության պայմաններում

Սահմանապահները պետք է տեղյակ լինեն, մասնավորապես, որոշակի գործնական հարցերի մասին։ Այն է՝ օգնությունը և աջակցությունը պետք է տրամադրվեն՝

- ◆ այն պահից, երբ բավարար հիմքեր կան կասկածելու, որ տվյալ անձը թրաֆիքինգի զոհ է։
- ◆ մինչև քրեական վարույթն սկսելը, դրա ընթացքում և այն ավարտելուց հետո (համապատասխան ժամանակահատվածի ընթացքում)։
- ◆ առանց որևէ կերպ պայմանավորելու զոհի պատրաստակամությամբ՝ համագործակցելու քրեական գործով քննության, քրեական հետապնդման կամ դատաքննության իրականացման ընթացքում։

- ♦ այնպիսի պատշաճ մեխանիզմների կիրառմամբ, որոնց միջոցով հնարավոր կլինի ապահովել սա, գուցե՝ աջակցություն տրամադրող համապատասխան կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

Սահմանապահ ծառայությունը կարող է բախվել թրաֆիքինգի գոհի համար (պատշաճ և անվտանգ) կացարան գտնելու խնդրին, թեև դա կլինի ձեռնարկվելիք միջոցառումներից միայն մեկը:

Պետք է լինեն նաև դրույթներ՝ նպատակահարմարության դեպքում նյութական օգնություն, ինչպես նաև հետագա բուժում (ներառյալ՝ հոգեբանական օգնություն), խորհրդատվություն ու տեղեկություններ տրամադրելու և գրավոր ու բանավոր թարգմանչական ծառայություններ մատուցելու վերաբերյալ:

Առանձնահատուկ ուշադրության պետք է արժանանան հատուկ կարիքներով զոհերը: Այդ կարիքների առաջացման պատճառ կարող են լինել հետևյալ իրավիճակները.

- ♦ հղիություն,
- ♦ հաշմանդամություն,
- ♦ մտավոր կամ հոգեբանական խանգարումներ³³,
- ♦ լուրջ հոգեբանական, ֆիզիկական կամ սեռական բռնություն:

Ինչպես արդեն նշվել է վերը՝ «Պեգաս» յոթ քայլի մոդելը նախատեսում է օգնության և աջակցության այս բոլոր միջոցների տրամադրումը փոխհամաձայնության և տեղեկացվածության պայմաններում:

Թրաֆիքինգի զոհերի պաշտպանությունը

Ի հավելումն «Քրեական վարույթի ընթացքում զոհերի կարգավիճակի մասին» Խորհրդի 2001/220/ՄՆԳ շրջանակային որոշմամբ սահմանված իրավունքների՝ ԵՄ հրահանգով նախատեսվում են մի շարք միջոցներ: Ստորև ներկայացվում են շրջանակային որոշման միայն մի քանի դրույթներ, որոնք ակնհայտորեն առնչվում են սահմանապահների ամենօրյա գործողություններին: Որպես կանոն՝

- ♦ զոհերին պետք է վերաբերվել պատշաճ հարգանքով.
- ♦ հատկապես խոցելի զոհերը պետք է կարողանան օգտվել հատուկ վերաբերմունքից, որն առավել համապատասխան է նրանց իրավիճակին.

³³ Տե՛ս Մոդուլ 3՝ «Հոգեկան առողջություն»:



- ◆ գոհերն իրավունք ունեն, իրավապահ կառույցների հետ իրենց առաջին շփման պահից, քրեական վարույթի շրջանակներում իրենց շահերի պաշտպանությանը վերաբերելի տեղեկություններ ստանալու:³⁴
- ◆ պետք է նվազագույնի հասցնել հաղորդակցության հետ կապված դժվարությունները³⁵ կապված տեղի ունեցող երևույթները և վարույթի ընթացքում իրենց դերը հասկանալու հետ. անհրաժեշտության դեպքում պետք է լինի բանավոր թարգմանության հնարավորություն.
- ◆ գոհերը պետք է խորհրդատվություն և իրավաբանական օգնություն ստանալու հնարավորություն ունենան.
- ◆ գոհերը և, անհրաժեշտության դեպքում, նրանց ընտանիքներն ունեն պաշտպանության իրավունք, հատկապես իրենց անվտանգության և մասնավոր կյանքի անձեռնմխելիության առումով:

Վերադառնալով Հրահանգին, որը վերաբերում է քրեական գործով քննության և վարույթի իրականացման ընթացքում թրաֆիքինգի գոհերի պաշտպանության հետ կապված որոշակի կարիքներին, ապա պետք է հաշվի առնել հետևյալը.

- ◆ Թրաֆիքինգի գոհերի համար պետք է անհապաղ ապահովվի իրավական խորհրդատվության և ներկայացուցչության հնարավորություն, որն ապահովվում է անվճար, եթե գոհը չունի բավարար ֆինանսական միջոցներ:
- ◆ Նպատակահարմարության դեպքում և ներպետական իրավունքով կամ ընթացակարգերով սահմանված հիմքերի համաձայն՝ թրաֆիքինգի գոհերը պետք է հնարավորություն ունենան օգտվելու վկաների պաշտպանության ծրագրերից կամ նմանատիպ այլ միջոցներից: Շատ կարևոր է, որ հարցազրույց անցկացնող՝ երկրորդ օղակի սահմանապահը բավարար գիտելիքներ ունենա այդ միջոցների մասին, քանի որ դա կազմելու է «Պեզաս» յոթ քայլի մոդելի կիրառմամբ հարցազրույցի ընթացքում տրվող ընդհանուր տեղեկությունների մասը:

³⁴ Այստեղից էլ՝ կարևորությունը սահմանապահների համար:

³⁵ VITA գործիքը կարող է օգնել գոհերի նույնականացմանը պաշտոնական բանավոր թարգմանության բացակայության պայմաններում:

- ◆ Հատուկ վերաբերմունքը պետք է ուղղված լինի երկրորդային վիկտիմիզացիայի կանխմանը՝ հնարավորության սահմաններում հարցազրույցների կրկնությունից, զոհերի և պաշտպանյալների միջև տեսողական կապից, դռնբաց դատական նիստում ցուցմունք տալուց և թրաֆիքինգի զոհի անձնական կյանքին առնչվող անհարկի հարցեր տալուց խուսափելու միջոցով:

Թրաֆիքինգի զոհ դարձած երեխաների օգնության, աջակցության և պաշտպանության միջոցները

ԵՄ հրահանգի սկզբում նշվում է, որ հրահանգը կիրառելիս առաջնահերթությունը պետք է տրվի երեխայի լավագույն շահերին: Եթե առկա է որևէ կասկած թրաֆիքինգի զոհի տարիքի վերաբերյալ, և կան պատճառներ կարծելու, որ տվյալ անձը երեխա է, ապա այդ անձը պետք է համարվի երեխա: Այդ դեպքում անձի համար պետք է ապահովվի անհապաղ օգնության, աջակցության և պաշտպանության հնարավորություն:

Թրաֆիքինգի երեխա զոհին օգնություն և աջակցություն տրամադրելու միջոցներ պետք է ձեռնարկվեն անհատական գնահատում կատարելուց հետո և այդ գնահատման համաձայն՝ պատշաճ կերպով հաշվի առնելով երեխայի տեսակետները, կարիքները և մտահոգությունները:

Թրաֆիքինգի երեխա զոհի նույնականացման պահից երեխայի համար պետք է նշանակվի խնամատար կամ ներկայացուցիչ այն պարագայում, երբ, ներպետական իրավունքի նորմերի համաձայն, ծնողական պատասխանատվություն կրող անձինք իրենց և երեխա զոհի միջև շահերի բախման հետևանքով զրկվել են երեխայի լավագույն շահերն ապահովելու և (կամ) երեխային ներկայացնելու իրավունքից:

Եթե թրաֆիքինգի երեխա զոհն առանց ուղեկցության է, ապա, նպատակահարմարության դեպքում, կնշանակվի խնամք իրականացնող անձ:

Եթե թրաֆիքինգի երեխա զոհի ընտանիքը գտնվում է անդամ պետությունների տարածքում, ապա օգնությունն ու աջակցությունը, նպատակահարմարության և հնարավորության դեպքում, պետք է տարածվեն նաև ընտանիքի վրա:



Բացի խնամատար անձից, բավարար ֆինանսական միջոցներ չունեցող երեխա ԹՋ-ն պետք է ունենա նաև անվճար իրավաբանական խորհրդատվության և անվճար իրավական ներկայացուցչության իրավունք:

ԵՄ հրահանգով նախատեսվում են նաև հարցազրույցի անցկացման գործընթացում երեխաների պաշտպանության իրավական ուղեցույցներ (տե՛ս «Պեգաս»՝ յոթ քայլի մոդելը երեխաների համար, էջ 98):

2011/36/ԵՄ հրահանգն աչքի անցկացնելիս ընթերցողը կարող է նկատել, որ փաստաթղթում բազմիցս հղումներ են կատարվում ներպետական իրավունքի համապատասխան նորմերին և արդարադատության համակարգին, երբ հարցը վերաբերում է օգնության, աջակցության և (կամ) պաշտպանության հիմնական միջոցներին կամ դրանց ներդրման անհրաժեշտությանը:

Վարժություն, գնահատում

Նշումներ
վերապատ-
րաստողի
համար

Երրորդ մոդուլը կարելի է ամփոփել դերախաղով, ինչը հնարավորություն կտա գնահատելու սովորողների գիտելիքները: Որևէ գործի հիման վրա կարելի է անցկացնել հարցազրույց, ինչպես առաջարկվում է «Հովանդական կապը» պրեզենտացիայում, որը ներառված է գործիքակազմում:

ԲԱՌԱՐԱՆ

Առևանգում

Որևէ մեկին բռնություն գործադրելու կամ խաբեությամբ համոզելու միջոցով այլ վայր տանելու գործողությունը:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Որդեգրում (ներառյալ՝ միջազգային որդեգրումը, անօրինական որդեգրումը)

(Խնամքի տակ գտնվող անձինք) Օրենքով սահմանված գործընթաց, որով դադարեցվում են երեխայի և նրա կենսաբանական ծնողների միջև իրավունքներն ու պարտականությունները, որոնք էլ փոխարինվում են երեխայի ու որդեգրող ծնողների միջև նմանատիպ իրավունքներով ու պարտականություններով (ընտանեկան իրավունք):

(Պայմանավորություններ) Միջազգային հանրային իրավունքում այս տերմինն օգտագործվում է որպես պայմանագրի և կոնվենցիայի հոմանիշ:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Ապաստան

Պաշտպանության տեսակ, որն ապահովվում է պետության կողմից իր տարածքում՝ անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքի և փախստականների միջազգային կամ ազգային մակարդակով ճանաչված իրավունքների հիման վրա: Այն շնորհվում է անձի, որը մասնավորապես՝ ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու երկյուղի պատճառով չի կարող պաշտպանություն հայցել իր քաղաքացիության և (կամ) բնակության երկրում:

(Ուղեցույց ոհակների վերլուծության ստորաբաժանումների համար, Ֆրոնտլեքս)

Ապաստանի համար դիմող, ապաստան հայցող

Երրորդ երկրի քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, որը ապաստանի համար ներկայացրել է դիմում, որի կապակցությամբ դեռևս վերջնական որոշում չի կայացվել:

(Խորհրդի 2003/9/ԵՀ հրահանգի 2(գ) հոդված)



Մուրացկանություն (հարկադիր)

Հարկադիր աշխատանքի կամ ծառայությունների ձև, ինչպես սահմանված է «Հարկադիր կամ ստիպողական աշխատանքի մասին» ԱՄԿ-ի 1930 թվականի թիվ 29 կոնվենցիայով: (2011/36/ԵՄ հրահանգ)
Տե՛ս նաև՝ «հարկադիր աշխատանք»:

Սահմանային վերահսկողություն

Սահմանին իրականացվող գործողությունը, համաձայն թիվ 562/2006 (ԵՀ) կանոնակարգի և դրա նպատակների շրջանակներում, ի պատասխան բացառապես սահմանը հատելու մտադրության կամ տվյալ սահմանը հատելու գործողության, անկախ այլ նկատառումներից, որն իր մեջ ներառում է սահմանային ստուգումները և սահմանային հսկողությունը:
(Անձանց միջսահմանային տեղաշարժը կարգավորող կանոնների մասին Համայնքի կանոնները սահմանող Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2006 թվականի մարտի 15-ի թիվ 562/2006 (ԵՀ) կանոնակարգ (Շենգենյան սահմանային օրենսգիրք))

Սահմանների կառավարում

Ինտեգրված սահմանային կառավարումը հասկացություն է, որն ընդգրկում է հետևյալ ոլորտները.

- ♦ սահմանային վերահսկողություն (ստուգումներ և հսկողություն), ինչպես սահմանված է Շենգենյան սահմանային օրենսգրքով, այդ թվում՝ համապատասխան ռիսկերի վերլուծությունը և ոստիկանական հետախուզումը.
- ♦ միջսահմանային հանցագործությունների բացահայտում և քննություն՝ համակարգելով գործողությունները բոլոր իրավասու իրավապահ մարմինների հետ.
- ♦ մուտքի վերահսկողության քառամակարդակ մոդել (երրորդ երկրներում ձեռնարկվող միջոցներ, հարևան երկրների հետ համագործակցություն, սահմանային վերահսկողություն, վերահսկողության միջոցներ ազատ տեղաշարժի գոտու շրջանակներում, ներառյալ վերադարձը).

- ◆ մուտքի վերահսկողության քառամակարդակ մոդել (երրորդ երկրներում ձեռնարկվող միջոցներ, հարևան երկրների հետ համագործակցություն, սահմանային վերահսկողություն, վերահսկողության միջոցներ ազատ տեղաշարժի գոտու շրջանակներում, ներառյալ վերադարձը)։
- ◆ սահմանների կառավարման հարցով միջգերատեսչական համագործակցություն (սահմանապահներ, մաքսային մարմիններ, ոստիկանություն, ազգային անվտանգության և իշխանության այլ համապատասխան մարմիններ) և միջազգային համագործակցություն։
- ◆ անդամ պետությունների և հաստատությունների, ինչպես նաև Համայնքի ու Միության մյուս մարմինների գործողությունների համակարգում և համաձայնեցում։

(Խորհրդի եզրակացություններ ինտեգրված սահմանային կառավարման վերաբերյալ, 2006 թվականի դեկտեմբեր)

Երեխա

Տասնութ տարին չլրացած ցանկացած անձ:
(2011/36/ԵՄ հրահանգ)
Առնչվող տերմին՝ «անչափահաս»

Երեխա (ընտանիքից առանձնացված)

Տասնութ տարին չլրացած անձ, որը գտնվում է իր ծագման երկրից դուրս և անջատված է իր երկու ծնողից ու իր նախկին օրինական կամ սովորույթի ուժով հիմնական խնամակալ հանդիսացող անձից: Նրանցից ոմանք կարող են լինել բոլորովին միայնակ, մինչդեռ մյուսները, հնարավոր է, ապրեն իրենց ընդլայնված ընտանիքի անդամների հետ: Այդ բոլոր երեխաները համարվում են ընտանիքից անջատված երեխաներ և միջազգային ու տարածաշրջանային բազմաթիվ փաստաթղթերի ներքո ունեն միջազգային պաշտպանության իրավունք:

(Եվրոպական միության անդամ պետություններում ընտանիքից անջատված, ապաստան հայցող երեխաները, Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալություն (ՀԻԳ))



Երեխաների շահագործում

Երեխայի աշխատանք

Ավելի նեղ իմաստով գործածվող տերմին՝
«առանց ուղեկցության անչափահաս»

Ծանոթություն: Այս սահմանումը վերաբերում
է թե՛ երրորդ երկրի քաղաքացի և թե՛ ԵՄ
քաղաքացի երեխաներին:

Տե՛ս «Երեխայի աշխատանք»:

Անչափահասների շահագործում այնպիսի
աշխատանք կատարելու նպատակով, որը
կարող է ֆիզիկական կամ հոգեկան առումով
վնասել նրանց կամ խոչընդոտել երեխայի՝
արժանապատիվ կրթություն ստանալուն:

(Եվրոպական հանձնաժողովի՝ թրաֆիքինգի
դեմ պայքարին վերաբերող կայքէջում տե-
ղադրված բառարան)

Սահմանվում է որպես աշխատանք, որը գրկում
է երեխային իր մանկությունից, ներուժից ու
արժանապատվությունից, և որը վնասակար
է նրա ֆիզիկական ու մտավոր զարգացման
համար:

Դա վերաբերում է այն աշխատանքին, որը՝

- ◆ մտավոր, ֆիզիկական, սոցիալական կամ
բարոյական առումով վտանգավոր և
վնասակար է երեխաների համար և
- ◆ միջամտում է նրանց ուսումնառությանը՝

- նրանց զրկելով դպրոց հաճախելու
հնարավորությունից,
- նրանց պարտադրելով ժամանակից
շուտ դպրոցը լքել կամ
- պահանջելով, որ նրանք փորձեն
համատեղել դպրոց հաճախելը չա-
փազանց երկարատև ու ծանր աշ-
խատանքի հետ:

(Երեխայի աշխատանքի վերացմանն ուղղված
միջազգային ծրագիր (ԵԱՎՄԾ), ԱՄԿ)

Ծանոթություն: Այս սահմանման համաձայն՝
երեխան կարող է աշխատել (օրինակ՝ խա-
նություն, դպրոց հաճախելու ժամերից դուրս),
եթե դա հակասության մեջ չէ վերը նշվածի
հետ:

Երեխաների թրաֆիքինգ

Շահագործման նպատակով երեխաներին հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը: (վերցված է 2011/36/ԵՄ հրահանգից)
Երեխան համարվում է թրաֆիքինգի ենթարկված, եթե նա տեղաշարժվել է երկրի ներսում կամ դրա սահմաններից դուրս՝ ուժի կիրառմամբ կամ առանց դրա՝ երեխային շահագործելու նպատակով:
(<http://www.unicef.org>)

Հարկադրանք

Պարտադրում՝ ֆիզիկական ուժ գործադրելով կամ ֆիզիկական ուժ գործադրելու սպառնալիքով:
(Թրաֆիքինգի գոհերին ուղղակի աջակցության վերաբերյալ ձեռնարկ, ՄՄԿ, սկզբնաղբյուր՝ Բլեքի իրավաբանական բառարան (Black's law dictionary))

Նպատակակետ երկիր

Երկիր, որը միգրացիոն հոսքերի (կանոնավոր կամ անկանոն) վերջնակետն է:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Ծագման երկիր

Երկիր (կամ երկրներ), որը (որոնք) միգրացիոն հոսքերի սկզբնաղբյուր է (են), և որի (որոնց) քաղաքացիություն, հնարավոր է, ունենա միգրանտը: Փախստականների համատեքստում, Խորհրդի 2004/83/ԵՀ հրահանգով ծագման երկիրը նշվում է որպես քաղաքացիության երկիր (կամ երկրներ), կամ քաղաքացիություն չունեցող անձանց դեպքում՝ մշտական բնակության նախկին վայրի երկիր (երկրներ):
(վերցված է Եվրոպական միգրացիոն ցանցից (ԵՄՑ), հիմնված է ՄՄԿ-ի սահմանման վրա)
(Փախստականների համատեքստում՝ Խորհրդի 2004/83/ԵՀ հրահանգ)
Հոմանիշ՝ «ծագման պետություն»
Ավելի նեղ իմաստով գործածվող տերմիններ՝ «ծագման երկրի մասին տեղեկություններ», «անվտանգ ծագման երկիր»
Առնչվող տերմիններ՝ «քաղաքացիության երկիր», «տարանցման երկիր»
Ծանոթություն. որոշ դեպքերում միգրանտը կարող է ԵՄ մուտք գործել մեկ այլ երկրից, որը նրա ծագման երկիրը չէ:
Տե՛ս «տարանցման երկիր»:



Տարանցման երկիր

Երկիր, որի միջով տեղի են ունենում միգրացիոն հոսքերը (կանոնավոր կամ անկանոն): Այն համարվում է ծագման երկրից տարբերվող երկիր (կամ երկրներ), որի (որոնց) միջով միգրանտն անցնում է՝ նպատակակետ երկիր մուտք գործելու նպատակով:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ) Առնչվող տերմիններ՝ «ծագման երկիր», «նպատակակետ երկիր»

Պարտքի պատճառով կախվածություն

Կարգավիճակ կամ դրություն, որն առաջանում է պարտապանի կողմից իր անձնական կամ իր վերահսկողության տակ գտնվող անձի ծառայությունների՝ որպես պարտքի մարման երաշխիք գրավադրումից, եթե այդ ծառայությունների արժեքը, հիմնավորված կերպով գնահատվելով, չի ուղղվում պարտքի մարմանը, կամ այդ ծառայությունների տևողությունը և բնույթը համապատասխանաբար սահմանափակված և սահմանված չեն:
(«Սյրկոթյան վերացման մասին» ՄԱԿ-ի 1956 թվականի լրացուցիչ կոնվենցիա) Տես նաև «շահագործում», «սյրկոթյուն», «երեխայի աշխատանքի վարժարագույն ձևեր»:

Խաբեություն

Միգրացիայի համատեքստում այս տերմինը վերաբերում է ոչ միայն կեղծ կամ սխալ տեղեկություններին, այլ նաև, միգրանտների համար հասանելի տեղեկությունների բացակայությունից օգտվելով, դիտավորյալ չարահաման դեպքերին:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք

Արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի սահմանումն ավելի ընդգրկում է, քան անմարդկային վերաբերմունքի սահմանումը, և նվաստացնող լինելու հանգամանքը կարող է պայմանավորված լինել տվյալ անձի որոշակի հատկանիշներով: Վերաբերմունքն արժանապատվությունը նվաստացնող կհամարվի այն դեպքում, երբ դա արժանապատվությունը նվաստացնող համարեն այլ մարդիկ, որոնք ունեն նույն առանձնահատկությունները, ինչ տվյալ անհատը:
(<http://www.abouthumanrights.co.uk>)

Կալանք

Ազատությունից զրկելու միջոցով տեղաշարժվելու ազատության սահմանափակում, որը հրահանգված է վարչական կամ դատական մարմնի (մարմինների) կողմից՝ հնարավորություն տալու իրականացնել այլ ընթացակարգ:

ԵՄ-ում ապաստանի համատեքստում դա նշանակում է անդամ պետության կողմից ապաստանի համար դիմող անձին ազատությունից զրկելը որոշակի տարածքի սահմաններում, որտեղ դիմողը զրկվում է ազատ տեղաշարժվելու իր իրավունքից: Դա կարող է տեղի ունենալ ապաստանի տրամադրման գործընթացի ցանկացած փուլում կամ դրա ամբողջ ընթացքում՝ սկզբնական դիմումը ներկայացնելու պահից մինչև ապաստանի համար դիմած՝ մերժում ստացած անձին երկրից հեռացնելու պահը:

ԵՄ-ում վերադարձի համատեքստում անդամ պետություններում հնարավոր է կալանավորել կամ պահման վայրում պահել միայն երրորդ երկրների այն քաղաքացուն, որի նկատմամբ իրականացվում են վերադարձի ընթացակարգեր՝ վերադարձը նախապատրաստելու և (կամ) հեռացման գործընթացն իրականացնելու նպատակով, հատկապես այն դեպքում, երբ՝ ա) առկա է արդարադատությունից խուսափելու ռիսկ, կամ բ) տվյալ քաղաքացին խուսափում է վերադարձի նախապատրաստումից կամ հեռացման գործընթացից կամ խոչընդոտում է դրանց իրականացումը: Կալանքը պետք է լինի հնարավորինս կարճ ժամկետով և տևի միայն այնքան ժամանակ, քանի դեռ հեռացման հետ կապված նախապատրաստություններն ընթացքի մեջ են և պատշաճ կերպով չեն կատարվել:

(վերցված է ԵՄՑ-ից՝ հիմնված ՅՈՒՆԵՄԿՕ-ի Տեղաշարժվող անձանց վերաբերյալ ձեռնարկում (People on the move handbook) ներկայացված սահմանման, ԵՄ-ում ապաստանի համալսարանում՝ Խորհրդի 2003/9/ԵՀ հրահանգի և ԵՄ-ում վերադարձի համալսարանում՝ Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008/115/ԵՀ հրահանգի հիման վրա)



Պահման վայր	Բանտ չհանդիսացող հարմարեցված վայր, որը, ներպետական իրավունքի նորմերի համաձայն, օգտագործվում է երրորդ երկրների կալանված քաղաքացիների պահման համար: (Ուղեցույց ռիսկերի վերլուծության ստորաբաժանումների համար, Ֆրոնտեքս)
Խտրականություն (ուղղակի)	Դրսևորվում է այն դեպքում, երբ որևէ անձի նկատմամբ ռասայական կամ էթնիկական ծագման հիմքով ցուցաբերվում է պակաս նպաստավոր վերաբերմունք՝ այն վերաբերմունքի համեմատությամբ, որը նմանատիպ իրավիճակում ցուցաբերվել է կամ կցուցաբերվեր մեկ այլ անձի նկատմամբ: (Խորհրդի 2000/43/ԵՀ հրահանգ)
Խտրականություն (անուղղակի)	Դրսևորվում է այն դեպքում, երբ առերևույթ չեզոք դրույթի, չափորոշչի կամ գործելակերպի հետևանքով որոշակի ռասայական կամ էթնիկական ծագման անձինք հայտնվում են պակաս շահավետ պայմաններում՝ այլ անձանց համեմատ, եթե միայն այդ դրույթը, չափորոշիչը կամ գործելակերպն օրինական նպատակի գոյությամբ օբյեկտիվորեն արդարացված չէ, և եթե այդ նպատակին հասնելու միջոցները պատշաճ են ու անհրաժեշտ: (Խորհրդի 2000/43/ԵՀ հրահանգ)
Ներպետական (կամ ներքին) թրաֆիքինգ	Մարդկանց թրաֆիքինգի ձև (տե՛ս սահմանումը), որի դեպքում բոլոր տարրերն առկա են մեկ տարածքի (որը սույն ձեռնարկի համատեքստում կարող է լինել Շենգենյան գոտին, Եվրոպական միությունը կամ որևէ անդամ պետության տարածքը) սահմաններում: (Դիրկ Կալեմին)
Մուտք (անօրինական)	ԵՄ-ի համատեքստում դա նշանակում է երրորդ երկրների քաղաքացու այնպիսի մուտքը ԵՄ անդամ պետություն, որը չի համապատասխանում Շենգենյան սահմանային օրենսգրքի 5-րդ հոդվածի դրույթներին: Ավելի լայն համատեքստում, դա նշանակում է սահմանները հատել առանց ընդունող պետություն օրինական մուտք գործելու համար անհրաժեշտ պահանջները բավարարելու:

Մուտք (օրինական)	(Թիվ 562/2006 (ԵՀ) կանոնակարգ՝ Շենգենյան սահմանային օրենսգիրք, «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիա և դրան կից արձանագրություններ): Երրորդ երկրի քաղաքացու այնպիսի մուտքը ԵՄ անդամ պետություն, որը համապատասխանում է Շենգենյան սահմանային օրենսգրքի 5-րդ հոդվածի դրույթներին: (Թիվ 562/2006 (ԵՀ) կանոնակարգ՝ Շենգենյան սահմանային օրենսգիրք)
Շահագործում	Որևէ բան կամ որևէ մեկին սեփական շահերին ծառայեցնելը, մասնավորապես՝ որևէ մեկին սեփական շահերի համար անարդարացիորեն օգտագործելու գործողությունը (օրինակ՝ սեքսուալ շահագործում, հարկադիր աշխատանք կամ ծառայություններ, ստրկություն կամ ստրկությանը նմանվող վիճակ, անազատ վիճակ կամ օրգանների հեռացում): (Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ) Շահագործումն առնվազն ներառում է այլ անձանց պոռնկության շահագործումը կամ սեռական շահագործման այլ ձևեր, հարկադիր աշխատանքը կամ ծառայությունները, այդ թվում՝ մուրացկանությունը, ստրկությունը կամ ստրկությանը նմանվող վիճակը, անազատ վիճակը կամ հանցավոր գործողությունների շահագործումը կամ օրգանների հեռացումը: (2011/36/ԵՄ հրահանգ)
Արտաքսում	Դա վերաբերում է՝ ա) երրորդ երկրների այն քաղաքացու հեռացմանը, որի նկատմամբ կիրառվում է արտաքսման մասին որոշում՝ հասարակական կարգին կամ ազգային անվտանգությանն ու ապահովությանը լուրջ և առկա սպառնալիքի հիմքով, որն ընդունվում է հետևյալ դեպքերում. - որոշումը կայացնող անդամ պետության կողմից երրորդ երկրի քաղաքացու դատապարտումն այնպիսի հանցանքի համար, որի համար նախատեսված է առնվազն մեկ տարի ժամկետով ազատազրկում ներառող պատիժ.



Հարկադիր վերադարձ

Հարկադիր/ ստիպողական աշխատանք

բ) երրորդ երկրի այն քաղաքացու հեռացմանը, որի նկատմամբ կիրառվում է արտաքսման որոշում օտարերկրյա քաղաքացիների մուտքի կամ բնակության վերաբերյալ ներպետական կանոնները չպահպանելու հիմքով:

(Խորհրդի 2001/40/ԵՀ հրահանգ, 3(1) հոդված) Ավելի լայն իմաստով գործածվող տերմին՝ «հեռացում»

Ծանոթություն. Արտաքսումը հեռացման հատուկ ձև է, որը վերաբերում է միայն վերը նշված չափանիշներին: Հետևաբար, դա ավելի նեղ իմաստով գործածվող տերմին է, քան «հեռացումը»:

Անհատի ստիպողական վերադարձը ծագման, տարանցման կամ երրորդ երկիր՝ վարչական կամ դատական ակտի հիման վրա:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Բռնության կամ այլ պատիժների սպառնալիքի ներքո քիչ վարձատրության դիմաց կամ առանց վարձատրության կատարված այնպիսի աշխատանք, որը ենթադրում է հիմնական իրավունքների, ինչպես օրինակ՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակումներ: Սա շատ տարածված երևույթ է մարդկանց թրաֆիքինգի գոհերի դեպքում, օրինակ՝ հարկադիր աշխատանք որպես տնային ծառայողներ, ֆերմերային տնտեսությունում սևագործ բանվորներ:

(Եվրոպական հանձնաժողովի՝ թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող կայքէջում տեղադրված բառարան)

Ցանկացած աշխատանք կամ ծառայություն, որը որևէ անձ կատարում է պարբերական աշխատանքի ներքո, և որը կատարելու համար փոխյալ անձը ինքն իրեն կամավոր չի առաջադրել:

(«Հարկադիր աշխատանքի վերաբերյալ» ԱՄԿ-ի 1930 թվականի թիվ 29 կոնվենցիայի Հոդված 2(1))

**Կեղծված փաստաթուղթ
Խարդախություն**

Տե՛ն «կեղծ փաստաթուղթ»:
Ճշմարտության խեղաթյուրում կամ նյութա-
կան փաստի քողարկում՝ որոշակի օգուտ
քաղելու նպատակով:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան,
ՄՄԿ)

Կեղծ փաստաթուղթ

Ճանփորդական կամ ինքնությունը հաս-
տատող փաստաթուղթ, որը կեղծմամբ
պատրաստվել կամ զգալիորեն փոփոխվել
է՝ պետության անունից ճանփորդական կամ
ինքնությունը հաստատող փաստաթուղթ
պատրաստելու կամ տալու օրինական լիա-
զորություն չունեցող անձի կամ մարմնի
կողմից, կամ որը ոչ պատշաճ կերպով
տրվել կամ ձեռք է բերվել խեղաթյուրման,
կոռուպցիայի կամ ճնշման կամ որևէ
այլ անօրինական եղանակով, կամ որն
օգտագործվում է օրինական իրավատիրոջից
տարբեր այլ անձի կողմից:

(«Անդրազգային կազմակերպված
հանցավորության դեմ» Միավորված ազգերի
կազմակերպության կոնվենցիան լրացնող՝
«Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին
մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու
դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության
Հոդված 3(գ))

**Հիմնարար
իրավունքներ**

Հղում է կատարվում «Հիմնարար իրավունք-
ների մասին» Եվրոպական միության
խարտիային (2010/Ը 83/02, 2010 թվականի
մարտի 30), որում սահմանված են այդ իրա-
վունքները, ազատություններն ու սկզբունք-
ները:

Առողջություն

Լիարժեք ֆիզիկական, մտավոր ու սոցիա-
լական բարեկեցության վիճակ, այլ ոչ թե
պարզապես հիվանդությունների կամ ֆիզի-
կական թերությունների բացակայություն:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան,
ՄՄԿ)

Մարդու իրավունքներ

Մարդու արժանապատվության վրա հիմնված
այն ազատությունները և արտոնությունները,
որոնք, ընդունված ժամանակակից արժեքների
համաձայն, բոլոր մարդիկ, որպես իրենց իրա-
վունք, պետք է կարողանան պահանջել այն
հասարակությունում, որի մեջ ապրում են:



Այդ իրավունքները ներառված են Իրավունքների միջազգային օրինաշարում, որն ընդգրկում է 1948 թվականի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը, «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» ու «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» 1966 թվականի միջազգային դաշնագրերը, և զարգացել են այդ հիմքի վրա ընդունված այլ պայմանագրերով (օրինակ՝ «Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1979 թվականի կոնվենցիան, «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» 1965 թվականի միջազգային կոնվենցիան):

(Միգրացիայի ոլորտի տերմինների բանասիրան, ՄՄԿ)

Թրաֆիքինգի գոհերի հայտնաբերում (նույնականացում)

Սույն ձեռնարկի համատեքստում՝ նկարագրի (պրոֆիլի), որոշակի ցուցիչների և (կամ) իրեղեն ապացույցների առկայության ու անձի հետ անցկացվող հարցազրույցի համադրություն, ինչը հանգեցնում է մարդկանց թրաֆիքինգի (հնարավոր) գոհի բացահայտմանը:
(Դիրկ Կալեմին)

Անօրինական մուտք

Ցուցիչ

Տեն «մուտք» (անօրինական):

Սա վերաբերում է տվյալային եզակի տարրի, որը հանդես է գալիս որպես հուշում կամ բանալի, որի միջոցով հնարավոր է դառնում ընկալել հանգամանքները, դրությունը կամ կարգավիճակը: Օրինակ՝ ցուցիչը կարող է վկայել այն մասին, որ տեղի է ունենում որոշակի իրադարձություն կամ գործողություն կամ այդպիսի իրադարձության տեղի ունենալու համար մի շարք պայմանների առկայության մասին կամ հուշել թիրախ հանդիսացող անձի հնարավոր մտադրությունների մասին: Օգտակար և համոզիչ լինելու համար ցուցիչները լավագույնս մշակվում, հավաքվում և գնահատվում են որպես «համախմբեր»:

(Ուղեցույց ոխկերի վերլուծության սրտրաբաժանումների համար, Ֆրոնտերս)

**Անմարդկային
վերաբերմունք**

Ֆիզիկական կամ մտավոր այնպիսի ծանր տառապանքներ պատճառող դաժան վերաբերմունք, որը վտանգում է կյանքը կամ առողջությունը:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

**Հետախուզական
տվյալներ**

Տեղեկություններ, որոնք դիտարկվել և մեկնաբանվել են շահերի կամ կարիքների տեսանկյունից և որոնք վերաբերում են ռիսկի բաղադրիչներից մեկին (այսինքն՝ վերաբերում են ռիսկ սպառնալիքի, տվյալ սպառնալիքի նկատմամբ խոցելիությանը և այդ սպառնալիքի ազդեցությանը): Հետախուզական փաստաթուղթը կազմվում է հասանելի այն բոլոր տեղեկությունների հավաքման, ամբողջականացման, վերլուծության և մեկնաբանման արդյունքում, որոնք ուղղակիորեն կամ պոտենցիալ կերպով էական նշանակություն ունեն ծրագրման, քաղաքականության և գործողությունների իրականացման գծով անձնակազմի ու որոշում կայացնողների համար:

(Ուղեցույց ռիսկերի վերլուծության պորտաբաժանումների համար, Ֆրոնտեքս)

Ներքին թրաֆիքինգ

**Միջազգային
պաշտպանություն**

Տե՛ս «ներպետական թրաֆիքինգ»:

Եվրամիության Ապաստանի վերաբերյալ կանոնագրքի համատեքստում դա նշանակում է փախստականի (երրորդ երկրի քաղաքացի, որը ռասայական, կրոնական, ազգային պատկանելության, քաղաքական հայացքների կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելության համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ այդ երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից) և օժանդակ պաշտպանություն ստացողի (երրորդ երկրի քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող անձ, որը չի բավարարում փախստական ճանաչվելու պահանջները, սակայն [...] իր ծագման/մշտական բնակության նախկին վայրի երկիր վերադառնալու դեպքում բավական է լուրջ վնաս կրելու իրական ռիսկի) կարգավիճակ: (ՄԱԿ ՓԳՀ)



Հարցազրույց

Անձին հարցեր տալու կամ նրա հետ զրուցելու գործընթաց, որն իրականացվում է տեղեկություններ ստանալու կամ նրա անձնական որակները որոշելու համար: Փախստականի կամ իմիգրացիոն (ներգաղթային) այլ կարգավիճակի համար ներկայացված դիմումի վերաբերյալ որոշում կայացնելու համար հարցազրույցի անցկացումն ընդհանուր բնույթ կրող քայլ է:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Անկանոն կարգավիճակով միգրանտ

Անօրինական մուտքի կամ վիզայի ժամկետը լրանալու հետևանքով տարանցման կամ հյուրընկալող երկրում իրավական կարգավիճակ չունեցող անձ: Այս տերմինը վերաբերում է այն միգրանտներին, որոնք խախտում են երկրի ընդունման կանոնները, և ցանկացած այլ անձի, որն իրավունք չունի մնալու հյուրընկալող երկրում (կոչվում են նաև լատենտային/անօրինական/փաստաթղթային խնդիրներ ունեցող միգրանտներ կամ անկանոն կարգավիճակում գտնվող միգրանտներ):
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Անկանոն միգրացիա

Տեղաշարժ, որը տեղի է ունենում ուղարկող, տարանցման և ընդունող երկրների նորմատիվ իրավական դրույթների գործողությունից դուրս: «Անկանոն միգրացիա» տերմինի համար հստակ կամ համընդհանուր ճանաչում գտած որևէ սահմանում չկա: Նպատակակետ երկրների դիտանկյունից՝ դա երկիր անօրինականորեն մուտք գործելը, այնտեղ մնալը կամ աշխատելն է, այսինքն՝ այն իրավիճակը, երբ միգրանտը չունի անհրաժեշտ թույլտվություն կամ իմիգրացիոն (ներգաղթային) կանոնակարգերով պահանջվող փաստաթղթեր՝ տվյալ երկիր մուտք գործելու, այնտեղ մնալու կամ աշխատելու համար: Ուղարկող երկրի դիտանկյունից՝ անկանոն բնույթն ակներև է այն դեպքերում, երբ, օրինակ, անձը հատում է որևէ միջազգային սահման առանց վավեր անձնագրի կամ ճամփորդական փաստաթղթի կամ չի կատարում երկրից դուրս գալու համար սահմանված վարչական պահանջները:

**Առևանգում
շահադիտական
նպատակով**

Այնուամենայնիվ, նկատվում է «անօրինական միգրացիա» տերմինի գործածությունը մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեպքերով սահմանափակելու միտում:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Անձին կամ անձանց խմբին բռնության միջոցով ապօրինաբար առևանգելը կամ պահելը, ինչը սովորաբար կատարվում է շահադիտական նպատակով առևանգման տուժողից կամ երրորդ անձից տնտեսական կամ քաղաքական շահ շորթելու նպատակով: Շահադիտական նպատակով առևանգման վրա սովորաբար տարածվում է առանձին պետություններում գործող ազգային քրեական օրենսդրությունը, թեև շահադիտական նպատակով առևանգման որոշ ձևերի դեպքում գործում է միջազգային իրավունքը (օրինակ՝ ծովահենության դեպքում):

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

**Աշխատանքային
թրաֆիքինգ**

Սույն ձեռնարկում՝ աշխատանքային շահագործման նպատակով իրականացվող թրաֆիքինգ:

(Դիրկ Կալեմին)

Հոգեկան առողջություն

Տերմին, որը գործածվում է իմացական կամ հուզական բարեկեցության մակարդակը կամ հոգեկան խանգարման բացակայությունը նկարագրելու համար:

(Վեբստերի առցանց բառարան (Webster's online dictionary))

Միգրանտ

Ներգաղթողի կամ արտագաղթողի համար ավելի լայն իմաստով գործածվող տերմին, որը վերաբերում է այն անձին, որը լքում է որևէ երկիր կամ տարածաշրջան՝ մեկ այլ երկրում կամ տարածաշրջանում բնակություն հաստատելու նպատակով, հաճախ՝ ավելի բարեկեցիկ կյանքի ակնկալիքով:

Ծանոթություն. Եվրամիության ապաստանի և միգրացիոն քաղաքականության համատեքստում այս տերմինը գործածվում է ԵՄ մուտք գործող (ԵՄ-ում գտնվող)՝ երրորդ երկրների քաղաքացիների համար:

(ԵՄՅ-ի Ապաստանի և միգրացիայի ոլորտի բառարան)



Միգրացիա

Եվրամիության համատեքստում «միգրացիան» ներգաղթի և արտագաղթի համար ավելի լայն իմաստով գործածվող տերմին է, այսինքն՝ մի գործողություն, որի միջոցով տվյալ անձը կամ՝

- ◆ մշտական բնակություն է հաստատում որևէ անդամ պետության տարածքում այնպիսի ժամանակահատվածով, որը կազմում է առնվազն 12 ամիս կամ նախատեսվում է լինել առնվազն 12 ամիս, այն դեպքում, երբ նախկինում սովորաբար բնակվել է մեկ ուրիշ անդամ պետությունում կամ որևէ երրորդ երկրում, կամ՝
- ◆ նախկինում սովորաբար բնակվելով որևէ անդամ պետության տարածքում, դադարում է սովորաբար բնակվել տվյալ անդամ պետությունում այնպիսի ժամանակահատվածով, որը կազմում է առնվազն 12 ամիս կամ նախատեսվում է լինել առնվազն 12 ամիս:

Ավելի գլոբալ համատեքստում դա վերաբերում է միջազգային սահմանը հատելու միջոցով (միջազգային միգրացիա) կամ պետության ներսում (ներքին միգրացիա) տեղաշարժվելուն: Դա բնակչության տեղաշարժ է, որը ենթադրում է մարդկանց ցանկացած տեսակի տեղաշարժ՝ անկախ դրա տևողությունից, կազմից և պատճառներից. այն ներառում է փախստականների, տեղահանված անձանց, արմատներից կտրված անձանց և տնտեսական միգրանտների միգրացիան:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

(Մշակված է ԵՄՑ-ի կողմից՝ ներգաղթի և արտագաղթի սահմանումների հիման վրա)
Ավելի նեղ իմաստով գործածվող տերմիններ՝ «արտագաղթ», «ներգաղթ»

Անչափահաս

Խառը հոսքեր

Տե՛ս «Երեխա»:

Բնակչության՝ բարդ տեսակի միգրացիոն տեղաշարժեր, որոնցում ընդգրկված են փախստականներ, ապաստան հայցողներ, տնտեսական և այլ միգրանտներ:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Առնչվող տերմին՝ «խառը միգրացիա»

Ուղղորդման ազգային մեխանիզմ

Համագործակցության շրջանակ, որի միջոցով պետական սուբյեկտները կատարում են թրաֆիքինգի ենթարկված անձանց մարդու իրավունքները պաշտպանելու և խթանելու իրենց պարտավորությունները՝ համակարգելով իրենց գործողությունները քաղաքացիական հասարակության հետ ռազմավարական գործընկերության միջոցով:
(Ուղղորդման ազգային մեխանիզմներ. գործնական ձեռնարկ, ԵԱՀԿ, ԺՀՄԻԳ)

Կազմակերպված հանցավորություն

Լայնամասշտաբ հանցավոր գործունեություն, որի համակարգումը և վերահսկումն իրականացվում են կենտրոնական միավորումների (սինդիկատների) կողմից:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Կազմակերպված հանցավոր խումբ

Երեքկամավելի անձանց՝ կառուցվածքայնորեն ձևավորված խումբ, որը գոյություն ունի որոշակի ժամանակահատվածում և համաձայնեցված գործում է մեկ կամ մի քանի լուրջ հանցագործություններ կամ այնպիսի հանցագործություններ կատարելու նպատակով, որոնք այդպիսին են ճանաչվել սույն Կոնվենցիային համապատասխան այն հաշվով, որ ուղղակիորեն կամ անուղղակիորեն ստանա ֆինանսական կամ այլ նյութական շահ:
«Կառուցվածքայնորեն ձևավորված խումբ» նշանակում է՝ այն խումբը, որը պատահականորեն չի կազմավորվել հանցագործության անհապաղ կատարման համար, և որում ոչ պարտադիր կերպով ձևականորեն որոշված են նրա անդամների դերերը, վերապահված է անդամակցության անընդհատ բնույթը, կամ ստեղծված է զարգացած կառուցվածք:
(«Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի կոնվենցիայի 2(ա) և (գ) հոդվածներ)

Պալերմոյի արձանագրություն (արձանագրություններ)

2000 թվականին Միավորված ազգերի կազմակերպության կողմից ընդունված երեք արձանագրություն. սակայն, երբ սովորաբար հղում է կատարվում «Պալերմոյի արձանագրությանը», պետք է հասկանալ «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի



**Մաքսանենգ
ճանապարհով
մարդկանց
տեղափոխում**

կազմակերպության կոնվենցիան լրացնող
«Մարդկանց, հատկապես կանանց և երեխա-
ների առևտրի կանխարգելման, արգելման ու
պատժի մասին» արձանագրությունը:
Հիշատակվում է նաև որպես Թրաֆիքինգի
մասին ՄԱԿ-ի արձանագրություն:
(Դիրկ Կալենին)

Ֆինանսական կամ այլ նյութական օգուտ
ստանալու նպատակով մարդկանց տեղա-
փոխում այնպիսի երկրներ, որտեղ մուտք
գործելու համար նրանք չունեն անհրաժեշտ
վիզաներ կամ մուտքի թույլտվություններ: Որ-
պես կանոն՝ իրականացվում է մաքսանենգ
ճանապարհով տեղափոխվող անձանց նախա-
ձեռնությամբ կամ նրանց համաձայնությամբ:
(Եվրոպական հանձնաժողովի՝ Թրաֆիքինգի
դեմ պայքարին վերաբերող կայքէջում տեղա-
դրված բառարան)
Տե՛ս նաև՝ «մաքսանենգ ճանապարհով միգ-
րանտների տեղափոխում»:

**Հանցագործություն
կատարող անձ**

Տերմին, որը սովորաբար գործածվում է
իրավապահ մարմինների աշխատակիցների
կողմից այն անձին բնութագրելու համար, որը
փաստացի հանցագործություն է կատարում:
(Ֆարլեքսի ազատ բառարան (The Free Dictio-
nary by Farlex))

**Հետտրավմատիկ
սթրեսային խանգարում**

Հոգեբանական ռեակցիա, որը դրսևորվում
է չափազանց սթրեսային իրադարձության
մասնակից լինելուց հետո (օրինակ՝ պա-
տերազմական մարտ, ֆիզիկական բռնություն
կամ բնական աղետ). այն սովորաբար բնու-
թագրվում է ընկճախտով, տագնապով, անց-
յալի հիշողություններով, կրկնվող մղձա-
վանջներով և իրադարձության մասին
հիշեցնող երևույթներից խուսափելով: Գոր-
ծածվող հապավումն է՝ ՀՏՄԽ-ն, նաև կոչվում
է հետտրավմատիկ սթրեսի համախտանիշ:
(<http://www.merriam-webster.com>)

**ՄԹ-ի զոհերի
կերպավորում
(պրոֆիլավորում)**

ՄԹ-ի զոհերի (պոտենցիալ զոհերի) թիրա-
խավորում դիտարկված առանձնահատկու-
թյունների կամ վարքագծի հիման վրա:
(Դիրկ Կալենին)

Քրեական հետապնդում

Քրեական վարույթ, որի ընթացքում մեղադրվող անձի նկատմամբ իրականացվում է դատական քննություն:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Պաշտպանություն

Հասկացություն, որը ներառում է անհատի իրավունքների նկատմամբ լիարժեք հարգանք ապահովելուն ուղղված բոլոր գործողությունները՝ մարդու իրավունքների, փախստականների և միջազգային մարդասիրական իրավունքի տառին ու ոգուն համապատասխան: Պաշտպանությունը ներառում է այնպիսի միջավայրի ստեղծումը, որը նպաստավոր է մարդկանց նկատմամբ հարգանք դրսևորելու, ուսնձգությունների որոշակի ձևի անմիջական ազդեցությունը կանխելու և (կամ) հետևանքները մեղմելու, ինչպես նաև փոխհատուցման, ռեստիտուցիայի և վերականգնման միջոցով նրանց համար կյանքի արժանապատիվ պայմանները վերականգնելու առումով:
(Տերմինների հիմնական բառարան (Master Glossary of Terms), ՄՄԿ ՓԳՀ)

Ձգող գործոն

Վերաբերում է այն պայմանին (պայմաններին) կամ հանգամանքին (հանգամանքներին), որը (որոնք) գրավում է (են) միգրանտին մեկ ուրիշ երկրում: Դրա հիմքում կարող է լինել որոշակի պատճառ կամ տարբեր պատճառներ, օրինակ՝ տնտեսական հնարավորությունների ընդլայնումը և նպատակակետ երկրում հաջողությունների հասնելու ներուժը:
(Մշակված է ԵՄՅ-ի աշխարհաքային խմբի կողմից՝ Եվրոպական վերախնդրման ցանցի ծրագրի շրջանակներում և ՄՄԿ-ի Միգրացիայի ոլորտի տերմինների բառարանում ներկայացված սահմանումների հիման վրա)

Վանող գործոն

Վերաբերում է ծագման երկրում առկա այն պայմանին (պայմաններին) կամ հանգամանքին (հանգամանքներին), որը (որոնք) դրդում կամ մղում է (են) արտագաղթի:



Ուղղորդման մեխանիզմներ

Դրա հիմքում կարող է լինել որոշակի պատճառ
կամ մի տարբեր պատճառներ, օրինակ՝ նվա-
զող տնտեսական հնարավորությունները կամ
քաղաքական անկայունությունը կարող են
խթանել արտագաղթը:

*(Մշակված է ԵՄՅ-ի աշխատանքային խմբի
կողմից՝ Եվրոպական վերաինտեգրման ցան-
ցի ծրագրի շրջանակներում և ՄՄԿ-ի Միգ-
րացիայի ոլորտի տերմինների բառարանում
ներկայացված սահմանումների հիման վրա)*

Կառուցվածքային առումով գործընկերների
առկայությունը գոհի իրավունքներն ու ընդ-
հանուր բարեկեցությունն ապահովելու և
պաշտպանելու համար:

(Դիրկ Կայեմին)

Տեննաս՝ «ուղղորդման ազգային մեխանիզմ»:

Մտորելու համար գոհին հատկացվող ժամանակահատված

Ժամանակահատված, որի ընթացքում չի
կարող գոհի նկատմամբ իրագործվել ար-
տաքսման որևէ կարգադրագիր, և որի
իմաստը նրանց վերականգնվելու ու թրա-
ֆիքինգ իրականացնող անձանց ազդե-
ցությունից ազատվելու և (կամ) իրավասու
մարմինների հետ համագործակցության
հիմնավորված որոշում կայացնելու հնարա-
վորություն ընձեռելն է: Օգնությունը և աջակ-
ցությունը պետք է տրամադրվեն առանց նա-
խապայմանների՝ առնվազն՝ մտորելու համար
հատկացվող ժամանակահատվածում:

*(Վերցված է 2004/81/ԵՀ հրահանգից, 2004
թվականի ապրիլ, Հոդված 6, և 2011/36/ԵՄ
հրահանգից, նախաբան)*

Անձին վերադարձնելը

Պետության կողմից անձին ցանկացած
եղանակով վերադարձնելը մեկ այլ պե-
տության տարածք, որտեղ նա, հնարավոր
է, հետապնդվի ռասայական, կրոնական,
ազգային, սոցիալական պատկանելության
կամ քաղաքական հայացքների համար, կամ
որտեղ նա կարող է բախվել խոշտանգման
ենթարկվելու ռիսկի: Անձին վերադարձնելը
ներառում է ցանկացած գործողություն, որի
արդյունքում տվյալ անձը վերադարձվում է
որևէ պետություն, ներառյալ արտաքսումը,
վտարումը, հանձնումը, սահմանին մերժումը,

Անձին վերադարձնելու անթույլատրելիություն

Փախստական (այդ թվում՝ ապաստան հայցող)

պետության իրավագործության սահմաններից դուրս տեղաշարժի կանխարգելումը և ֆիզիկական վերադարձը:

(Փախստականների վերաբերյալ տերմինների միջազգային բացատրական բառարան (International Thesaurus of Refugee Terminology), ՄԱԿ ՓԳՀ)

Առնչվող տերմին՝ «հարկադիր վերադարձ»

Փախստականներին առնչվող միջազգային իրավունքի առանցքային սկզբունք, որով պետություններին արգելվում է որևէ եղանակով փախստականներին վերադարձնել այն երկրներ կամ տարածքներ, որտեղ, հնարավոր է, վտանգվի նրանց կյանքը կամ ազատությունը: Անձին վերադարձնելու անթույլատրելիության սկզբունքը միջազգային սովորության իրավունքի մաս է և, հետևաբար, պարտադիր է բոլոր պետությունների համար՝ անկախ այն հանգամանքից, թե նրանք 1951 թվականի Ժնևի կոնվենցիայի կողմ են, թե ոչ: (Ժնևի կոնվենցիայի Հոդված 33, 1951 թվական)

Ժնևի կոնվենցիայի համաձայն՝ այն անձը, որը ռասայի, կրոնի, քաղաքացիության, քաղաքական հայացքների կամ որոշակի սոցիալական խմբի պատկանելության համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի պատճառով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և անկարող է կամ այդ երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել այդ երկրի պաշտպանությունից, կամ՝ քաղաքացիություն չունեցող անձ, որը, վերը նշված պատճառներով իր մշտական բնակության նախկին վայրի երկրից դուրս գտնվելով, անկարող է կամ այդ երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ:

Եվրամիության համատեքստում, Ժնևի կոնվենցիայի IU հոդվածում սահմանված իմաստով՝ այս տերմինը, մասնավորապես, վերաբերում է երրորդ երկրների քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին, որն ունի անդամ պետության տարածքում այդ կարգավիճակով բնակվելու թույլտվություն, և որի նկատմամբ չի կիրառվում Խորհրդի 2004/83/ԵՀ հրահանգի Հոդվածը 12-ը (Բացառում):



Բնակություն (կեցություն)

(Ժնևի կոնվենցիա, Խորհրդի 2004/83/ԵՀ հրահանգի Հոդված 2(գ))
Ավելի լայն իմաստով գործածվող տերմին՝ «հարկադրված միգրանտ»

Կոնկրետ վայրում որոշ ժամանակ ապրելը կամ ապրելու փաստը. այն վայրը, որտեղ անձը փաստացի ապրում է՝ ի տարբերություն հիմնական բնակության վայրի: Բնակությունը սովորաբար ենթադրում է պարզապես տվյալ վայրում անձի ֆիզիկական ներկայությունը՝ որպես բնակիչ, մինչդեռ հիմնական բնակության դեպքում պահանջվում է ֆիզիկական ներկայություն տվյալ վայրում՝ այն հայրենի տուն դարձնելու մտադրությամբ: Այսպիսով, անձը միաժամանակ կարող է ունենալ մեկից ավելի բնակության վայր, սակայն միայն մեկ հիմնական բնակության վայր:
(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Բնակության (կեցության) թույլտվություն

Անդամ պետության իրավասու մարմինների կողմից ցանկացած թույլտվություն, որով երրորդ երկրի քաղաքացուն թույլատրվում է օրինական կերպով գտնվել տվյալ պետության տարածքում՝ համաձայն Խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի թիվ 1030/2002 (ԵՀ) կանոնակարգի 1(2)(ա) հոդվածի դրույթների, որոնցով սահմանվում է երրորդ երկրի քաղաքացիների համար բնակության (կեցության) թույլտվությունների միասնական ձևաչափ:
(Խորհրդի 2003/86/ԵՀ հրահանգ)
Անդամ պետության իրավասու մարմինների կողմից տրվող ցանկացած թույլտվություն կամ լիազորություն, որը տրամադրվում է տվյալ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ երրորդ երկրի քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին թույլատրելով բնակվել իր տարածքում:
(Խորհրդի 2004/83/ԵՀ հրահանգ)
Ավելի լայն իմաստով գործածվող տերմին՝ «բնակության (կեցության) փաստաթուղթ»

Վերադարձ (այդ թվում՝ հայրենադարձություն, ոչ կամավոր/կամավոր վերադարձ))

Լայն իմաստով, դա վերաբերում է այն անձի տեղաշարժին, որը վերադառնում է իր ծագման երկիր, քաղաքացիության երկիր կամ մշտական բնակության վայրի երկիր, որպես կանոն՝ մեկ ուրիշ երկրում զգալի ժամանակ

(այսինքն՝ չհաշված արձակուրդային այցելությունները, գործարար հանդիպումները, և որը սովորաբար համարվում է երեք ամիսը գերազանցող ժամանակահատվածը) անցկացնելուց հետո: Այս վերադարձը կարող է լինել կամավոր կամ ոչ կամավոր:

Վերադարձի մասին հրահանգի (2008/115/ԵՀ հրահանգ) համատեքստում դա նշանակում է, անկախ վերադառնալու պարտավորությունը կամավոր կամ հարկադրված կատարելու հանգամանքից, հետ վերադառնալու գործընթացը դեպի՝ հանգամանքից, հետ վերադառնալու գործընթացը դեպի՝

- ◆ տվյալ անձի ծագման երկիր, կամ՝
- ◆ տարանցման երկիր՝ հետընդունման (ռեադմիսիայի) մասին Համայնքի կամ երկկողմ համաձայնագրերի կամ այլ կարգավորումների համաձայն, կամ՝
- ◆ մեկ այլ երրորդ երկիր, ուր երրորդ երկրի քաղաքացին կամավոր որոշում է վերադառնալ, և որտեղ նրան կընդունեն:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ, «Անդամ պետություններում գործող՝ անօրինական հիմունքներով որևէ երկրի տարածքում գտնվող երրորդ երկրների քաղաքացիներին վերադարձնելու վերաբերյալ ընդհանուր չափանիշների և ընթացակարգերի մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2008 թվականի 2008/115/ԵՀ հրահանգ)

Հոմանիշ՝ «վերադարձ ենթադրող միգրացիա» Ծանոթություն. Ըստ ՄՄԿ-ի սահմանման՝ այն կարող է տեղի ունենալ մեկ երկրի տարածքի սահմաններում, ինչպես, օրինակ՝ ՆՏԱ-ների և զորացրված մարտիկների դեպքում, կամ ընդունող (տարանցման կամ նպատակակետ) երկրի և ծագման երկրի միջև, ինչպես, օրինակ՝ փախստականների, ապաստան հայցողների և մասնագիտական որակավորում ունեցող քաղաքացիների դեպքում: Գոյություն ունեն վերադարձի ենթատեսակներ, որոնց միջոցով կարելի է բնութագրել, թե ինչպես է վերադարձն իրականացվում, օրինակ՝ հարկադիր, աջակցվող և ինքնաբերական վերադարձ:



Կրկնակի վիկտիմիզացիա

Ռիսկ

Իրավիճակ, երբ նույն անձը որոշակի ժամանակահատվածի ընթացքում դառնում է քրեա-
իրավական հետևանքներով մեկից ավելի պա-
տահարի զոհ:

*(Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի
մոդելային օրենք, ՄԱԹՀՊԳ)*

*Տե՛ս նաև՝ «վիկտիմիզացիա», «երկրորդային
վիկտիմիզացիա»:*

Ընտրված գործողության կամ գործունեության
(այդ թվում՝ անգործության) հետևանքով
կորստի (անցանկալի հետևանքի) հնարա-
վորություն: Այս հասկացությունը ենթադրում
է, որ գոյություն ունի (կամ գոյություն է ունեցել)
արդյունքի վրա ազդեցություն ունեցող ընտ-
րություն:

(Վիքիպեդիա)

Արտաքին սահմանների կառավարման
առումով, «ռիսկը» սահմանվում է որպես
արտաքին սահմաններին այնպիսի սպառ-
նալիքի հավանականություն, հաշվի առնե-
լով սահմաններին և Եվրամիությունում
կիրառվող միջոցները, որը կարող է ազդե-
ցություն ունենալ Եվրամիության ներքին
անվտանգության և (կամ) արտաքին սահման-
ների անվտանգության վրա:

Ավելի ընդհանրական իմաստով՝ «ռիսկը»
կարելի է հասկանալ որպես՝

- ◆ միջոց, որը հնարավորություն է տալիս
որոշելու օրենքի, իրավական ակտերի
կատարման, հանրային անվտանգության,
ազգային անվտանգության կամ շրջա-
կա միջավայրի վրա բացասական ազ-
դեցության հավանականությունը և դրա
վտանգավորության աստիճանը.
- ◆ անորոշության չափման միավոր: Այդպիսի
անորոշությունը կարող է վերաբերել
կազմակերպական նպատակներին հաս-
նելուն և կարող է ներառել դրական կամ
բացասական հետևանքներ: Դրական
ռիսկերի մեծամասնությունը հայտնի է
որպես հնարավորություն, իսկ բացա-
սական ռիսկերը պարզապես կոչվում են
ռիսկեր:

*(Ուղեցույց ռիսկերի վերլուծության սրորա-
բաժանումների համար, Ֆրոնտեքս)*

Ռիսկի գնահատում

Ռիսկի գնահատումը կոնկրետ իրավիճակի կամ գիտակցված սպառնալիքի (կոչվում է նաև վտանգ) հետ կապված ռիսկի քանակական և որակական արժեքի որոշումն է:

(Վիքիպեդիա)

Ռիսկերի վերլուծության միասնական ինտեգրացված մեթոդի (ՌՎՄԻՄ) համատեքստում ռիսկերի գնահատումները տեղեկատվական զեկույցներից տարբերվում են նրանով, որ դրանցում ներկայացվում են ոչ թե պարզապես չմեկնաբանված տեղեկություններ, այլ եզրակացություններ, կանխատեսումներ և ռիսկերի հեռանկարային վերլուծություն: Դրանք պաշտոնատար անձանց և ղեկավարների համար ապահովում են՝ (i) թիրախային խմբի օպերատիվ գործողությունների և նպատակների համապարփակ և ռազմավարական գնահատում և (ii) ռիսկերի վերլուծության ստորաբաժանումներին անհրաժեշտ տեղեկություններ թիրախային խմբերի մասով սահմանային վերահսկողության վերաբերյալ եզրակացություններ կատարելու համար: Ռիսկերի գնահատման համար առանցքային են համարվում հետևյալ բաղադրիչները.

i) Ամփոփ նկարագիր. ներկայացվում է գնահատման մեջ ներառված համապատասխան տեղեկությունների ընդհանուր համառոտ նկարագրությունը: Ամփոփ նկարագիրը պետք է համապատասխանի ներկայացվող տեղեկություններին, և դրա մեջ չեն կարող ներառվել տեղեկություններ, որոնք ընդգրկված չեն զեկույցի մանրամասներում:

ii) Զեկույցի հիմնական մաս. վերաբերում է գնահատվող սուբյեկտին առնչվող կարևոր հարցերի և փաստերի: Այն ներառում է տեղեկություններ, որոնք վերաբերում են տվյալ սուբյեկտի կարողունակություններին, մտադրություններին, կազմակերպությանը և միտումներին, սակայն չեն սահմանափակվում դրանցով:

iii) Կարողունակություններ. ինչ կարողունակություններ ունի մյուս կողմը: Քրեորեն պատժելի արարք կատարելու ինչ կարողություն ունեն նրանք: Ինչ ունակություններ են նրանք դրսևորել, որոնք կարող են վճռորոշ լինել նրանց հետագա գործողությունների կամ արդյունքների առումով:



Ինչ առանձնահատուկ տաղանդ կամ տեխնիկական հմտություններ ու գիտելիք ունեն նրանք, և ինչպես ու երբ կարող են դրանք օգտագործվել: Ելնելով տվյալ անհատների կարողություններից՝ ինչ վտանգ են նրանք ներկայացնում: Անհրաժեշտ է ներկայացնել ուսումնասիրվող հանցավոր ցանցի պատմությունը և նախկինում իրականացված քննչական կամ հետախուզական գործողությունների համառոտ նկարագրությունը:

iv) Մտադրություններ. ինչ մտադրություններ ունի մյուս կողմը: Արդյո՞ք նրանք ներգրավված են քրեական հետապնդման ենթակա որևէ հայտնի կամ ենթադրյալ հանցանքի կատարման մեջ: Արդյո՞ք վերլուծության ենթարկված տեղեկություններից կարելի է ենթադրել, որ քննչական գործողություններ կատարելու դեպքում կարող են բացահայտվել քրեական հետապնդման ենթակա հանցանքներ: Արդյո՞ք կա՞ն թերություններ կազմակերպության ներսում՝ իրազեկիչներ ունենալու հնարավորության առումով: Նման հարցերը ներառում են տեղեկություններ երթուղիների, գործելակերպի, ինքնությունը հաստատող կեղծ փաստաթղթերի և չպաշտպանված սահմանային գոտիների օգտագործման վերաբերյալ:

v) Կազմակերպություն. ադմինիստրատորներին հնարավորություն է տալիս դատողություններ անել մյուս կողմի կազմակերպական կառուցվածի և կայունության, անդամակցության ու միավորումների, ինչպես նաև հայտնի կամ ենթադրյալ անօրինական գործողությունների վերաբերյալ:

vi) Միտումներ. ինչ նոր նախաձեռնություններ են իրականացվում: Ինչ նոր բիզնեսներ են գրավում նրանց ուշադրությունը: Ինչ նոր ռիսկեր կամ սպառնալիքներ են նրանք ներկայացնում և ճմ համար:

vii) Կանխատեսումներ. գնահատվում և հաշվարկվում է թիրախի կողմից հետագայում հանցավոր գործողություններ կատարելու հնարավորությունն ու փորձ է արվում կանխատեսելու թիրախի՝ հետաքննության նկատմամբ խոցելիությունը:

Ո՞ր ուղղությամբ կձեռնարկվեն նրանց հաջորդ գործողությունները: Ինչ գործողություններ են նրանք ձեռնարկելու և ինչ մեթոդաբանություն են օգտագործելու:

viii) Գծապատկերներ. գնահատումը պետք է ներառի գծապատկերներ, որոնց միջոցով ներկայացվում է թիրախային կազմակերպությունը, կամ այլ վերաբերելի նյութեր, որոնք հնարավոր է ներկայացնել գծապատկերի միջոցով: Համապատասխան դեպքերում պետք է օգտագործվեն աղյուսակներ, գծագրեր և գծապատկերներ՝ առկա տվյալների պատկերն ավելի ընդգծելու և պարզեցնելու համար:

ix) Եզրակացություններ. ամփոփվում է սուբյեկտի մասին պատկերացումը՝ գնահատման մեջ առկա տեղեկությունների վերաբերյալ կարծիքներ կազմելու, ենթադրություններ, եզրահանգումներ կամ հետևություններ կատարելու միջոցով: Բոլոր տեղեկությունների համար պետք է ներկայացվեն պատշաճ բացատրություններ: Չպետք է չափից ավելի ընդհանրացնել և (կամ) կատարել չիմնավորված եզրակացություններ: *(Ուղեցույց ոխակերի վերլուծության սրորաբաժանումների համար, Ֆրոնտերս. Կառուցվածք և գործիքներ ՌՎՄԻՄ-ի կիրառման համար, Տարբերակ 2.0)*

Զննում

Որոշակի հատկանիշի կամ կարողության առկայությունը ստուգելու գործընթաց: Միգրացիայի համատեքստում՝ նախնական (հաճախ հպանցիկ) ստուգում՝ որոշելու, թե արդյոք անձն առերևույթ (prima facie) բավարարում է հայցվող կարգավիճակն ստանալու համար անհրաժեշտ պայմանները: *(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)*

Երկրորդային վիկտիմիզացիա

Վիկտիմիզացիա (զոհականացում), որը դրսևորվում է ոչ թե որպես քրեորեն պատժելի արարքի ուղղակի հետևանք, այլ կառույցների և անհատների կողմից զոհի նկատմամբ ցուցաբերված արձագանքի միջոցով: *(Մարդկանց թրաֆիքինգի դեմ պայքարի մոդելային օրենք, ՄԱԹՀԴԳ)*
Տեն նասն՝ «վիկտիմիզացիա», «կրկնակի վիկտիմիզացիա»:



Ճորտական վիճակ

Այն վարձակալի վիճակը կամ կարգավիճակը, որն օրենքով, ավանդույթի ուժով կամ փոխադարձ համաձայնությամբ պարտավոր է ապրել և աշխատել մեկ ուրիշ անձի պատկանող հողատարժքի վրա և վարձատրությամբ կամ առանց դրա որոշակի աշխատանք կատարել այդ սեփականատիրոջ օգտին և չի փոփոխել իր նման վիճակը:

(«Մորկության վերացման մասին» ՄԱԳ-ի 1956 թվականի լրացուցիչ կոնվենցիա)

Լուրջ կազմակերպված հանցավորություն

Հարաճուն կերպով գլոբալացող անօրինական բիզնես, որը կարող է վտանգի ենթարկել և քայքայել տնտեսությունը, հասարակություններն ու կառավարությունները, և կարող է պետության ձախողման պատճառ լինել կամ նպաստել դրան՝ որոշ դեպքերում հանգեցնելով քաղաքացիական պատերազմի և բռնի գործողություններով ուղեկցվող հակամարտության, և որը ստեղծում է իրավիճակը վատթարացնող վախի, ահաբեկման և տնտեսական անկման արատավոր շրջան, ինչը սովորաբար վնաս է հասցնում ամենից խոցելի կամ կարիքավոր համայնքներին: Լի-նելով ազգային անվտանգության խնդիր՝ կազմակերպված հանցավորությունը նաև սոցիալական արդարության խնդիր է:

(Դիրկ Կալեմին, վերցված է «Ընդլայնելով մեր հասանելիության սահմանները. համապարփակ մոտեցում լուրջ կազմակերպված հանցավորության դեմ պայքարի հարցում», Միացյալ Թագավորության նախարարների կաբինետի ռազմավարական հարցերով ստորաբաժանում)

Տե՛ս նաև՝ «կազմակերպված հանցավորություն», «կազմակերպված հանցավոր խումբ»:

Անազատ վիճակ

Տե՛ս «պարտքի պատճառով կախվածություն», «ստրկություն», «ճորտական վիճակ»:

Սեռական շահագործում

Շահույթ ստանալու նպատակով սեռական հարաբերություններում մեկ այլ անձի օգտագործումը՝ նրա կամքին հակառակ: Երեխաները հատկապես խոցելի են. մասնավոր կյանքի անձեռնմխելիության վերաբերյալ պատկերացումները կարող են համայնքներին հետ պահել երեխայի սեռական շահագործման դեպքերին միջամտելուց, իսկ երեխաները թիրախ են դառնում հատկապես ինտերնետային պոռնկագրության և «սեռական տուրիզմի» ոլորտներում:

(Եվրոպական հանձնաժողովի՝ թրաֆիքինգի դեմ պայքարին վերաբերող կայքէջում տեղադրված բառարան)

Օթևան

Թրաֆիքինգի զոհերին կացարան և աջակցություն տրամադրելու համար նախատեսված մի շարք հարմարություններ, այդ թվում՝ բժշկական վերականգնողական կենտրոններ, տարանցման օթևաններ և ժամանակավոր կացարաններ, եթե այդ կապակցությամբ այլ ցուցումներ չկան:

(Թրաֆիքինգի զոհերին ուղղակի աջակցություն տրամադրելու մասին ձեռնարկ, ՄՄԿ)

Ծածկ և պաշտպանություն ունենալու վիճակը, պաշտպանություն, ապահովություն:

(Վեբստերի առցանց բառարան (Webster's online dictionary))

Ստրկություն

Այն անձի կարգավիճակը կամ դրությունը, որի նկատմամբ իրականացվում է սեփականության իրավունքից բխող ցանկացած իրավասություն կամ իրականացվում են համապատասխան բոլոր իրավասությունները («Ստրկության մասին» 1926 թվականի կոնվենցիայի 1-ին հոդված՝ փոփոխված 1953 թվականի արձանագրությամբ): Ստրկությունը բնորոշվում է մեկ այլ անձի կյանքի նկատմամբ սեփականատիրության կամ վերահսկողության տարրերով, հարկադրանքով և տեղաշարժի սահմանափակմամբ, ինչպես նաև այն փաստով, որ որևէ մեկին ընձեռված չէ գործատուից հեռանալու կամ գործատուին փոխելու ազատություն (օրինակ՝ ավանդական ստրկական աշխատանքը, կախյալ վիճակ ենթադրող աշխատանքը, ճորտատիրությունը, հարկադիր աշխատանքը և ծիսական կամ կրոնական նպատակներով ստրկությունը):

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Մաքսանենգ ճանապարհով (մարդկանց) տեղափոխող անձ

Միջնորդ, որը չթույլատրված եղանակով ապահովում է որևէ անձի փոխադրումը միջազգայնորեն ճանաչված պետական սահմանով՝ տվյալ անձի համաձայնությամբ:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)



Մաքսանենգ ճանապարհով տեղափոխում

Կողմ հանդիսացող որևէ պետություն այդ պետության քաղաքացիություն կամ այդ պետությունում մշտական բնակության (կեցության) կարգավիճակ չունեցող որևէ անձի համար անօրինականորեն մուտք գործելու հնարավորություն գնելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու նպատակով («Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» Միավորված ազգերի կազմակերպության կոնվենցիան լրացնող «Ցամաքով, ծովով և օդով միգրանտների մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու դեմ» ՄԱԿ-ի 2000 թվականի արձանագրության 3(ա) հոդված): Մաքսանենգ ճանապարհով տեղափոխման համար, ի տարբերություն թրաֆիքինգի, չի պահանջվում շահագործման, հարկադրանքի կամ մարդու իրավունքների խախտման տարրերի առկայություն: *(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)*

Մաքսանենգ ճանապարհով միգրանտների տեղափոխում

Որևէ անդամ պետություն այդ պետության քաղաքացիություն կամ այդ պետությունում մշտական բնակության (կեցության) կարգավիճակ չունեցող որևէ անձի համար անօրինականորեն մուտք գործելու հնարավորություն գնելը՝ ուղղակիորեն կամ անուղղակիորեն որևէ ֆինանսական կամ այլ նյութական օգուտ ստանալու նպատակով: («Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ» ՄԱԿ-ի կոնվենցիան լրացնող՝ «Ցամաքով, ծովով և օդով միգրանտներին մաքսանենգ ճանապարհով տեղափոխելու դեմ» ՄԱԿ-ի արձանագրությունը՝ հաստատված Խորհրդի 2006/616/ԵՀ որոշմամբ) Տեն նաև՝ «մաքսանենգ ճանապարհով մարդկանց տեղափոխում»:

Սկզբնաղբյուր հանդիսացող երկիր

Տեն «ծագման երկիր»:

Մարդկանց թրաֆիքինգ իրականացնող անձ

Միջնորդ, որը խաբեության, ֆիզիկական կամ հոգեբանական հարկադրանքի միջոցով և շահագործման նպատակով զբաղվում է մարդկանց տեղափոխմամբ՝ հետապնդելով տնտեսական կամ որևէ այլ շահ:

Թրաֆիքինգ իրականացնող անձի մտադրությունն ի սկզբանե (ab initio) մարդկանց շահագործելն է և շահագործումից օգուտ կամ շահ ստանալը:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Մարդկանց թրաֆիքինգ

Շահագործման նպատակով մարդկանց հավաքագրելը, տեղափոխելը, փոխանցելը, թաքցնելը կամ ստանալը՝ ներառյալ այդ անձանց վերահսկելու իրավասությունը փոխանակելը կամ փոխանցելը՝ ուժ գործադրելու սպառնալիքով կամ ուժ գործադրելով կամ հարկադրանքի այլ ձևերով, առևանգման, խարդախության, խաբեության, իշխանության կամ խոցելի վիճակի չարաշահման, կամ մեկ այլ անձի վերահսկող անձի համաձայնությունը ձեռք բերելու նպատակով վճարումներ կամ օգուտներ տալու կամ ստանալու միջոցով:

(2011/36/ԵՄ հրահանգ)

Տարանցման համար երկիր

Տե՛ս «տարանցման երկիր»:

Պայմանագիր

Պետությունների միջև գրավոր կնքված և միջազգային իրավունքով կարգավորվող միջազգային համաձայնագիր, անկախ այն հանգամանքից՝ այդ համաձայնություն ամփոփված է մեկ փաստաթղթի, թե երկու կամ ավելի միմյանց հետ կապված փաստաթղթերում, ինչպես նաև անկախ դրա կոնկրետ կոչումից:

(«Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» 1969 թվականի Վիեննայի կոնվենցիայի 2(1)(ա) հոդված)

Մարդու թրաֆիքինգի զոհ

Ցանկացած անձ, որը ենթարկվել է մարդկանց թրաֆիքինգի:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Վիկտիմիզացիա

Գործընթաց, որի միջոցով՝ (i) անձը դառնում է զոհ կամ զոհաբերության առարկա, (ii) անձն անարդարացիորեն պատժվում է կամ (iii) անձը դառնում է խաբեբայության կամ խարդախության զոհ:



Կանանց նկատմամբ բռնություն

Տե՛ս նաև՝ «կրկնակի վիկտիմիզացիա», «երկրորդային վիկտիմիզացիա»:

(Մշակվել է Դիրկ Կալեմինի կողմից, աղբյուրը՝ Վիքիպեդիա)

Ծանոթություն. Խորհրդի 2000/43/ԵՀ հրահանգով այս համատեքստում ներառվում է բացասական վերաբերմունքը կամ բացասական հետևանքները՝ ի արձագանք խտրականության դեմ բողոքի:

Գենդերային հիմքով ցանկացած բռնարարք, որը ֆիզիկական, սեռական կամ հոգեբանական վնաս կամ տառապանք է պատճառում կամ, ամենայն հավանականությամբ, այդպիսի վնաս կպատճառի կանանց, ներառյալ այդպիսի գործողություններ կատարելու սպառնալիքները, հարկադրանքը կամ ազատությունից կամայականորեն զրկելը, անկախ այն հանգամանքից՝ դա տեղի է ունենում հանրային, թե անձնական կյանքում:

(«Կանանց նկատմամբ բռնության վերացման մասին» 1993 թվականի հոշակագրի 1-ին հոդված)

Խոցելիություն (վիճակ)

Իրավիճակ, երբ տվյալ անձը ունի ձգտությունների ենթարկվելուց բացի ոչ մի իրական կամ ընդունելի այլընտրանք չունի:

(2011/36/ԵՄ հրահանգ)

Ռիսկերի վերլուծության միասնական ինտեգրացված մեթոդի (ՌՎՍԻՄ) համատեքստում կարող է համարվել, որ խոցելիությունը որևէ համակարգի կարողությունն է՝ արձագանքելու որևէ սպառնալիքի: Խոցելիություն ասելով ենթադրվում են սահմանին կամ Եվրամիությունում գոյություն ունեցող այն գործոնները, որոնք կարող են մեծացնել կամ նվազեցնել սպառնալիքի ուժգնությունը կամ հավանականությունը:

Այս սահմանումը կապված է Ֆրոնտեքսի կողմից ռիսկի ընկալման հետ: Հետևաբար, արտաքին սահմանների համատեքստում կարող է համարվել, որ ռիսկը պարունակում է 3 բաղադրիչ՝ (i) արտաքին սահմանների անվտանգությանը կամ ԵՄ-ի ներքին անվտանգությանը սպառնալիքը, որը գնահատվելու է ուժգնության և հավանականության

տեսանկյունից, (ii) սպառնալիքի նկատմամբ խոցելիությունը, այլ կերպ ասած՝ սպառնալիքին արձագանքելու աստիճանը և արդյունավետությունը և (iii) ազդեցությունները, այլ կերպ ասած՝ սպառնալիքի առաջացման դեպքում ազդեցությունները Եվրամիության ներքին անվտանգության ու արտաքին սահմանների անվտանգության վրա: Ռիսկի այս սահմանման հիման վրա ռիսկի վերլուծությունը սահմանվում է որպես սպառնալիքների, խոցելիության և ազդեցությունների համակարգված գնահատում, որի արդյունքներն արձանագրվում են ռիսկի գնահատման ձևով:

(Ռիսկերի վերլուծության միասնական ինտեգրացված մոդել. համակողմանի ճշգրտված տարբերակ)

Խոցելի անձ

Վերաբերում է անչափահասներին, առանց ուղեկցության անչափահասներին, հաշմանդամություն ունեցող մարդկանց, տարեց մարդկանց, հղի կանանց, անչափահաս երեխաներ ունեցող միայնակ ծնողներին և խոշտանգման, բռնաբարության կամ հոգեբանական, ֆիզիկական կամ սեքսուալ բնույթի բռնության այլ լուրջ ձևերի ենթարկված անձանց:

(Խոբիրդի 2003/9/ԵՀ հրահանգ, 17 (1) հոդված, «Անդամ պետություններում ընդունված՝ անօրինական հիմունքներով որևէ երկրի տարածքում գտնվող երրորդ երկրների քաղաքացիներին վերադարձնելու վերաբերյալ ընդհանուր չափանիշների և ընթացակարգերի մասին» Խոբիրդի 2008/115/ԵՀ հրահանգ, հոդված 3(ժ))

Հատկապես խոցելի անձանց խումբը պետք է առնվազն ներառի բոլոր երեխաներին: Մյուս գործոնները, որոնք կարող են հաշվի առնվել, ներառում են, օրինակ, սեռը, հղիությունը, առողջական վիճակը և հաշմանդամությունը: *(Վերցված է 2011/36/ԵՄ հրահանգից)*



Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերը

Ստրկության բոլոր ձևերը կամ ստրկությանը նմանվող վիճակը (ինչպիսիք են երեխաների վաճառքը և թրաֆիքինգը, պարտքի պատճառով կախվածությունն ու ճորտական վիճակը, ինչպես նաև հարկադիր կամ ստիպողական աշխատանքը, այդ թվում՝ երեխաների հարկադիր կամ ստիպողական հավաքագրումը՝ զինված ընդհարումներում օգտագործելու նպատակով), երեխային օգտագործելը, գնելը կամ առաջարկելը՝ պոռնկությանը զբաղվելու, պոռնկագրական բնույթի նյութերի կամ պոռնկագրական բնույթի կատարումների արտադրության համար, երեխաներին օգտագործելը, գնելը կամ առաջարկելը՝ հակաիրավական գործունեությանը զբաղվելու, մասնավորապես՝ թմրանյութերի արտադրության և թրաֆիքինգի համար, ինչպես սահմանված է համապատասխան միջազգային պայմանագրերում, կամ այն աշխատանքը, որն իր բնույթով կամ կատարման պայմաններով, ամենայն հավանականությամբ, կարող է վնասել երեխաների առողջությանը, անվտանգությանը կամ բարոյականությանը:

(Միգրացիայի ոլորտի տերմինների բառարան, ՄՄԿ)

Եվրոպական միության անդամ պետությունների արտաքին
սահմաններին օպերատիվ համագործակցության կառավարման
հարցերով եվրոպական գործակալություն

Պլաց Եվրոպեյսկի 6
00 – 844 Վարշավա, Լեհաստան

Հեռ.՝ +48 22 205 95 00
Ֆաքս՝ +48 22 205 95 01

frontex@frontex.europa.eu
www.frontex.europa.eu



Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների համար



Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների համար



Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների համար



Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների համար



Թրաֆիքինգի դեմ պայքարի վերաբերյալ վերապատրաստման
դասընթաց սահմանապահների համար

